



ԺԱԶԵՖ ԲԵՂԻՆ

ՏՐԻՍՏԱՆԻ ԵՎ ԻԶՈՂԴԻԱՅԻ  
ՍԻՐԱԿԵՊԸ

ԺՈՋԵՖ ԲԵՂԻԵ  
ՏՐԻՍՏԱՆԻ ԵՎ ԻԶՈԼԴԱՅԻ  
ՍԻՐԱԿԵՊԸ



Իրաներենից թարգմանել է  
ԿԱՐՈՒԿԱՆ ՆԱԼԲԱՆՅԱՆԸ

«ՈՍԿԵՏԱԿԱՆ ԳՐԱՐ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ — 1981

Joseph Bédier  
LE ROMAN DE TRISTAN ET ISEUT  
Traduit en Arménien par *Varoujan Nalbandian*  
Editions de «Sovétakan-grogh», Erévan, 1981

**Բեդիե, Ժ.**

**Բ 415** Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը: Վեպ /Թարգմ.  
Վ. Նալբանդյան— Եր.: Սովետ գրող, 1981. 200 էջ.

Տրիստանի և Իզոլդայի սիրո պատմությունը Արևմտյան Եվրոպայի ժողովուրդների մեջ տարածված միջնադարյան ասք է, որի բազմաթիվ մշակումներից մնացել էին միայն հատվածներ:

XX դ. սկզբի ֆրանսիացի գրականագետ-քանաւեր Ժ. Բեդիեն վերականգնեց ողբերգական սիրո այդ պատմությունը, որն ըստ էության եղել է ֆեոդալական կարգերի հակամարդասիրական բարքերի քննադատությունը:

Հայերեն առաջին անգամ լույս է տեսել 1958 թ.:

Այժմ ընթերցողին է ներկայացվում երկրորդ վերամշակված հրատարակությամբ:

Բ 4708000000 (24) «Տ»  
705 (01) 81

II (Ֆր)  
ԳՄԴ 84. Ֆր

© «Սովետական գրող» հրատարակչություն,  
թարգմանված է հայերեն, 1981

**ՏՐԻՍՏԱՆԻ ԵՎ ԻԶՈՂԴԱՅԻ ՍԻՐԱՎԵՊԸ**

Արևմտյան Եվրոպայի ժողովուրդների մեջ Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը եղել է միջնադարյան պոեզիայի ամենատարածված ու ամենասիրելի ստեղծագործությունը: Դրա առաջին գրական մշակումը եղել է Ֆրանսիայում, 12-րդ դարում, չափածո վեպի ձևով: Շուտով այդ առաջին վեպն առաջացրեց Ռուսաստանի ստեղծագործությունների մի ամբողջ շարք, սկզբում ֆրանսերեն, ապա եվրոպական մյուս լեզուներով՝ գերմաներեն, անգլերեն, իտալերեն, իսպաներեն, նորվեգերեն, չեխերեն, լեհերեն, բելոռուսերեն, Աոր հունարեն: Երեք դար շարունակ ամբողջ Եվրոպան հափշտակությամբ կարդում էր և՛ կյանքում, և՛ մահվան մեջ երկու սիրահարներին իրար կապող, բոցավառ ու ողբերգական տեմբլանքի պատմությունը: Ուրիշ շատ ստեղծագործություններում մենք համոզվում ենք անթիվ ակնարկներ այդ վեպի մասին: Տրիստանի և Իզոլդայի անունները հոմանիշ դարձան անկեղծ սիրահարների: Երանք հաճախ օգտագործվել են որպես հատուկ անուններ՝ հաշվի չառնելով, որ եկեղեցին այդպիսի անուններով սրբեր չունի: Վեպի առանձին տեսարաններ որպես որոմանակար, բազմիցս վերարտադրվել են սրահների պատերին, գորգերին և քանդակվել են փայտյա արկղիկների կամ գավաթների վրա:

Ձեռքած վեպի հսկայական հաջողությամբ, բնագիրը մեզ հասել է շատ վառ փրճակում: Հիշյալ մշակումների մեծ մասից պահպանվել են միայն հատվածներ, իսկ շատերից էլ բոլորովին ոչինչ չի մնացել: Այդ խոռվաճուղի դարերում, երբ դեռ գոյություն չուներ գրքի տպագրություն, բնագրերը ոչնչանում էին վիթխարի քանակությամբ, քանի որ

դրանց ճակատագիրն այն ժամանակվա անհուսալի գրապահոցներում ենթարկված էր պատերազմների դիպվածներին, կողոպուտներին, հըրդեհներին և այլն, և այլն: Ամբողջովին ոչնչացել է նաև առաջին հնագույն վեպը Տրիստանի և Իզոլդայի մասին: Մակայն սա դեպքում օգնության հասավ գիտական վերլուծությունը: Այնպես, ինչպես հենաբանը մահացած կենդանու ոսկորների մնացուկներից վերականգնում է նրա կազմվածքն ու հատկությունները, կամ այնպես, ինչպես հնագետն է խեցեղենի մի քանի կտորներով վերականգնում ամբողջապես հանգած մշակույթի բնութագիրը, այնպես էլ ոչնչացված ստեղծագործության արտացոլումներից, դրա մասին գոյություն ունեցող ակնարկներից և դրա հետագա ձևափոխումներից գրականագետ-բանասերը երբեմն կարող է վերականգնել պոեմապահն ուրվագիծը, ամենազիջալի կերպարներն ու գաղափարները և մասամբ նույնիսկ՝ ոճը:

Տրիստանի և Իզոլդայի սիրավեպի վրա աչոյախի աշխատանք կատարեց, բաներորդ դարի սկզբում, ֆրանսիացի գիտնական Ժոզեֆ Բեդիեն, որի մեջ մեծ գիտելիքները զուգակցված էին գեղարվեստական նորը զգացողությամբ: Այդ աշխատանքի արդյունքը հանդիսացավ նրա կողմից ստեղծված և ընթերցողին առաջարկվող այս վեպը, որն ունի միաժամանակ և՛ գիտահմայական, և՛ բանաստեղծական արժեք:

Տրիստանի և Իզոլդայի ասքի արմատները գալիս են հնագույն ժամանակներից: Ֆրանսիացի բանաստեղծներն ու ասքասացները այն ստացել են անմիջականորեն կելտական ժողովուրդներից (բրետոնցիներ, ուելսցիներ, իռլանդացիներ), որոնց ասքերն աչքի են ընկնում զգացմունքների ու երևակայության հարստությամբ: Բայց այս օտարերկրյա զարմանահրաշ նյութը վերահիմատավորվեց ֆրանսիացի ասքասացների կողմից և հարմարեցվեց իրենց սեփական բարբերին ու հասկացողություններին: Վեպը դարձավ ֆրանսիական ֆեոդալական-ասպետական հարաբերությունների և դրանց խորին, ողբերգական հակասությունների պալծառ արտացոլումը:

Այդ վեպի ապշեցուցիչ հաջողությունը Ֆրանսիայում և նյու երկրներում բացատրվում է հենց նրանով, որ օբյեկտիվորեն արտացոլում է ֆեոդալական կացութանի, ինչպես և մարդկային անհատականությունը ճնշող, կենսախիճող, ազատ զգացումը խեղդող, դասային ու կրոնական բարոյականության բննադատությունը. Տրիստանի և Իզոլ-

դայի սերը գրավել է, ինչպես և այժմ գրավում է ընթերցողներին ոչ միայն հուզականությամբ ու անկեղծությամբ, ոչ միայն նրանով, որ հմտորեն գծագրված է գեղանկար ու հրապուրիչ արկածների ֆոնի վրա, այլ գլխավորապես այն պատճառով, որ այդ զգացումը սուր ու անհաշտ հակասության մեջ է մտնում ֆեոդալական-ասպետական հասարակության բոլոր սկզբունքների ու հիմքերի հետ:

Տրիստանին մշտապես տանջում է իր սիրո. «ամօրինականությունը» ու նաև գիտակցումն այն անարգանքի, որ ինքը հասցնում է մարդկայինը՝ Իզոլդայի ամուսնուն: 2է՝ որ Մարկ թագավորը Տրիստանի ամենամոտիկ ազգականը, օրինական տիրակալը, դեռ ավելին՝ բարբարոս, որ հորն է փոխարինել, դաստիարակել է և մտադիր է նրան դարձնել իր ժառանգորդը: Տրիստանը տառապում է ոչ միայն այն խոչընդոտներից ու զրկանքներից, որոնց ենթարկվում է իր «ամօրինական» զգացումի համար պայքարելիս, այլև այն պատճառով, որ ինքն անդադար հիշում է Մարկի բարոյությունը, մեծահոգությունը՝ տանջվելով այն մտքից, որ ինքն ակամա անարգում է աչոյախի մարդուն: Դրանումն է այդ միջավայրի գաղափարների մեջ մեծացած, բարոյականության խորին նրբագզացության և պատասխանատվության զգացումի տեր Տրիստանի դրոշման և ներքին ողբերգականությունը: Բայց սերը նրա համար գերագույն օրենք է, բնության տիրական ձայնը, որի դեմ անգոր է պայքարել, և որի ստաջ մնացյալ ամեն ինչ պետք է նահանջի ու խոնարհվի...

Ի դեպ, այդ կոնֆլիկտն այնքան էլ բացարձակ չէ, և վեպի ամբողջ պոեմեն այնպես է կառուցված, որպեսզի ի հայտ գա այն, որ այդ կոնֆլիկտն առաջացել է ոչ թե հերոսների անհատական, հոգեկան հարաբերություններից, այլ դա ֆեոդալական բարոյականության բույս ու անխրճա պահանջների հետևանքն է միայն: Բանն այն է, որ վեպում ծեր արքա Մարկը, որը բացառիկ ազնվության ու մեծահոգության տիպար է, ամենևին էլ խանդոտ ամուսին չէ, ոչ էլ ամբարտալիան տիրակալ: Նա Իզոլդայի հետ ամուսնացել է ոչ թե սեփական, ներքին մղումից ողբով, այլ լույ զիջելով պահանջներին այն բարոնների, որոնք չէին ցանկանում, որ իրենց առած, պալծառ հերոս Տրիստանը դառնա թագաժառանգ: Վեպում ոչ մի տեղ ակնարկ անգամ չկա Իզոլդայի նկատմամբ Մարկի ինչ-որ «կրքի» մասին: Նա Իզոլդայի հետ վերաբերվում

է ավելի շուտ հայրաքար, քան որպէս ամուսին: Այդ իսկ պատճառով ուղղակի խանդ չի գգում Տրիստանի հանդէպ, որն ամուսնությունից հետո նույնպէս մնացել է կնոջից էլ թանկ: Նա ամենևին հակամետ չէ դեպի կասկածամտությունն ու վրիժառույթունը: Եթէ իրեն լիովին ազատ թողնէին, գուցէ կամովին Իզոլդային զիջէր Տրիստանին: Բայց հենց ինքը՝ Մարկը, ֆեոդալական-ապետական նախապաշարմունքներն ձգտելով ունկնդիր դառնում է դրա գոհը: Նրա կողքին մշտապէս ներկա, կանգնած են չար ու ընչաքաղց բարոյները, լրտեսներն ու մատնիչները, որոնք շարունակ Տրիստանի դէմ ուղղված հանցանքանքներ են հայտնում, մշտապէս պնդում, որ այդ պարագայում անարգվում է արքայական և ամուսնական պատիվը, և որ չպետք է անտարբեր մնա, չպետք է համարձակվի մնալ անտարբեր: Փաստորեն այդ «պատիվը» բավականին քիչ է անհանգստացնում Մարկին, բաց դրա փոխարեն նրա վրա ուժեղ ազդեցություն են թողնում բարոյների սպառնալիքները՝ մեկուսանալու և ապստամբելու վերաբերյալ, եթէ չհետևի իրենց խորհուրդներին:

Այսպէս թե այնպէս, թուական արքան ենթարկվում է բարոյներին և շարունակ զիջելով՝ հանգում է ճիվաղային, բարբարոսական դաժանության. Մարկը պատրաստ է Իզոլդային այրել խարույկի վրա, նրան տալ բորտներին: Բայց այդ ամենը լով բարոյների ճնշման տակ է կատարվում, այլ ոչ թե սեփական նախաձեռնությամբ: Եվ բավական է միայն առիթը ներկայանա, նա պատրաստ է ներել մեղավորներին՝ աչք փակելով ամեն ինչի վրա: Չի հետապնդում սիրահարներին, այլ միայն պատահաբար հայտնաբերում է անտառում, և երբ տեսնում է նրանց միջև դրված թուրը, տեղնուտեղը ներում է, քանի որ ուզում է հավատալ նրանց անմեղությանը:

Այդպիսին է բարդ հոգեբանական այն դրաման, որ ծավալվում է վիպակում, մորեղբոր և բրոջորդու միջև, դրամա, որն ամբողջովին պայմանավորված է դարաշրջանի հասարակական բարոյականության ճնշումով: Այդ դրամայի մեջ բնորոշ է Իզոլդայի դիրքորոշումը, որը ոչ լիովին է հանրակցում Տրիստանի դիրքորոշման հետ: Վեպի հեղինակը հնտորեն ընդգծում է դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունը և դրանով իսկ բնորոշում է տղամարդու և կնոջ դրությունների տարբերությունը ֆեոդալական հասարակարգում: Չնայած արտաքուստ

փայլուն դիրքին, որպիսին կնոջը երբեմն հատկացվում է ապետական պոեզիայում, նա գործնականում եղել է իրավագուրկ մի էակ: Կյանքի ուրախություններից նրան հասնում էր միայն այն, ինչ հաջողվում էր գաղտագողի հափշտակել, թեկուզ «ամենամտօրինական» ձևով: Բնական է, որ նրան նվազ էին կաշկանդում բարոյական պարտավորությունները հասարակության նկատմամբ, որի օրենքները հաստատվում էին բացառապէս տղամարդկանց կողմից: Չէ՞ որ ամուսնական դավաճանության համար տղամարդը ոչ մի պատժի չի ենթարկվում, միևնույն անհավատարիմ կնոջն ապաստմ էին մտրակները, վանքն ու արտքը, երբեմն էլ նույնիսկ՝ մահը:

Տրիստանը փայլուն ասպետ է, փայփայված՝ կյանքի և հասարակության կողմից, ու դրա համար էլ հարգանք է տածում այդ հասարակության հիմքերի նկատմամբ: Իզոլդան անբարբառ ստրուկ է, որին նվաճելով իր քաջագործությամբ՝ հերոսն իրավունք ունի փոխանցելու ուրիշին՝ մորեղբորը, ինչպէս զնված մի առարկա, և այդ առիթով ոչ ոք չի առարկում: Այդտեղից էլ՝ մի կողմից նրա հոգում բարոյական կոնֆլիկտի, կասկածների, խղճի խաչոյի բացակայությունը, իսկ մյուս կողմից իր զգացումի, երկրային երջանկության համար ամեն տեսակի միջոցներով պայքարելու պատրաստականությունը, նույնիսկ երբեմն տուրք տալով ապերախությանն ու դաժանությանը, ինչպէս, օրինակ՝ այն դեպքում, երբ պատրաստ էր անձնվեր, հավատարիմ Բրանժիենին մահվան գիրկը նետել, միայն թե ավելի հուսալի կարողանար պահպանել սիրո գաղտնիքը: Իզոլդայի զգացմունքի այդ նրբերանգի պատկերմամբ արտահայտված է միջնադարյան պոետի փայլուն արտե-սությունն ու խոր ռեալիզմը:

Իհարկե, այն ժամանակվա հասարակության զարգացման աստիճանը և փիլիսոփայական մտքի մակարդակը թույլ չտվին, որ պոետը լիովին ըմբռնի ֆեոդալական բարոյականության անարդարացիությունը և բացեփակ դուրս գա ֆեոդալական հասարակարգի դէմ: Նա կարծես ընդունում է պաշտոնապէս իշխող բարոյականության օրինականությունը: Այդ մասին վկայում են Տրիստանին տրված խրատները, որ հեղինակը արտահայտում է «տուրք մարդու» ճգնափոր Օգրինի միջոցով: Առավել համոզիչ է այն փաստը, որ վեպում հենց ինքը՝ Տրիստանը, ընդունում է իր վարքի «անարդարացիությունը»: Հեղինակի համար Տրիս-

տանի և Իզոլյացի սերը մեծ աղետ է, ծանր դժբախտություն, որի մեղավորը սիրո ընպելիքն է: Բայց կասկած չկա, որ նա ներքուստ համակրանք է տածում դեպի այդ սերը: Եթե այդ սերը լիներ միայն Ռիվանդություն, բանականության մթազնում, ապա կարող էր մարմնավորվել կոպիտ, Ռիվանդագին ձևով: Բայց պոետն այն նկարագրում է որպես սքանչելի, հուզիչ, զգայացունց մի հույզ: Մի՞թե Տրիստանի ազնիվ բարեկամներն ու ծառաները՝ Գորվեմալը, Կահերդինը, Պերնիսը պոպուս սրտաբաց ու անձնվեր պիտի օգնեին սիրային գործերում, եթե նրանք այդ զգացումը չհամարեին մաքուր ու վեհասքանչ: Հակասակ դեպքում ավելի շուտ պիտի տարհամոզեին, պիտի փորձեին հեռու վանել նրան անառողջ և մահացու կրքից: Նույնիսկ Կահերդինը՝ Տրիստանի կնոջ եղբայրը, որը խորապես վիրավորված էր Իզոլյա թագուհու նկատմամբ՝ Տրիստանի տաճած սիրուց, նույնիսկ նա հանձն է առնում օգնելու: Մյուս կողմից՝ եթե սիրահարներին անմեղ համարենք, քանի որ ընկել են կախարդական ընպելիքի ազդեցության տակ, ապա մի՞թե արդարացի և բարի գործ չէր լինի Մարկին նախազուշացնել այդ դժբախտության ու նրա գլխին թափվող խաչատառկության մասին: Միևնույն ժամանակ այդ դերը հանձնում է զազրելի գանձին և այն մի քանի բարոններին, որոնց ներկայացնում է որպես դավադիրներ և ստոր մատնիչներ:

Այս ամենը խոսում է Ռեդիակի ներքին ու խոր համակրանքի մասին՝ դեպի վեպի հերոսներն ու նրանց տիրապետող զգացումները: Եվ հենց այդ է, որ վեպն օրջեկտիվորեն դարձնում է ֆեոդալական կացութաձևի բուն էություն, ինչպես և նրա նեխող, հակամարտաբարկան բարոյականության բնահոսություն: Իսկ դրա հետ մեկտեղ վեպն օրջեկտիվորեն ուղղված է ֆեոդալական կացութաձևի հավատարիմ դաժնակից ու նեղուկ կաթոլիկական եկեղեցու դեմ, նրա անհոգի ասկետիզմի ու ֆորմալիզմի դեմ, մարդկային անհատականությունը ճնշող բռնակալության դեմ: Վեպի վերոհիշյալ հատկանիշը խորապես զգացել և սքանչելի ձևով արտահայտել է գերմանացի մեծ բանաստեղծ Հայնրիխ Հայնեն: «Այդ դարաշրջանում, — գրում է նա, — մենք հանդիպում ենք, վերջապես, և պոետական ստեղծագործությունների, որտեղ չկա քրիստոնեական սպիրիտուալիզմի անստարկելի ընդունում, որտեղ նույնիսկ նրան հակադրվում են, որտեղ բանաստեղծը, դեմ զգեով վերա-

ցական, քրիստոնեական առաքինության կապանքները, արբեցումով սուզվում է այդտեղ փառաբանված զգացականության քաղցրավուն աշխարհը: Եվ ամենևին վատերի թվին չի պատկանում այն բանաստեղծը, որը մեզ թողել է այդ ուղղության գլխավոր ստեղծագործությունը՝ «Տրիստան և Իզոլյա» պոեմը»<sup>1</sup>:

Վեպի հենց այդ մարդասիրական բովանդակությունն է, որն ամենից ավելի ապահովեց նրա հմայքը միջնադարյան ընթերցողի համար, որը նրա կերպարների մեջ մխիթարություն ու պաշարի խթան էր գտնում իրեն ճնշող իրականության դեմ: Հենց այդ գաղափարական բովանդակությամբ էլ բացատրվում է և վեպի գեղարվեստական ներգործման ուժը մեր դարաշրջանի մարդկանց վրա:

**Ա. Ա. Մմինով**

<sup>1</sup> Г. Гейне. Полное собрание сочинений, изд. «Academia», том VII, 1936, стр. 163.

## Գ Լ Ո Ւ Խ I

### ՏՐԻԱՏԱՆԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԱՌԻՆԵՐԻ ՔԱԶԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սպեյի լավ չէ՞ր լինի թեզ կոչել՝  
Գեղեցիկ ու խնդուն պատանջակ:  
(Գոթֆրիդ դը Ստրագրուրգ!)\*

Սենիորներ, արդյոք դուք ուզո՞ւմ եք լսել մի գեղեցիկ հեքիաթ սիրո և մահվան մասին: Տրիստանի և Իզոլդա թագուհու մասին է այս հեքիաթը: Լսեցեք, թե ինչպես մեծ բերկրանքով ու խոր վշտով նրանք իրար սիրեցին, հետո հենց այդ սիրուց մահացան նույն օրը, Տրիստանը Իզոլդայի համար, Իզոլդան՝ Տրիստանի:

Հին-հին ժամանակներում Մարկ թագավորն իշխում էր Կոռնուայում<sup>2</sup>: Ռիվալենը՝ Լոռնուայի արքան, իմանալով, որ իր թշնամիները պատերազմում են Մարկի դեմ, ծովն անցավ՝ նրան օգնության հասնելու: Ռիվալենը ծառայեց Մար-

<sup>1</sup> Գերմանացի բանաստեղծ (12-րդ դարի վերջ, 13-րդ դարի սկիզբ): Նրա միակ պոեմը՝ «Տրիստան», մնացել է անավարտ:

<sup>2</sup> Կոռնուայ (Կոռնուել) — Ներկայումս Մեծ Բրիտանիայի կոմսություն, գտնվում է Անգլիայի հարավ-արևմտյան ծայրամասում, Ատլանտյան օվկիանոսի և Լա Մանշի միջև:

\* Այս և հետագա ծանոթագրությունները վերցված են ռուսերեն թարգմանության 1955 թվականի հրատարակությունից, ինչպես և «Գրոգրես» հրատարակության 1967 թվականի ֆրանսերեն հրատարակությունից:

կին և՛ թրով, և՛ խորհուրդներով, ինչպես այդ կաներ վասալը, և ծառայեց այնպես հավատարմորեն, որ Մարկը ի նշան երախտագիտության շնորհեց նրան իր քրոջ ձեռքը՝ գեղեցկուհի Բլանշֆլյորին, որին քնքուշ սիրով սիրում էր Ռիվալեն թագավորը:

Տինասժել դյակի եկեղեցում նա կնության վերցրեց Բլանշֆլյորին: Բայց հազիվ էր ամուսնացել՝ լուր հասավ, որ իր վաղեմի թշնամին՝ դուքս Մորգանը, հարձակվելով Լոռնուայի վրա, ավերում է ավանները, դաշտերն ու քաղաքները: Ռիվալենը հապշտապ սարքավորեց նավերը և հեղի Բլանշֆլյորին տարավ իր հեռավոր կալվածքը: Սփ դուրս եկավ Կանուել դյակի առաջ և թագուհուն հանձնեց այտուտայետ Ռոհալտի խնամակալությանը, Ռոհալտին, որին ուղղամտության համար բոլորն անվանում էին Ռոհալտ Խոստումնակատար: Հետո՝ համախաբելով իր բարոններին, Ռիվալենը մեկնեց պատերազմ:

Երկար սպասեց նրան Բլանշֆլյորը: Սվա՛ղ, ամուսնուն վիճակված չէր վերադառնալ: Մի օր Բլանշֆլյորն իմացավ, որ դուքս Մորգանը նրան սպանել է դավադրաբար: Չարտավեց ամենևին, ո՛չ աղաղակ, ո՛չ լացուկոծ, բայց մարմինը հյուծվեց, տկարացավ: Հոգին բռուն տեճելում էր լքել մարմինն ու հեռանալ: Ռոհալտը ճգնում էր մխիթարել նրան:

— Թագուհի, — ասում էր, — անխոհեմություն է սուգի վրա սուգ ավելացնելը: Բոլոր ծնվածները մի՞թե պիտի չմահանան: Թող աստված իր մոտ ընդունի հանգուցյալներին և պահպանի ողջերին...

Բայց Բլանշֆլյորը լսել անգամ չէր ուզում: Երեք օր սպասեց՝ զսպելով սիրելի տիրոջ հանդեպ տաժամ տեճ-

չանքը: Չորրորդ օրը լույս աշխարհի բերեց մի տղա և գրկելով նրան՝ ասաց.

— Որչափ իմ, վաղուց ի վեր ցանկանում էի քեզ տեսնել և ահա տեսնում եմ ամենագեղեցիկ արարածը, որպիսին երբևէ ծնել է կինը: Տխուր է իմ երկունքը, տխուր է քեզ գորգորող իմ առաջին ժպիտը և միայն քեզ համար է, որ տխրում եմ ես մեռնելիս: Ու քանի որ դու աշխարհի եկար տխրությունից, թող քո անունը լինի Տրիստան<sup>1</sup>:

Այդ ասելուց հետո Բլանշֆլյորը համբուրեց նրան ու համբուրելուն պես մահացավ:

Ռոհալտ Խոստումնակատարը որքին վերցրեց իր խնամակալության տակ: Գուքս Մորգանի զինակիցներն արդեն պաշարում էին Կանուել ամրոցը: Ռոհալտն ինչպե՞ս շարունակեք պատերազմը: Շշմարիտ են ասում՝ «Գլխից ձեռքաշեղք քաջություն չէ»: Նա հարկ համարեց անձնատուր լինել դուքս Մորգանին: Բայց վախենալով, որ Մորգանը կընպանի Ռիվալենի որդուն, ախոռապետը նրան ներկայացրեց իբրև հարազատ զավակի և մեծացրեց իր որդիների շերջապատում:

Յոթ տարի անց, երբ հասավ Տրիստանին կանանց խընամքից ետ վերցնելու ժամանակը, Ռոհալտը նրա դաստիարակությունը վստահեց մի իմաստուն մսուցչի, քաջ զինակիր Գորվենալին: Գորվենալը մի քանի տարում նրան սովորեցրեց բարոններին վայել արվեստները: Սովորեցրեց գործածել նիզակ, թուր, վահան և աղեղ, սովորեցրեց նետել քարե սկավառակներ և մի ուսուցումով թռչել ամենալայն

<sup>1</sup> Տրիստան անունը համահնչյուն է ֆրանսերեն *triste*, տխուր բառին:

փուտերի վրայով: Նրան սովորեցրեց ատել ամենայն կեղծիք ու դավաճանություն, օգնել թույլերին և կատարել սոված խոստումը: Սովորեցրեց երգասացության տարբեր ձևերը, սովորեցրեց նվագել տավիղի վրա, ինչպես նաև՝ որսորդական արվեստը: Եվ երբ երեխան արշավում էր պատանի զինակիրների հետ, թվում էր, թե ինքը, նծույզն ու զենքերը միաձուլլ մի մարմին են և երբեք բաժանված չեն եղել իրարից: Տեսնելով, որ նա այդքան ազնիվ է, հպարտ, թիկնեղ, նրբիրան, ուժեղ, հավատարիմ և քաջ՝ բոլորը գովաբանում էին Ռոհալտին, որ այդպիսի որդի ունի: Բայց հիշելով Ռիվալենին ու Բլանշֆլյորին, որոնց երիտասարդությունն ու նրբագեղությունն էր վերակենդանացել, Ռոհալտը Տրիստանին փայփայում էր իբրև հարազատ որդու և գաղտնաբար ակնածում էր նրանից, ինչպես իր իշխանից:

Բայց պատահեց այնպես, որ Ռոհալտից խլեցին նրա ողջ ուրախությունը այն օրը, երբ նորվեգացի առևտրականներ, Տրիստանին հրապուրելով, նավ նստեցրին և առևանգեցին որպես փստավոր ավար: Մինչ նրանք սլանում էին դեպի անծանոթ երկրներ, Տրիստանը զազագում էր, ինչպես թակարդն ընկած գայլի ձագը: Բայց ստուգված ճշմարտություն է,— և բոլոր նավաստիներն այդ գիտեն,— ծովը դրժկամությամբ է կրում նենգավոր նավերը և չի օժանդակում ո՛չ հափշտակությանը, ո՛չ դավաճանությանը: Ամենի ծովն ակեղծվեց, նավը պատեց խավարով և հալածեց ու քչեց ուր պատահեր, ութ օր, ութ գիշեր: Վերջապես մտախտոլի միջից նավաստիները տեսան ժայռերով ու ապարածներով ծածկված մի եզերք, որի վրա ծովը պիտի շարտեր ու խորտակեր իրենց նավը: Նրանք զղջացին՝ կուսհելով, որ ծովի



ցաստնը բռնկվել է այդ պատանու պախարակէի առևանգումից: Ուխտ արեցին ազատ արձակել Տրիստանին և մի մականի պատրաստեցին՝ նրան ափ դուրս բերելու: Քամիներն ու ալիքները իսկույն հանդարտվեցին, երկիկքը փայլփրկեց, և մինչ նորվեգացիների նավն անհետանում էր հեռվում, հանդարտված ու ծիծղուն ջրերը ավազոտ ծովափ հասցրին Տրիստանի մականիկը:

Մեծ ջանքերով նա մազլցեց ժայռնիվեր ու տեսավ, որ անմարդաբնակ ու բլրաշատ տափաստանից այն կողմ ծավալվում է անձայրածիր մի անտառ: Իր տրտունջքն էր մըրմընջում՝ կարտուելով Գորվենալիս, հորը՝ Ռոհալտին և Լոոնուս երկիրը, երբ որսորդական փողի և հարապիրոցի հեռավոր կանչն ու աղմուկը սիրտը լցրին հրճվանքով: Անտառի եզրին հայտնվեց մի գեղեցիկ եղջերու: Ծների ոհմակն ու որսորդները հետապնդում էին նրան գոչյունների ու փողերի մեծ ժխորով: Բայց քանի որ շները ողկույզների պես արդեն կախվել էին վզից, ուստի կենդանին կանգ առավ Տրիստանից մի քանի քայլ հեռու, ընկավ ծնկաչոք և եղավ անձնատուր: Մի որսորդ նրան ցիգակահարեց: Մինչ մյուսները, շոշան կազմած, փողհարում էին հաղթանակի մասին, Տրիստանը զարմացած տեսավ, որ ավագ որսորդը ձեռքի լայն շարժումով պատրաստվում է կտրել եղջերուի կոկորդը: Նա բացականչեց.

— Ի՞նչ եք անում, սեւհոր, մի՞թե վայել է բարեհամբույր այս կենդանուն կտրատել մորթված խոզի նման: Արդոյք ա՞յդ է սովորույթն այս երկրի:

— Ազնիվ եղբայր,— պատասխանեց որսորդը,— ես ի՞նչ եմ անում, որ քեզ զարմացնում է: Այո՛, նախ պիտի գլխատեմ այս եղջերուն, ապա մարմինը պիտի քառատեմ, և

չորս մասերը, թամբերից կախած, պիտի տանենք հասցնենք մեր տիրոջը՝ Մարկ թագավորին: Մենք այդպես ենք վարվում: Այդպես են միշտ վարվել հնագույն ժամանակներից սկսած Լոոնուսի որսորդները: Եթե, սակայն, դու գիտես առավել գովելի, ուրիշ սովորույթ, ցույց տուր, տեսնենք: Վերցրու այս դանակը, ազնիվ եղբայր, մենք բավականությամբ կսովորենք քեզանից:

Տրիստանը ծնրադրեց և մաշկահան արեց եղջերուն՝ նախքան նրան կտրատելը: Հետո կենդանուն մորթեց, և ինչպես պատշաճ է՝ ողնաշարը չմասնատեց: Ապա անջատեց փորոտիքը, դունչը, լեզուն, ազդրերը, սրտի երակը:

Ե՛վ որսորդները, և՛ շնապանները, Տրիստանի կողմը թեքվելով, սքանչացած նայում էին:

— Բարեկամ,— ասաց ավագ որսորդը,— գեղեցիկ են այս բարթերը: Այդ ո՞ր երկրում ես դու սովորել այս ամենը: Ասա՛ ո՞րն է քո երկիրը և ի՞նչ է քո անունը:

— Ազնիվ իշխան, իմ անունը Տրիստան է, և իմ Լոոնուս երկրում է, որ ես ձեռք եմ բերել այս սովորույթը:

— Տրիստան,— ասաց որսորդը,— թող աստված արժանին հատուցի այն հորը, որ քեզ դաստիարակել է այսպես ազնվորեն: Անկասկած նա բարոն է հարուստ ու հզոր:

Բայց Տրիստանը, որ գիտեր և՛ գեղեցիկ խոսել, և՛ տեղին լռել, խորամանկորեն պատասխանեց.

— Ո՛չ, սեւհոր, իմ հայրը վաճառական է: Ես գաղտնաբար հեռացել եմ տնից, հեռավոր ճամփորդության գնացող մի նալի վրա, քանզի ուզում էի իմանալ, թե ինչպես են ապրում մարդիկ օտար երկրներում: Բայց եթե ինձ ընդունեք որսորդների շարքերը, ապա հաճությամբ ձեզ կհետևեմ

ու կտփորեցնեմ, ազնիվ սեփոր, ուրիշ որսորդական զվարճություններ:

— Ազնիվ Տրիստան, զարմանում եմ, որ գոյություն ունի այնպիսի երկիր, որտեղ վաճառականների զավակներն իմանում են այն, ինչ այլուր չգիտեն ասպետների որդիները: Բայց եկ մեզ հետ, քանի որ դու այդ ցանկանում ես, և քեզ՝ բարի գալուստ: Մենք քեզ կտաջնորդենք մեր տիրոջ՝ Մարկ թագավորի մոտ:

Տրիստանն ավարտեց եղջերուն կտրատելու արարողությունը: Ծներին տվեց սիրտը, կտորտանքները և փորտոփքը, ապա որսորդներին սովորեցրեց, ինչպես առանձնացնել շների բաժինը և ինչպես փողհարել նրանց կանչելու համար: Հետո ցգերի վրա ամրացրեց վայելչորեն կտրատված մասերը և հանձնեց զանազան որսորդների, մեկին՝ գլուխը, մյուսին՝ զավակը և մեծ ֆիլեները, ոմանց՝ թիակները, մյուսներին՝ ազդրերը: Սովորեցրեց, թե ինչպես պետք է շարվեն երկու-երկու՝ վայելչորեն արշավելու համար, ցգերի վրա ամրացված որսաբաժինների նշանակության համաձայն:

Այնժամ ճանապարհ ընկան ու գրուցելով գնացին այնքան ժամանակ, մինչև որ, վերջապես, նրանց առաջ հայտնվեց մի շքեղ դղյակ: Այն շրջապատում էին մարգագետիններ, հոսուն ջրեր, ձկնորսարաններ և մշակելի հողեր: Բազմաթիվ նավեր մտնում էին նավահանգիստ: Ծովեզրին էր կառուցված դղյակը՝ ամրակոտ ու գեղեցիկ, ընդունակ պաշտպանվելու ամեն տեսակ հարձակումից ու ռազմաարքերի հարվածներից: Եվ հսկաների կառուցած, հինավուրց մայր աշտարակը շինված էր խոշոր, սրբառաջ քարային զանգ-

վածներից, որոնք կանաչ ու երկնագույն քառակուսիներ էին՝ դասավորված ինչպես շախմատի տախտակ:

Տրիստանը հարցրեց դղյակի անունը:

— Ազնիվ սպասյակ, Տրիստան է դղյակի անունը:

— Տրիստան, — բացականչեց Տրիստանը, — քեզ՝ աստծո օրհնությունը, և թող օրհնյալ լինեն քո հյուրընկալ տեղերը:

Սեփորաներ, այստեղ էր, որ աստեղոք, մեծամեծ խրախճանքներով նրա հայր Ռիվալենն ամուսնացավ Բլանշֆլյորի հետ: Բայց Տրիստանն այդ չգիտեր:

Երբ նրանք հասան ու կանգ առան ամրոցի ստորոտին, որսորդների փողհարումները դռների մոտ համախաբեցին բարոններին, և անձնապես եկավ ինքը՝ Մարկ թագավորը:

Սկզբում ավագ որսորդը պատմեց եղելությունը, հետո Մարկը հիացմունքով դիտեց ձիարշավի դոփոփումն շարասյունը, հմտորեն մասնատված եղջերուն և մեծ բավակա-նությամբ ըմբռնեց որսորդական այդ սովորույթի խորին իմաստը: Բայց արքային հատկապես գրավել էր գեղեցիկ օտարականը՝ և նայվածքը չէր կարողանում հեռացնել նրանից: Ինչի՞ց էր՝ առաջացավ այդ նորածին համակրանքը: Թագավորը հարցնում էր անում արտին ու չէր կարողանում հասկանալ: Սեփորաներ, այդ նրա արյունն էր, որ հուզախոով մրմնջում էր, և այն սերը, որ մի ժամանակ տածել էր իր քրոջ՝ Բլանշֆլյորի նկատմամբ:

Երեկոյան, երբ սեղանները հավաքեցին, արվեստի մեջ քաջահմուտ մի գալիացի ասքասաց հրապարակ ելավ և համախմբված բարոնների առջև երգեց տավրիղի նվագակցությամբ: Տրիստանը նստած էր թագավորի ոտքերի մոտ,

և մինչ երաժիշտը նոր մեղեդու նախերգանքն էր նվագում, Տրիստանն այսպես դիմեց նրան.

— Վարպետ, բոլոր երգերից այս մեկն է ամենագեղեցիկը: Անցյալում հին բրետոնցիներն այն հորինել են Գրանդենտի<sup>1</sup> սերը գովերգելու համար: Մեղեդին անուշ է, և անուշ են խոսքերը: Վարպետ, դու քո ձայնին տիրապետում ես, արտա՛նց երգիր:

Գալիացին երգեց, հետո պատասխանեց.

— Ո՛վ պատանկակ, էլ ի՞նչ գիտես երաժշտական արվեստի մասին: Եթե Լոռնուա երկրի վաճառականներն իրենց որդիներին ուսուցանում են նվագել տավիղ, քնար և ջութակ, վեր կաց, վերցրու այս տավիղը և ցույց տուր քո վարպետությունը:

Տրիստանը վերցրեց տավիղը և երգեց այնպես մեղմորեն, որ բարոնները հուզվեցին ունկնդրելիս: Եվ Մարկին հմայում էր այս տավիղահարը, որը եկել էր Լոռնուա երկրից, որ մի ժամանակ Ռիվալենը տարավ Բլանշֆլյորին:

Երբ երգն ավարտվեց, թագավորը երկար լուռ մնաց:

— Որդյակ իմ,— ասաց վերջապես,— օրհնյալ լինի այն դաստիարակը, որ քեզ ուսուցանեց, և աստված քեզ օրհնի: Աստված սիրում է լավ երգիչներին: Նրանց ձայնը և տավիղի նվագը թափանցում են մարդկանց սրտերը, զարթեցնում թանկագին հուշեր և մոռացնել են տալիս ամենայն վիշտ ու չարագործություն: Դու եկար այս տունը հաճումս մեր ուրախության: Երկար մնա ինձ մոտ, ով բարեկամ:

— Հոժար եմ արտանց: Ես ձեզ կծառայեմ, տեր իմ,—

<sup>1</sup> Բրետոնական հնագույն երգի հերոս:

պատասխանեց Տրիստանը,— որպես երգասաց, որսորդ ու հավատակ:

Այդպես էլ արեց, և երեք տարվա ընթացքում փոխադարձ համակրանք անեց նրանց սրտերում: Տերեկը Տրիստանն ուղեկցում էր թագավորին առյաճիկ նիստերին կամ որսի, և քանի որ գիշերը ննչում էր արքայական սենյակում, արտոնչալների և հավատարիմների հետ, այս թագավորի տխրության պահերին երգում էր՝ մեղմացնելու համար նրա թախիծը: Բարոնները համակրում էին Տրիստանին, և բոլորից առավել, ինչպես այս պատմությունից իմանալու եք դուք, նրան համակրում էր արքունի արդարադատության նախարար Դինաս դը Լիդանը: Բայց բարոններից ու Դինաս դը Լիդանից առավել՝ ջերմորեն սիրում էր նրան թագավորը: Չնայած այդ գորովանքին, Տրիստանը չէր մխիթարվում, քանզի կորցրել էր հորը՝ Ռոհալտին, և՛ ուսուցիչ Գորվենալին, և՛ Լոռնուա երկիրը:

Սենիորներ՛ր, երբ ասքասացն ուզում է լինել հաճելի, հարկ է, որ խուսափի երկարաքանելուց: Այս հեքիաթի նյութն այնքան գեղեցիկ է և բազմազան, որ ի՞նչ կարիք կա պատումը ձգձգելու: Ուստի ես համատոտակի կատեմ, թե ինչպես ծովերով ու երկրեերկիր երկար թափառելուց հետո Ռոհալտ Խոստումնակատարը ափ դուրս ելավ Կոռնուայի նավահանգիստ, գտավ Տրիստանին և թագավորին ցույց տալով այն նոնաքարը, որ արտենք, որպես հարսանեկան թանկագին նվեր ինքը՝ Մարկը, ընծայել էր Բլանշֆլյորին, այսպես ասաց.

— Մարկ թագավոր, ահա նա՛ Տրիստան դը Լոռնուան, ձեր ազգականը, ձեր քրոջ՝ Բլանշֆլյորի, և Ռիվալեն արքայի որդին: Դուքս Մորգանը հանիրավի տիրում է նրա երկի-

բը: Արդ՝ ժամանակն է Լոռուան վերադարձնել իսկական ժառանգին:

Եվ կասեմ համառոտակի, թե ինչպես մոբեդրորից ապեաի կոչում՝ ստանալոց հետո Տրիստանը Կոռնուայի նավերով անցավ ծովը, ներկայացավ հոր նախկին վասալներին, մարտահրավերի կանչեց Ռիվալենին սպանողին, սպանեց նրան ու տիրացավ իր հողերին:

Հետո խորհեց, որ իրենից հեռու, Մարկ թագավորը չի կարող երջանիկ սարել, և ազնիվ արտի իմաստուն թելադրանքին ունկնդիր՝ համախմբեց կոմսերին ու բարոններին և այսպես խոսեց.

— Լոռուայի սեֆիորներ, ես այս երկիրը վերանվաճեցի. և՛ աստված էր ինձ օգնական, և՛ դուք էիք ինձ նեցուկ, որ կարողացա լուծել Ռիվալեն արքայի վրեժը: Դրանով, կատարեցի հորս նկատմամբ իմ ունեցած պարտքը: Սակայն երկու հոգի՝ Ռոհալտը և Կոռնուայի թագավոր Մարկը զորավիզ եղան որքին ու թափառական պատանուն, և նրանց նույնպես պարտավոր եմ հայր անվանել. հիրավի, պարտավոր եմ պարտքս կատարել և նրանց նկատմամբ: Այսպես, ազնվատոհմիկ մարդն ունի երկու բան՝ հողը և անձը: Ուրեմն, Ռոհալտին, որն ահա այստեղ է, թողնում եմ իմ հողը: Հա՛յր, տիրեցե՛ք երկրին, և ձեր որդին նույնպես թող տիրի ձեզանից հետո: Անձս նվիրաբերում եմ Մարկ թագավորին: Հեռանալու եմ այս երկրից, թեև սիրելի է ինձ, և գնալու եմ ծառայելու տիրոջս՝ Մարկին, Կոռնուայում: Այդ է մտադրու-

<sup>1</sup> Ասպետության կարգն էին դասվում սովորաբար քսանմեկ տարեկան հասակում: Կոչման արարողությունն ուղեկցվում էր կրոնական ու զինվորական ծիսակատարությամբ:

թյունս: Բայց դուք իմ հավատարիմ հպատակներն էք, Լոռուայի իշխաններ, և պարտավոր եք նեցուկ լինել նաև խորհուրդներով. եթե, ուրեմն, ձեզանից մեկնումեկը ցանկանում է ցույց տալ ինձ կյանքի ուրիշ ուղի, սպա թող վեր կենա ու խոսի:

Բայց բոլոր բարոնները, արցունքն աչքներին, գովաբանեցին նրան, և Տրիստանը, հետը վերցնելով միայն Գորվենալին, նավարկեց դեպի Մարկ թագավորի երկիրը:

## Գ Լ Ո Ւ Խ II

### ԻՌԱՆԳԱՑԻ ՄՈՌՈՒՏԸ

Տրիստանն առաց. «Այո՛,  
Ես նրան պաշտպանելու եմ որպես սպեան»:  
(«Սիր Տրիստրեն»)<sup>1</sup>

Երբ Տրիստանը վերադարձավ այնտեղ, Մարկն ու բոլոր բարոնները գտնվում էին խոր վշտի մեջ, քանզի Իռլանդիայի թագավորը զինել էր նավատորմը՝ Կոռնուայը թալանելու համար, եթե Մարկը, ինչպես արել էր տասնհինգ տարի շարունակ, կրկին հրաժարվեր մուծել մի հարկ, որպիսին անցյալում տալիս էին նրա նախնիները: Իմացեք, ուրեմն, որ հնամյա պայմանագրերի համաձայն, իռլանդացիներն իրավունք ունեին Կոռնուայի իշխանությունից պահանջելու առաջին տարին երեք հարյուր տաղանդ պղինձ,

<sup>1</sup> «Սիր Տրիստրեն» պոեմը ստեղծվել է անհայտ հեղինակի կողմից, Անգլիայի հյուսիսում, 13-րդ դարում:

երկրորդ տարին՝ երեք հարյուր տաղանդ ընտիր արծաթ, և երրորդ տարին՝ երեք հարյուր տաղանդ ոսկի: Բայց երբ վրա էր հասնում չորրորդ տարին, նրանք տանում էին երեք հարյուր պատանի և երեք հարյուր տասնհինգամյա աղջիկ Կոռնուայի ընտանիքների միջև անցկացվող փճակահանության համաձայն: Եվ ահա այդ տարին, Իոլանդիայի թագավորը Տիևուածել էր ուղարկել որպես պատգամախոս ածուխի մի ասպետի՝ Մոռոլտին, որի քոռջ հետ ամուսնացել էր նա, և որին ոչ ոք չէր կարողացել հաղթել մեհամարտի մեջ: Ուստի Մարկ թագավորը, կնքված նամակներով արքունի խորհրդի հրավիրեց իր երկրի բոլոր բարոններին:

Նշված ժամին, երբ ռազմիկները համախմբվել էին կամարակապ դահլիճում, և Մարկն արդեն բազմել էր արքայական անպիտանում տակ, այսպես խոսեց Մոռոլտը.

— Մարկ թագավոր, լսիր վերջին անգամ իմ տիրոջ՝ Իոլանդիայի արքայի հրամանը: Նա քեզ կոչ է անում, որ, վերջապես, վճարես այն տուրքը, որ պարտ ես դու: Եվ որովհետև մերժել ես անչափ երկար, ուստի նա պարտավորեցնում է քեզ հանձնել հեևց այսօր, երեք հարյուր պատանի և երեք հարյուր տասնհինգամյա աղջիկ՝ Կոռնուայի ընտանիքների միջև անցկացվելիք փճակահանության համաձայն: Իմ նավը, որ խարսխված է Տիևուածել նավահանգրտում, նրանց կուսնի, և նրանք կդառնան մեր ճորտերը: Այնուամենայնիվ, (և ես, ինչպես ընդունված է, միայն քեզ եմ բացառում, Մարկ թագավոր) եթե քո ռազմիկներից որևէ մեկը ցանկանում է մեհամարտով ապացուցել Իոլանդիայի թագավորի հարկահանման անօրինականությունը, ես կընդունեմ նրա մարտահրավերը: Կոռնուայի իշխաններ, ձե-

զանից ո՞վ է ուզում մարտնչել այս երկրի անկախության համար:

Ռազմիկները գաղտագողի նայում էին իրար, սպա կախում էին գլուխները: Այս մեկն ինքն իրեն ասում էր. «Թըշվառական, նայիր իոլանդացի Մոռոլտի կազմվածքին: Նա ավելի ուժեղ է, քան չորս ամբակազմ տղամարդ: Նայիր նրա թրին. դու չգիտե՞ս, որ կավասարդանքի գործությամբ գրվառտել է ամենախիզախ ակոյաններին՝ այն տարիների ընթացքում, ինչ Իոլանդիայի թագավորը, հանձին այս ածուխի, մարտահրավեր է ուղարկում իր վասալ երկրներին: Ողորմելի, դու քո մահն ես փնտրում: Աստուծոն ինչո՞ւ գայթակղեցնել»: Այն մյուսը խորհում էր. «Արդյոք ճորտային աշխատանքի համա՞ր եմ ձեզ մեծացրել, իմ սիրելի որդիներ, և ձեզ, իմ սիրելի դուստրեր, անատակության՞ համար: Սակայն մահս ձեզ չի փրկի»: Ու բոլորը լուռ էին:

Մոռոլտը դարձյալ ասաց.

— Կոռնուայի իշխաններ, ձեզանից ո՞վ է ցանկանում ընդունել իմ մարտահրավերը: Առաջարկում եմ նրան մի փառավոր մեհամարտ, քանզի երեք օրվա ընթացքում, նավակներով կհասնենք Տիևուածելից ոչ հեռու գտնվող Սուրբ Սամսոն կղզին<sup>1</sup>: Այնտեղ ձեր ասպետը և ես մեն-մենակ իրար դեմ կմարտնչենք, և փառք ու պատիվ կշնորհվի գերդաստանին այն ասպետի, որը կխիզախի դուրս գալ մարտի:

Նրանք շարունակում էին լռել, և Մոռոլտը նման էր այն ճախրաբազեին, որին արգելափակել են թոշնակների հետ

<sup>1</sup> Հնում որոշ ժողովուրդներ սովորույթ ունեին մեհամարտը կազմակերպել ոչ մեծ կղզիների վրա, որպեսզի ակոյանները մեկը մյուսից հեռու չկարողանան փախչել:

միևնույն վանդակում. երբ նա այնտեղ է, բոլորը համարում են:

Եվ Մոռոլտը խոսեց երրորդ անգամ.

— Դե լավ, Կոմանայի պատվարժան ազնվականներ, եթե այսպիսի դիրքորոշումը դուք համարում եք արժանավայել, փիճակ գցեք ձեր երեխաների միջև, և ես նրանց կտանեմ: Սակայն չէի կարծում, որ այս երկիրը միայն ճորտերով է բնակեցված:

Այնժամ, Տրիստանը ծնկի եկավ Մարկ թագավորի ոտքերի առաջ և ասաց.

— Տեր արքա, եթե դուք բարեհաճեք ինձ շնորհել ձեր թողութայունը, ես կմեճամարտեմ:

Իզուր Մարկ թագավորը փորձեց նրան տարհամոզել: Ասպետ էր արդեն Տրիստանը, բայց դեռ այնքա՛ն պատանի. ի՞նչ օգուտ նրա խիզախամից: Սակայն Տրիստանը մարտահրավեր նետեց Մոռոլտին, և Մոռոլտն այն ընդունեց:

Նշված օրը նա կանգնեց հրակայմիր, թանկարժեք գորգի վրա և հրամայեց իրեն զինել՝ մեծագույն հերոսամարտի համար: Հագավ ձուլածո մուգ պողպատից կուսձ զրահ և սաղավարտ: Քաջազնին բարոններն ասխտում էին վշտի արտառաքներով՝ իսկ իրենց վրա ամոթից էին լալիս: «Ահ, Տրիստան,— ասում էին իրենք իրենց,— խիզախ ասպետ, սքանչելի պատանջակ, ինչո՞ւ քո փոխարեն ես չընդունեցի մարտահրավերը: Իմ մահը պակաս վիշտ պիտի ասիեր այս երկրի երեսին...» Հնչում են զանգերը, և բոլորը՝ թե՛ բարոնները, թե՛ հասարակ մարդիկ՝ ծերունիներ, երեխաներ ու կանայք, արտասովելով, աղոթելով ուղեկցում են Տրիստանին

մինչև ծովեզերք: Նրանք դեռևս հույս ունեին, քանզի մարդու արտում հույսը քշով էլ է սնվում:

Տրիստանը նավակ նստեց մեռակ ու սլացավ դեպի Սուրբ Սամսոն կղզին: Սակայն Մոռոլտը, որն իր կայմին ծիրանագույն, շքեղ սուսագաստ էր ամրացրել, կղզի հասավ առաջինը: Նա նավակը կապում էր ծովեզրին, երբ Տրիստանը նույնպես ափ դուրս ելավ ու ոտի հարվածով իր մակույկը հրեց դեպի ծովը:

— Այդ ի՞նչ ես անում, վասալ,— ասաց Մոռոլտը,— և ինչո՞ւ ինձ նման դու քո նավակը պարանով չամրացրիր:

— Իսկ ինչի՞ համար, վասալ,— պատասխանեց Տրիստանը,— մեզանից միայն մեկը կենդանի պիտի դուրս գա այստեղից. մի՞թե մի նավակը չի բավականացնի:

Եվ երկուսն էլ վիրավորական խոսքերով միմյանց գրգռում էին մարտի և ուղղվում դեպի կղզու խորքերը:

Ոչ ոք չտեսավ մարտը դաժան: Բայց երեք անգամ թվաց, որ ծովային քամին Տրիստանը է բերում կատաղի մի ճիչ: Այնժամ, ի նշան սգի՝ կանայք միասնաբար իրար էին խլրփում ասիերը, իսկ սեփական վրանների առջև մեկուսի հավաքված Մոռոլտի ընկերները հոհոում էին: Վերջապես միջօրեին, հեռուից երևաց ծիրանագույն սուսագաստը: Իողանդացու նավակը հեռացել էր կղզուց, և ահա թե՛նայց ողբալի աղաղակ՝ Մոռոլտը, Մոռոլտը: Բայց նավակը հեռագետե խոշորանում էր ու երբ հանկարծ վեր խոչալցավ ալիքի կատարին, ասպետը երևաց. կանգնած նավացողովին բարձրացրել էր մի-մի թուր ամեն ձեռքին. դա Տրիստանն էր: Քսան նավակ անմիջապես սուրացին նրան ընդառաջ, և ջուրը նետվեցին պատանի լողորդներ: Արիսափրտ ասպետը ափ ելավ թափով, և մինչ ծնկաչոք մաշերը երկաթյա ոտ-

Ամաններն էին համբոյրում, նա բացականչեց՝ դիմելով Մո-  
ռուլի ընկերներին.

— Իռլանդիայի ազնվականներ, Մոռուլը մարտնչեց  
խիզախաբար: Նայեցեք, իմ թրի շեղքը ջարդված է: Դրա մի  
բեկորը խրված մնաց նրա գանգի մեջ: Տարեք պողպատի  
այդ կտորը, սենհորներ, այդ է տուրքը Կոռնուայի:

Այնժամ, նա բարձրացավ դեպի Տիևուածելի դռակը:  
Ծանապարհին՝ փրկված երեխաները բարձրադադակ թա-  
փահարում էին դալար ճյուղեր, և պատուհաններին շքեղ  
վարագույրներ էին կախված: Բայց երբ ցնծության երգերի  
միջով, զանգերի, փողերի հնչյունների տակ (որոնց աղմու-  
կից աստվածային որոտն անգամ չէր լսվի) Տրիստանը հա-  
սավ դղչակ, թուլացած ընկավ Մարկ թագավորի թևերի մեջ,  
և արյունը հոսում էր վերքերից:

Մոռուլի ընկերները վհատված վերադարձան Իռլան-  
դիա: Ատենոք, երբ Վեյզեֆորտի<sup>1</sup> նավահանգիստն էր մըտ-  
նում, Մոռուլը հրճվում էր՝ կրկին տեսնելով իրեն ողջու-  
նող, համախմբված յուրայիններին, և՛ թագուհուն՝ քրոջը,  
և՛ քրոջ աղջկան՝ շեկ վարսերով Ոսկեհեր Իզոլդային, որի  
գեղեցկությունն արդեն շողջողում էր, ինչպես բացվող ար-  
շապույթ: Քնքշորեն դիմավորում էին նրան, և եթե վիրա-  
վորված էր լինում, բուժում էին, քանզի գիտեին այն սպե-  
ղանիներն ու ըմպելիքները, որոնք վերակենդանացնում են  
կիսամեռ վիրավորին: Բայց այլևս ինչպե՞ս կարող էին նրան  
փրկել այժմ կախարդական դեղորայքը, պատեմ ժամին  
քաղված խոտերը, մոգական ըմպելիքները: Անշունչ պատկել

<sup>1</sup> Իռլանդական նավահանգիստ, Գուլբիեից հարյուր կիլոմետր հա-  
րավ:

էր՝ եղջերուի կաշու մեջ կարված, և թշնամական թրի բե-  
կորը դեռ խրված էր գանգում: Ոսկեհեր Իզոլդան այն դուրս  
բաշեց, թանկագին մասունքի նման, փղոսկրյա տուփի մեջ  
պահելու համար: Եվ խոնարհված հսկա դիակի վրա՝ հան-  
գուցյալին անվերջ գովերգելով և նույն պարսավանքն ան-  
դադար շարունակելով մարդասպանի հասցեին՝ մայր ու աղջիկ  
փոխանիփոխ, կանանցով շրջապատված, սգավոր կարոտան-  
քի ողբն էին բարձրացնում: Այդ օրվանից Ոսկեհեր Իզոլ-  
դան սովորեց ատել Տրիստան դը Կոռնուայի անունը:

Սակայն Տիևուածելում Տրիստանը հյուժվում էր. թունա-  
վոր արյուն էր հոսում վերքերից: Բժիշկները գտան, որ Մո-  
ռուլը նրա մարմինը խցել է թունավոր նիզակով, և քանի  
որ իրենց խոտաբույսերի թույմն ու հակաթույները չէին կա-  
րող փրկել, ուստի վիրավորին հանձնեցին աստծո ողորմա-  
ծությանը: Այնպիսի զգվելի գարշահոտություն էին արձա-  
կում Տրիստանի վերքերը, որ բոլոր սիրելի բարեկամները  
խուսափում էին, բոլորը, բացի Մարկ թագավորից, Գոր-  
վենայից և Դինաս դը Լիդանից: Միայն նրանք էին կարողա-  
նում մնալ հիվանդի սնարի մոտ, քանզի սերը սանձահա-  
րում էր զգվանքը: Վերջապես Տրիստանը խնդրեց, որ իրեն  
տեղափոխեն ծովեզրին մեկուսի կառուցված մի խրճիթ. և  
ալիքների դիմացը պատկած՝ սպասում էր մահվան: Նա խոր-  
հում էր. «Ուրեմն, ինձ լքեցի՞ք, Մարկ թագավոր, ինձ, որ  
փրկել եմ երկրի պատիվը: Ոչ, ես գիտեմ, սիրելի մորեղ-  
բայր, որ դուք ձեր կյանքը կգոհեիք ինձ փրկելու համար:  
Բայց ի՞նչ կարող է անել սերը: Ինձ վիճակված է մեռնել:  
Ի՞նչ քաղցր է, սակայն, տեսնել արեգակը, և իմ սիրտը դեռ-  
ևս լի է արիությանը: Ուզում եմ տրվել արկածալի ծովի  
փորձություններին... Ուզում եմ, որ նա ինձ տանի հեռու, մե-

նախոր անանձնության մեջ. Դեպի ո՞ր երկիրը, չգիտեմ, բայց գուցե այնտեղ գտնեմ մեկին, որն ինձ բուժի: Եվ, թերևս, մի օր, նորից կարողանամ ձեզ ծառայել, սիրելի մորեղբայր, որպես տավրահար, կ' որսորդ, կ' հավատարիմ հպատակ»:

Տրիստանն այնքան աղաչեց, որ Մարկ թագավորը ընդատաչեւ նրա ցանկությանը: Դրեց նավակի մեջ, առանց առագաստի, առանց թիակների, և Տրիստանն ուզեց, որ միայն տավիրը լինի կողքին: Ինչի՞նչ էին հարկավոր առագաստները, երբ թևերն անգոր էին բարձրացնելու: Ինչի՞նչ էին հարկավոր թիակները: Ինչի՞նչ էր պետք թուրը: Ինչպես երկար ամփոքրության ժամանակ նավաստին ջուրն է նետում ճին ընկերոջ դիակը, այդպես՝ դողդոջուն թևերով Գորվենալը դեպի ծով հրեց մակույկը, որի մեջ պատկած էր սիրելի որդին, և ծովը տարավ նրան:

Յոթ օր, յոթ գիշեր ալիքները Տրիստանին քշեցին կամացույկ: Երբեմն, տավիրի նվագակցությամբ՝ երգում էր տառապանքները մոռանալու համար: Վերջապես ծովն աննկատելիորեն նրան մոտեցրեց մի ափի: Այնպես պատահեց, որ այդ գիշեր ձկնորսները դուրս էին եկել նավահանգստից՝ ցանցերը հեռու ծովում գցելու, և թիավարում էին, երբ մեղեղի լսեցին, անուշ, խիզախ ու կենսախիճո մեղեղի, որ ծավալվում էր ջրերի վրայով: Թիակները կախած ալիքներից վերև, անշարժացած՝ ունկնդրում էին: Այգաբացի առաջին լույսերի ներքո տեսան թափառող նավակը: «Այդպես,— ասում էին իրարու,— մի գերբնական մեղեղի պարուրում էր սուրբ Բրենդանի<sup>1</sup> նավը, երբ լողարկում էր դեպի

<sup>1</sup> Սուրբ Բրենդան-Աբբասայր, Կլոնֆերտի եպիսկոպոս (484—578):

հավատավոր կղզիները<sup>1</sup>, կաթի պես ապիսակ ծովի վրա»: Թիավարեցին՝ հասնելու համար մակույկին, որը թողնված էր ալիքների քմահաճությին: Եվ չէր երևում կենդանության ոչ մի նշան, տավիրի ձայնից բացի: Բայց բաժի մոտենում էին, այնքան թուլանում էր մեղեղին, որը և լսեց, երբ հասան մակույկին: Տրիստանի ձեռքերն անզգա ընկած էին դեռևս դողդոջուն լարերի վրա: Վիրավորին վերցրին, վերադարձան նավահանգիստ և նրան հանձնեցին իրենց գթաուստ տիրուհուն, որը գուցե ի վիճակի լիներ բուժելու:

Ավա՛ղ, այդ նավահանգիստը Վեյզեֆորուն էր, որտեղ հանգչում էր Մոռուլորը, և նրանց տիրուհին Ոսկեհեր Իզոլդան էր: Միայն նա, մոգական ըմպելիքների հմուտ դժխոսին, կարող էր փրկել Տրիստանին: Բայց կանանց միջից միայն նա՝ Ոսկեհեր Իզոլդան էր, որ ցանկանում էր նրա մահը: Արքայադստեր հմտության շնորհիվ ուշքի եկած Տրիստանը շուրջը նայեց և հասկացավ, որ ծովի ալիքները իրեն դուրս են քերել կորստաբեր մի երկիր: Բայց դեռևս տողորված կյանքը պաշտպանելու խիզախությամբ՝ կարողացավ արագորեն գտնել գեղեցիկ ու խորամանկ խոսքեր: Պատմեց, որ ինքը իբրև թե ապաստաց է և ամփոքրում էր սուևորսնավով, գնում էր Իսպանիա՝ այնտեղ սովորելու աստղերի վերծանման արվեստը. ծովահեճներ հարձակվել էին նավի վրա. ինքը վիրավորվելով փրկվել է այդ նավակի շնորհիվ: Նրան հավատացին: Մոռուլտի ընկերներից ոչ մեկը

Անգլիացում վանքեր հիմնադրեց, հետո, ըստ ավանդության, հանապարհորդություն կատարեց դեպի Դրախտ: Քննադատությունը Սուրբ Բրենդանի դրախտը համապատասխանեցրել է Կանարիս կղզիների հետ:

<sup>1</sup> Այժմյան Կանարիս արշիպելագի անունը:



չնանաչեց Սուրբ Սամսոն կղզու գեղեցիկ ասպետին, թույլն աչնքա՛ն էր այլանդակել դիմագծերը: Բայց երբ քառասուն օր անց, ոսկե վարսերով Իզոլդան համարյա արդեն բուժել էր և մարմնի ճկունացած անդամների մեջ կրկին վերածնվում էր երիտասարդական հմայքը, նա հասկացավ, որ հարկավոր է փախչել: Փախավ ու, այլևայլ վտանգների ենթարկվելուց հետո, մի օր ներկայացավ Մարկ թագավորին:

### Գ Լ Ո Ւ Խ III

#### ՈՍԿԵ ՎԱՐՍԵՐՈՎ ԳԵՂԵՑԿՈՒՀՆՈՒ ՈՐՈՆՈՒՄՆ ՈՒ ՆՎԱԾՈՒՄԸ

Կարճ ժամանակում ձեզ հանգստացրի  
Հեքիաթի շնորհիվ, մի մագի մասին  
Եվ այդ օրվանից խորապես տխրեցի:  
(«Մաք Տրիստանի խելագարության մասին»<sup>1</sup>)

Մարկ թագավորի արքունիքում ապրում էին չորս բարոններ, որոնք ամենամեծագամիտն էին բոլոր մարդկանցից և ստոր ատելությանը ատում էին Տրիստանին, քանզի խիզախ էր, և նրան էր քնքշորեն սիրում թագավորը: Ես կարող եմ ձեզ ասել դրանց անունները՝ Անդրեոս, Գեներոն, Գոնդոին և Դեմուալեն: Դուքս Անդրեոսն, ուրեմն, Տրիստանի մեծն, ազգական էր Մարկ թագավորին: Իմանալով, որ իր երկիրը Տրիստանին թողնելու համար թագավորը մտադիր

<sup>1</sup> Հատվածային պոեմ, որը պահպանվել է Բեռնի ձեռագրերում, ստեղծված է դեռևս չճշտված թվականի, բայց շատ հավանական է, որ դա լինի 12-րդ դարի կեսերը:

է անգլավակ ծերանալ, դրդված նախանձից՝ զրպարտանքներով Տրիստանի դեմ էր գրգռում Կոռնուալի մեծամեծներին:

— Որքա՛ն հրաշքներ ասես, որ չկատարվեցին նրա կյանքում,— ասում էին դախադիրները,— բայց դուք, որ բացառապես ողջամիտ եք, սեմիորնե՛ր, կկարողանաք անկասկած ճիշտ հասկանալ, թե քանն ինչ է: Այն, որ Մոռուլտին հաղթեց, արդեն իսկ հրաշագործություն էր: Սակայն, ասեք, տեսնե՞նք, այդ ի՞նչ կախարդանքների շնորհիվ ի գորու եղավ նավարկելու կիսամեռ ու մեռ-մեռակ: Մեզանից ո՞վ, սեմիորներ, կարող է նավը դեկավարել առանց թիերի և առանց առագաստի: Ասում են, թե միայն կախարդներն են կարողանում: Հետո՛ այդ ո՞ր մոգական երկրում բազասան գտավ իր վերքերին: Անկասկած, հմայող է: Այո՛, նրա նավակը կախարդական էր, և՛ թուրը նույնպես, և՛ տավիղը կախարդական է, տավիղ, որն ամեն օր թույլ է ածում Մարկ թագավորի սիրտը: Ինչպե՛ս էլ կախարդանքի և դյութանքի զորությանը կարողացավ նվաճել արքայի սիրտը: Սեմիորներ, նա դառնալու է թագավոր, և մի կախարդ պիտի լինի ձեր հողերի տնօրենը:

Համոզեցին բարոնների մեծ մասին, քանզի շատ մարդիկ չգիտեն, որ այն, ինչ ի գորու են անելու կախարդները, ի սրտե նույնպես կկատարվի, խիզախության ու սիրո ուժգնության շնորհիվ: Այդ իսկ պատճառով բարոնները հետամուտ պահանջեցին Մարկ թագավորից, որ կնության առնի մի արքայադուստր, որը լույս աշխարհ բերի իսկական թագածառանգներ. էթե հրաժարվի, իրենք պիտի քաշվեն իրենց բերդերը և պիտի պատերազմեն նրա դեմ: Արքան դիմադրում է այդ պահանջներին և սրտի խորքում երդվում՝ քանի

դեռ կենդանի է սիրելի քրոջորդին, ոչ մի արքայադուստր չի մտնի Կոռնուայի թագավորական հարսանյաց մահիճը: Բայց Տրիստանը, յուր հերթին, խորապես ամոթահարված էր. կասկածում եմ, որ ինքը մորեղբորը սիրում է շահախնդրորեն: Նա սպասուհաց, որ էթե թագավորը չանսա բարոնների կամքին, ինքը կլքի արքունիքը և կգնա ծառայելու Գավուայի մեծահարուստ արքային: Այնժամ Մարկը մտածելու ժամանակ պահանջեց, ըստ որի ինքը քառասուն օր անց իր կամքը կհայտնի բարոններին:

Նշված օրը սենյակում միայնակ՝ արքան սպասում էր նրանց գալստյան և խորհում էր. «Որտե՞ղ գտնեմ մի արքայադուստր, որ լինի այնքան հեռավոր ու անհասանելի, որ կարողանամ ձևացնել, բայց լոկ ձևացնել, թե միայն նրան եմ ցանկանում կնության»:

Այդ պահին, իրենց բույները շինող երկու ծիծեռնակ, իրար հետ կույճուկով ներս մտան ծովահայաց բաց լուսամտոցից, ապա հանկարծակի ահաբեկվելով, անհետացան: Բայց նրանց կտուցներից ընկել էր կանացի մի երկար մազ, մետաքսաթելից էլ բարակ, մի մազ, որ փայլվում էր արեգակի շողի նման:

Մարկը, այն վերցնելուց հետո, ընդունեց բարոններին ու Տրիստանին և ասաց.

— Ձեզ հաճո լինելու համար, սենիորներ, կամուսանամ, էթե այնուհանդերձ, դուք ուզենաք գտնել ու բերել այն արքայադուստրը, որին ես ընտրել եմ:

— Իհարկե, մենք այդ կուզենանք, ազնիվ տեր: Ո՞վ է, որեմն, այն արքայադուստրը, որին դուք ընտրել եք:

— Ես ընտրել եմ նրան, ում պատկանում է այս ոսկե

մազը, և իմացած եղեք, որ նրանից բացի, ոչ մեկին չեմ ուզում:

— Իսկ դուք որտեղի՞ց եք ձեռք բերել այդ ոսկե մազը, ազնիվ տեր, ո՞ր երկրից:

— Սենիորներ, ես այս մազն ստացել եմ ոսկե վարսերով Գեղեցկուհուց: Այն բերել եմ երկու ծիծեռնակ: Նրանք գիտեն, ո՞ր երկրից:

Հիասթափված՝ բարոնները հասկացան, որ իրենց դարձրել եմ ծաղրի առարկա: Չայրույթով նայում էին Տրիստանին, քանզի կասկածում էին, որ ինքն է արքային խորհուրդ տվել դիմելու այդ խորամանկությանը: Բայց Տրիստանը, ոսկե մազը դիտելուց հետո, հիշեց Ոսկեհեր Իզոլդային: Նա ժպտաց և խոսեց այսպես.

— Մարկ թագավոր, դուք գործում եք հանիրավի: Մի՞թե չեք տեսնում, որ այս սենիորների կասկածներն անարգում են ինձ: Սակայն իզուր սարքեցիք այս ծաղրածանակը. ես կզնամ կգտնեմ ոսկե վարսերով Գեղեցկուհուն: Իմացած եղեք, որ այդ որոնումը կորստաբեր է, և ինձ համար ավելի դժվար պիտի լինի վերադառնալ նրա երկրից, քան այն կղզուց, որտեղ սպանեցի Մոռուտին: Բայց սիրելի մորեղբայր, ձեզ համար ուզում եմ նորից վտանգի ենթարկել իմ կյանքն ու անձը: Եվ որպեսզի բարոնները համոզվեն, որ ձեզ սիրում եմ անջահախնդիր սիրով, ես հանդիսավոր երդվում եմ՝ կա՛մ կմեռնեմ այս նպատակն իրագործելու նախաարհին, կամ Տիևուսձելի դղյակը կբերեմ խարսոյաջ վարսերով թագուհուն:

Տրիստանը կարգի բերեց մի գեղեցիկ նավ, որի վրա բեռնեց հացահատիկ, գինի, մեղր և ամեն տեսակի ուրիշ բարիքներ: Բացի Գորվենալից, նավի վրա հրավիրեց հար-

յոր ազնվագարն, երիտասարդ ասպետների՝ ընտրված ամենախիզախների միջից, և նրանց զգեստավորեց բրդյա կոպիտ շորերով, կնգուղավոր թիկնոցներով այնպես, որ անսկզպեցին վաճառականների: Բայց տախտակամածի տակ նրանք թաքցրել էին ոսկեգօծ, մետաքսյա, ծիրանագույն շքեղ զգեստներ, որոնք վայել են հզոր արքայի պատգամավորների:

Երբ ափից հեռացան, նավավարը հարցրեց.

— Ազնիվ տեր, դեպի ո՞ր երկիրը լողարկեմ:

— Բարեկամս, սլացիր դեպի Իուլանդիա, ուղիղ դեպի Վելզեֆորտի նավահանգիստը:

Նավավարը ցնցվեց: Տրիստանն արդյոք չգիտեր, որ Մոնոլտի սպանությունից հետո, Իուլանդիայի թագավորը հետապնդում էր Կոռնուայի նավերը: Գերեվարածներին ցցունկախում էր որսատեգերի վրա: Նավավարը, սակայն, հեռավանդվեց և ուղևորվեց դեպի կորստաբեր երկիրը:

Նախ և սուաջ՝ Տրիստանը կարողացավ համոզել Վելզեֆորտի բնակիչներին, որ ընկերները Անգլիայից եկած վաճառականներ են, որոնք ցանկանում են խաղաղությամբ առևտուր անել: Բայց քանի որ այդ տարօրինակ վաճառականներն օրն անցկացնում էին շախմատով, նարդիով ու սեղանի այլ վայելույ խաղերով և ավելի հմտությամբ զատ էին բանեցնում, քան հացահատիկ չափում, ուստի՝ Տրիստանը երկյուղում էր, որ իրեն կճանաչեն և չգիտեր, ինչպես սկսել որոնումը:

Այնպես պատահեց, որ մի օր, լուսաբացին, նա լսեց այնպիսի ահարկու ձայն, ասես դա լիներ ճիշդ դևի: Երբևէ չէր լսել, որ որևիցե կենդանի մոռչար այդպես ահուկի և

գերբնական: Տրիստանը կանչեց մի կնոջ, որն անցնում էր նավահանգստով:

— Ասացեք ինձ, տիկին,— խնդրեց,— որտեղի՞ց է այն ձայնը, որ քիչ սուաջ լսեցի: Մի՛ թաքցրեք ինձանից ճշմարտությունը:

— Իհարկե, սրբ, ես ձեզ կասեմ սուսնց ստեղու: Այդպիսի ձայն է հանում մի դաժան հրեշ, որն ամենաալյանդակ ճիվաղն է ամբողջ աշխարհում: Ամեն օր նա իջնում է քարայրից և կանգնում քաղաքի դարպասներից մեկի մոտ: Ոչ ոք չի կարողանում դուրս գալ, ոչ ոք չի կարողանում ներս մտնել, մինչև որ չեն հանձնում վիշապին մի ջահել աղջիկ: Եվ նրան ճանկելուն պես հրեշը կուլ է տալիս ավելի կարճ ժամանակում, քան հարկավոր է «Հայր մեր» ստեղու համար:

— Դե, դե,— գոչեց Տրիստանը,— մի՛ ծաղրեք ինձ, բայց ասացեք, տեսնեմ, մորից ծնված մարդը կարո՞ղ է արդյոք նրան ապանել մենամարտում:

— Իսկապես չգիտեմ, սիրելի, ազնիվ սրբ: Հաստատ է լոկ այն, որ քսան կոփված ասպետներ փորձել են արդեն, քանզի Իուլանդիայի թագավորը, պատգամաբերների միջոցով, խոստացել է, որ իր դստեր՝ Ոսկեհեր Իզոլդային, կնության կտա նրան, ով կսպանի վիշապին: Բայց վիշապը նրանց բոլորին էլ լափեց:

Տրիստանն այդ կնոջից հեռանում ու նավ է վերադարձնում: Գաղտնաբար զինվում է, և նաչողի համար հանելի տեսարան էր այն, թե ինչպես սուևորանավից դուրս եկավ շքեղ ուազմահանդերձանքը հագին՝ մի ասպետ ալնքա՛ն անվեհեր: Բայց ամայի էր նավահանգիստը, քանզի լույսը հագիվ էր բացվել, և ոչ ոք չտեսավ խիզախին, որն արշավում էր

դեպի դարպասը, որի մասին ասել էր այն կինը: Հանկարծ, ճանապարհով պացան հինգ հոգի, որոնք ճծույզները խթանելով, սանձերն արձակած՝ փախչում էին դեպի քաղաք: Տրիստանն այնպես ամուր բռնեց այդ փախչողներից մեկի կարմրաշեկ հյուսքերից, որ նա, մեջքի վրա շրջված, անշարժացավ իր ձրու գավակին:

— Աստված ձեզ փրկի, ազնիվ սրբ,— ասաց Տրիստանը,— ո՞ր ճամփով է գալիս վիշապը:

Եվ երբ փախստականը ցույց տվեց ճանապարհը, Տրիստանը բաց թողեց նրան:

Ծիվաղը մոտենում էր: Ուներ արջի գլուխ, աչքերը կարմիր էին վառվող ածուխների պես, ճակատին՝ երկու եղջյուր, ականջները՝ երկար ու փրչուտ, ճիրաններն առյուծի, պոչը՝ օձի և մարմինը գրիֆոնի՝ պես թեփուկավոր:

Տրիստանը ճծույզն այնպիսի թափով մղեց վիշապի դեմ, որ թեև երիվարն ահ ու սարսափից փշաքաղվեց, բայց, այնուամենայնիվ, գրոհեց հրեշի վրա: Տրիստանի ճիզակը կպավ թեփուկներին ու կտոր-կտոր թռավ այս ու այն կողմ: Ահա, արիասիրտ սասպետն անմիջապես թուրը դուրս է բաշում, բարձրացնում ու հարվածում վիշապի գլխին, բայց չկարողացավ կաշին իսկ ճեղքել: Ծիվաղը, սակայն, զգաց հարվածը: Ահա, ճանկերը գցում է վահանին, խրում է մեջք և կտրատում շարտում է ամրակները: Կրճքաբաց՝ Տրիստանը նորից ի գործ է դնում թուրը և այնպես ուժգնորեն է հարվածում կողերին, որ արձագանքն օրն է տատանում: Ապարդյուն. նրան չի կարողանում վիրավորել: Այնժամ վի-

<sup>1</sup> Գրիֆոն— հեքիաթային թևավոր հրեշ՝ արծյա գլխով և առյուծի մարմնով:



շապի ունեցանքից ժայթքեցին թունավոր բոցերի գույզ շա-  
տըրվաններ: Ահա, Տրիստանի գրահը սևանում է հանգամ  
ածուխի անան, ձին ընկնում և մահանում է: Բայց ուրի  
կանգնելուն պես՝ Տրիստանն անմիջապես փառավոր թուրը  
խրում է ճիվաղի երակը. թուրը խրվում է ամբողջությամբ,  
և սիրաը կիսում է: Վիշապը վերջին անգամ արձակում է ահ-  
ռելի ճիչը և անընչանում:

Այնժամ Տրիստանը կորեց նրա լեզուն և դրեց գրպանը:  
Հետո դառը ծխից բոլորովին թմրած՝ ծարավը հագեցնելու  
համար քաչեց դեպի լճացած ինչ-որ ջուր, որ փայլվիլում  
էր քիչ հեռու: Բայց վիշապի լեզվից անջատված թույնը  
մարմնին հպվելուց տաքացավ, և անհիճը եզերող բարձր  
խոտերի մեջ հերոսն ընկավ ուշագնաց:

Իմացեք, ուրեմն, կարմրաշեկ հյուսքերով փախտականը  
Ազիևգետան Կարմրաշեկն էր՝ Իոլանդիայի թագավորի ար-  
քունիքի արդարադատության նախարարը, որը ձգտում էր  
տիրանալ Ոսկեհեր Իզոլդային: Վախկոտ էր Ազիևգետանը,  
բայց սերն այնքան է հզոր, որ ամեն առավոտ նա, գին-  
ված, դարան էր մտնում ճիվաղի վրա հարձակվելու համար:  
Սակայն հենց որ հեռվից լսում էր ահարկու ձայնը՝ ասպետը  
փախչում էր: Այդ օրը, չորս ընկերների ուղեկցությամբ, հա-  
մարձակվեց ետ դառնալ: Վիշապին գտավ սպանված, ձին՝  
մահացած, վահանը՝ ջարդված և խորհեց, որ հաղթողն ինչ-  
որ տեղ մեռնելու վրա է: Այնժամ նա կորեց ճիվաղի գու-  
խը, տարավ թագավորին և պահանջեց խոստացված թան-  
կագին պարգևը:

Արքան չհավատաց Ազիևգետանի քաշագործությանը,  
սակայն, կամենալով գործել ըստ օրինաց, հրամաններ  
նորարկեց վասալներին, որ երեք օրից հավաքվեն սպա-

տում. բարոնների համաժողովի առջև արքունի արդարա-  
դատության նախարար Ազիևգետանը պիտի ներկայացներ  
իր հաղթանակի ասպացույցը:

Երբ Ոսկեհեր Իզոլդան իմացավ, որ իրեն կնության են  
տալու այդ վախկոտին, նախ՝ մի կուշտ ծիծաղեց, ապա տըր-  
տըրեց: Բայց հաշորդ օրը, կասկածելով, որ խարդախու-  
թյուն է կատարվել, հետը վերցրեց սպասավորին, խարտյաշ  
հավատարիմ Պերիմիսին, Բրանժիենին՝ երիտասարդ աղախ-  
նուն ու ընկերուհուն, և երեքը միասին, գաղտնաբար, ար-  
շավեցին դեպի ճիվաղի որջը այնքան ժամանակ, ինչքան  
Իզոլդան ճանապարհի վրա տեսնում էր յուրահատուկ ձևի  
հետքեր. անկասկած այդտեղից անցած ձուռյալ պայտած  
էր ոչ իդանդական հողի վրա: Հետո գտավ անգույն հրե-  
շին և մահացած ձիուն, որ թամբած չէր բնիկների սովո-  
րության համաձայն: Անշուշտ օտարական էր նա, ով սպա-  
նել էր հրեշին: Բայց դեռ սպրո՞ւմ էր արդյոք:

Իզոլդան, Պերիմիսը և Բրանժիենը երկար որոնեցին և,  
վերջապես, գտան նրան ճահճուտի խոտերի մեջ: Բրանժիենն  
էր տեսել, որ քաջի սաղավարտը շողշողում է: Դեռ շնչում  
էր ասպետը: Պերիմիսը նրան դրեց ձիուն և գաղտնաբար  
տարավ կանանց հարկաբաժինը: Աչքտեղ Իզոլդան մորը  
պատմեց եղելությունը և օտարականին հանձնեց նրա խնա-  
մակալությանը: Մինչ թագուհին հանում էր վիրավորի գրա-  
հագեատը, վիշապի թունավոր լեզուն ընկավ գրպանից: Այն-  
ժամ, բուժիչ խոտի շնորհիվ, ուշքի բերեց նրան և ստաց.

— Օտարական, գիտեմ, որ իրոք դու ես հրեշին սպա-  
նողը, բայց մեր նենգ ու վախկոտ արքունի արդարադատու-  
թյան նախարարը կորել է նրա գուխը ու որպես պարգև  
պահանջում է իմ աղջկան՝ Ոսկեհեր Իզոլդային: Կկարողա-

նա՞ս երկու օրից մենամարտով ապացուցել դրա խաբեությունը:

— Թագուհի,— ասաց Տրիստանը,— քիչ է ժամանակը: Բայց անկասկած կկարողանաք ինձ բուժել երկու օրում: Ես Իզոդային նվաճեցի՝ վիշապին սպանելով, գուցե հետո նրան տիրանամ՝ հաղթելով արքունի արդարադատության նախարարին:

Այնժամ, թագուհին շքեղաբար հյուրընկալեց օտարականին և պատրաստեց ներգործուն բալասաններ: Հաջորդ օրը Ոսկեհեր Իզոդան բաղնիքը տաքացրեց և հերոսի մարմնին քնքշորեն քսեց մոր պատրաստած սպեղանին: Հետո հալացքը սանեցրեց դեմքի վրայով, տեսավ, որ գեղեցիկ է և սկսեց մտածել. «Նրա արիությունը համազոր է գեղեցկությանը, և անշուշտ, իմ դյուցազունը դաժան մարտ է վարելու»: Իսկ Տրիստանը, զգաստացած ջրի տաքությունից և անուշահոտությունների գորությունից, նայում էր նրան, և խորհելով, որ ինքը նվաճել է ոսկե վարսերով թագուհուն, ժպտաց: Իզոդան տեսավ այդ ու մտածեց. «Ինչո՞ւ ժպտաց այս օտարականը: Արդյոք որևիցե անպատշաճություն՞ն արեցի: Արդյոք անտեսեցի՞՝ որևէ մեկն այն ծառայություններից, որ երիտասարդ աղջիկը պարտավոր է մատուցել հյուրերին: Այո՞, գուցե ծիծաղեց, որովհետև ես մոռացա փայլեցնել թույնից խունացած գեները»:

Ուստի և գնաց այնտեղ, որտեղ դրված էր Տրիստանի զրահագզեառը: «Այս զրահը լավ պողպատից է,— մտածեց,— ու ծանր պահին հուսախաբ չի աճի: Եվ այս սաղավարտը ամուր է, թեթև ու վաշել է, որ քաջ առպետը այն կրի իր գլխին»: Նա թուրը բռնեց դաստակից. «Անշուշտ, սա փառավոր թուր է՝ արժանի հանդուգն բարունին»: Ահա,

թուրը դուրս է քաշում շքեղ պատշաճից արյունոտ շեղքը սրբելու համար: Սակայն տեսնում է, որ շեղքը կոտրվածք ունի: Ջնկում է կոտրվածքի ձևը. արդյոք սա այն շեղքը չէ՞, որ ջարդվել է Մոռոլտի գլխի մեջ: Տատանվում է, նորից է նայում, ուզում է ստուգել կասկածը: Վազում է այն սենյակը, որտեղ պահում էր պողպատյա կտորը, որ մի ժամանակ հանել էր Մոռոլտի գանգից: Կտորը միացնում է կոտրված հասվածին. հագիվ նկատելի էր ջարդվածքի հետքը:

Այնժամ նա հարձակվեց Տրիստանի վրա ու վիրավորի գլխավերևում մեծ թուրը ճոճելով, բացակալեց.

— Դու Տրիստան դը Լոռնուսն ես, իմ մոքեղոք, իմ սիրելի մոքեղոք՝ Մոռոլտին սպանողը: Դե, հիմա քո հերթն է, մեռի՛ր:

Տրիստանը ջանաց վաճել նրա թևը. գուր էին ջանքերը: Մարմինն էր ջարդոտված, իսկ միտքը նկուն էր, ուստի խուսեց հնարամտորեն.

— Լավ, թող ես մեռնեմ, բայց լսիր ինձ, որպեսզի հետո չստատապես զոչումների մեջ: Արքայադուստր, իմացի՛ր, որ դու ոչ միայն ի գորու ես ինձ սպանելու, այլև ունես դրս իրավունքը: Այո՞, դու իրավասու ես իմ կյանքի նկատմամբ, քանի որ երկու անգամ փրկել ես ու ինձ վերակենդանացրել: Առաջին անգամ, վաղուց էր, ես վիրավոր սաքասացնեմ, որին փրկեցիր՝ մարմնից դուրս վաճելով այն թույնը, որով թաթախված էր Մոռոլտի նիզակը: Մի՛ ամաչիր, պարմանուհի, այդ վերքերը բուժած լինելուդ համար: Չէ՞ որ դրանք ստացել էի ազնիվ մենամարտում: Արդյոք Մոռոլտին դավադրաբար՞ էի սպանել: Չէ՞ որ այդ նա ինձ կանչեց մենամարտի: Մի՞թե մարմինս չպետք է պաշտպանելի: Երկրորդ անգամ դու ինձ փրկեցիր՝ ճահճուտում որոնելով ու

գտնելով: Ա՛հ, քեզ համար է, պարմանուհի, որ մարտնչեցի վիշապի դեմ... Բայց թողնենք այդ ամենը. ես միայն ուզում էի սպացուցել, որ ինձ երկու անգամ փրկելով մահվան վտանգից, դու իրավասու ես իմ կյանքի նկատմամբ: Ուստի, սպանիր ինձ, եթե դրանով իսկ կարծում ես, թե ձեռք կբերես գովքն ու փառքը: Անկասկած, երբ պտուկած կլինես անվախ սասկետի՝ արքունի արդարադատության նախարարի գրկում, քեզ համար քաղցր պիտի լինի հիշել քո վիրավոր հյուրին, որն իր կյանքը ենթարկել էր վտանգի՝ քեզ նվաճելու համար և նվաճել էր, և դու այդ անպաշտպան սասկետին սպանած պիտի լինես այս բաղնիքում:

Իզոդրան բացակայեց.

— Տարօրինակ խոսքեր եմ լսում: Մոռոլտին սպանողն ինչո՞ւ պիտի ուզենար ինձ նվաճել: Ա՛հ, կասկած չկա... Ինչպես այն ժամանակ, Մոռոլտը ձգտում էր իր նավով հափըշտակել Կոնոուայի երիտասարդ աղջիկներին, այնպես էլ դու, որպես փոխհատուցում, պարծեցար իբրև ճորտուհի տանել նրան, ում Մոռոլտը սիրում էր ավելի, քան մյուս բոլոր աղջիկներին:

— Ոչ, արքայադուստր, — ասաց Տրիստանը, — մի օր, երկու ծիծեռնակ թռան մինչև Տինտածել՝ այնտեղ տանելու համար քո ոսկյա վարսերից մեկը: Ես կարծեցի, որ նրանք եկել էին ինձ ավտելու սեր և խաղաղություն: Ահա թե ինչու ծովն անցնելով, եկա քեզ որոնելու: Ահա թե ինչու դիմագրավեցի վիշապին ու նրա թույնը: Նայիր իմ միջնագգեստի ոսկյա թելերի միջև կարված այս մագին: Ոսկե թելերի գույնը խունացել է, բայց մագի ոսկին չի գունաթափվել:

Իզոդրան մի կողմ շարեց մեծ թուրը և ձեռքը վերցրեց Տրիստանի միջնագգեստը: Հյուսվածքի միջից գտավ ոսկե

մագը և երկար լուեց: Հետո համբուրեց հյուրի շրթունքներն ի նշան հաշտության, և նրան զգեստավորեց շքեղ հանդերձանքով:

Բարոնների հավաքույթի օրը, Տրիստանը Պերիսիսիս՝ Իզոդրայի սպասավորին, գաղտնաբար ողորկեց իր նավը՝ ընկերներին կարգադրելու, որ ներկայանան արքունիք՝ գուգված, ինչպես վայել է մեծահարուստ թագավորի պառզամավորներին, քանզի հույս ուներ, որ այդ օրն իսկ ինքը կավարտի ստանձնած գործը: Գորվեճալը և հարչուր ասպետները արդեն չորս օր էր, ինչ ողբում էին Տրիստանի կորուստը, ուստի հրճվեցին այդ ավտոխն ստանալով:

Մեկ առ մեկ մտան այն սրահը, որտեղ արդեն հավաքվել էին Խոլանդիայի անթիվ բարոններ: Մտան ու միահավասար նստեցին միևնույն շարքում: Եվ ադամանդները շողշողում էին մետաքսյա, շքեղ, ծիրանագույն ու կարմրավառ զգեստների երկարությամբ: Խոլանդացիները միմյանց հարցնում էին. «Ովքե՞ր են այս հիանալի ազնվականները, ո՞վ է նրանց ճանաչում: Նայեցեք շքեղափայլ թիկնոցներին՝ ոսկեհյուս ու սամուրագարդ: Նայեցեք, թե ինչպես թրերի դասասկներին ու մուշտակների ճարմանդներին փաչվիրում են ստոսակները, փիրուզները, գմբոխոնները և այնքան թանկագին քարեր, որոնց անունները չգիտենք: Ո՞վ է տեսել երբևէ այսպիսի վեհաշուք պերճանք: Որտեղի՞ց են գալիս այս ազնվականները: Ո՞ւմ հուպարակներն են նրանք»: Բայց հարչուր ասպետները լուր էին, և ով էլ որ ներս էր մտնում, չէին շարժվում իրենց աթոռներից:

Երբ Խոլանդիայի թագավորը նստեց արքայական հովանու տակ, Ազինգեոսն Կարմրաչեկն առաջարկեց վկաների միջոցով սպացուցել ու մեղամարտով հավաստիացնել, որ

ինքն է սպանել վիշապին, և որ Իզոլդան պիտի տան իրեն: Այնժամ, Իզոլդան խոնարհիվեց հոր առջև և ասաց.

— Արքա, այստեղ կա մի մարդ, որ հավակնում է մեղադրելու արքունի արդարադատության նախարարին ստի ու խարդավանքի մեջ: Այդ մարդուն, որը պատրաստ է ապացուցել, որ ինքն է ազատել երկիրը աղետից, և այն որ ձեր դուստրը չպետք է անձնատուր լինի մի վախկոտի, այդ մարդուն խոստանո՞ւմ եք ներել նրա հին հանցանքները, որքան էլ մեծ լինեն դրանք, խոստանո՞ւմ եք շնորհել հաշտություն ու ներողամտություն:

Թագավորը խորհում էր և չէր շտապում պատասխանել: Բայց բարոնները խմբովին բացականչեցին.

— Շնորհեցե՛ք, արքա, շնորհեցե՛ք:

Արքան ասաց.

— Եվ ես շնորհում եմ:

Բայց Իզոլդան ծնրադրեց նրա ոտքերի առջև.

— Հայր, նախ՝ ինձ տվեք ներման ու հաշտության համբույրը ի նշան այն բանի, որ դուք նույնպես համբուրելու եք այդ մարդուն:

Համբույրն ստանալուց հետո, գնաց Տրիստանին բերելու և ձեռքից բռնած՝ ներս առաջնորդեց: Նրա ներս մտնելուն պես հարյուր ասպետները միաժամանակ ոտքի ելան ու ձեռքները խաչաձևելով կրծքներին, ողջունեցին ու շարվեցին կողքին: Եվ իուլանդացիները տեսան, որ Տրիստանն էր դրանց իշխանը: Բայց այնժամ մի բանիսը նրան ճանաչեցին, և թնդաց մի բարձր սղաղակ՝ «Սա Տրիստան դը Կոռնուան է, սա Մոռլոտին սպանողն է»: Մերկացած թրերը շողջողացին, և կատաղի ձայներ կրկնում էին՝ թող մեռնի:

Բայց Իզոլդան բացականչեց.

— Արքա, համբուրիր այս մարդու շրթունքները, այնպես, ինչպես դու խոստացար:

Թագավորը համբուրեց նրա շրթունքները, և ժխորը մարեց:

Այնժամ, Տրիստանը ցույց տվեց վիշապի լեզուն և մեղամարտի կանչեց արքունի արդարադատության նախարարին, որը չհամարձակվեց ընդունել և խոստովանեց իր խաբեպաշտությունը: Հետո այսպես խոսեց Տրիստանը.

— Մեկիորներ, ես Մոռլոտին սպանել եմ, բայց և անցել եմ ծովը՝ ձեզ մատուցելու արժանի փոխհատուցում: Չարագործությունը քափելու համար իմ կյանքը վտանգի ենթարկեցի և երկիրն ազատեցի վիշապից: Այդպիսով, նվաճեցի չքնադազեղ Ռուկեներ Իզոլդային: Եվ քանի որ նվաճեցի, ուրեմն, իմ նավը կտանի նրան: Բայց որպեսզի սերը, և ոչ թե ատելությունը, սփույի Իոլանդիայի և Կոռնուայի միջև, իմացեք, որ Մարկ թագավորը՝ իմ սիրելի տերը, ամուսնաձայն է Իզոլդայի հետ: Նայեցեք, այստեղ են ազնվագարն հարյուր ասպետներ, որոնք պատրաստ են երդվելու սրբերի մատուցներով, որ Մարկ թագավորը, ձեզ կոչ անելով ընդառաջ գնալ դեպի սերն ու խաղաղությունը, ցանկանում է մեծարել Իզոլդային, որպես իր սիրելի կնոջ, և Կոռնուայի բոլոր բնակիչները նրան կծառայեն, ինչպես իրենց տիրուհուն ու թագուհուն:

Մեծագույն ուրախությամբ բերեցին սուրբ մատուցները, և հարյուր ասպետները երդվեցին, որ նա ասել է ճշմարտությունը:

Արքան բռնեց Իզոլդայի ձեռքը և հարցրեց Տրիստանին, թե արդյոք ազնվորեն պիտի առաջնորդի՝ իր տիրոջ մոտ: Հարյուր ասպետների և Իոլանդիայի բարոնների ներկայու-



թշամբ Տրիստանը երդվեց: Ոսկեհեր Իզոլդան դողում էր անոթից ու տազնապից: «Ուրեմն, Տրիստանը, ինձ նվաճելուց հետո, արհամարհում է: Ոսկե մազի գեղեցիկ հեքիաթը կեղծիք էր միայն, և նա ինձ հանձնում է մեկ ուրիշին...»: Արքան Իզոլդայի աջ ձեռքը դրեց Տրիստանի աջ ձեռքի մեջ, և Տրիստանն այն պահեց ի նշան այն քանի, որ նրան տիրանում է Կոռնուայի արքայի անունից:

Այսպիսով, հանուն այն սիրո, որ տաժում էր դեպի Մարկ թագավորը, Տրիստանը, ուժով ու խորամանկությամբ, ի կատար ածեց ոսկե վարսերով թագուհու որոնումն ու նվաճումը:

#### Գ Լ Ո Ւ Խ IV

#### ՍԻՐՈ ԸՄՊԵԼԻՔԸ

Ոչ, գիճի չեր դա,  
Թեև նման էր գիճու:  
Խմիչք էր դա հզոր՝  
Տազնապն անվսխճան,  
Որից նրանք մահացան:  
(Գոթֆրիդ դը Մարագրորգ)

Երբ մոտեցավ ժամանակը Իզոլդային հանձնելու Կոռնուայի սապետներին, նրա մայրը քաղեց խոտեր, ծաղիկներ և արմտիք, դրանք խառնեց գիճու մեջ և պատրաստեց մի հզոր ըմպելիք: Հմայության ու կախարդանքի իմացությամբ պատրաստված այդ ըմպելիքը լցրեց սափորի մեջ և գաղտնաբար Բրանժիենին ասաց.

— Աղջիկ, Իզոլդայի հետ դու պետք է գնաս Մարկ թագավորի երկիրը, քանի որ հավատարիմ սիրով սիրում ես նրան: Վերցրո՛ւ, ուրեմն, այս գիճու սափորը, և խոսքերս միտդ պահիր: Սափորն այնպես թաքցրու, որ ոչ մի աչք չտեսնի, և ոչ մի շրթունք դրանով չթրջվի: Բայց երբ իջնի հարսնության գիշերը, նորապսակներին միայնակ թողնելուց առաջ, այս բուսախառն գիճին կցնես գավաթի մեջ, կմատուցես Մարկ թագավորին և Իզոլդա թագուհուն, որպեսզի այն դատարկեն միասին: Հետևի՛ր, աղջիկս, որ միայն նրանք համոտեսն այս խմիչքը, քանզի դրա զորությունն այնպիսին է, որ ովքեր խմեն միասին, իրար սիրելու են ամբողջապես, զգալախոտվք, սիրուն ու հոգին բոլորանվեր, առհավետ և՛ կյանքի բովում, և՛ մահվան մեջ:

Բրանժիենը թագուհուն խոստացավ ի կատար ածել նրա կամքն ու ցանկությունը:

Խորունկ ալիքները ճեղքելով՝ նավը տանում էր Իզոլդային: Բայց ինչքան հեռանում էր Իովանդիայի հողից, այնքան տխրագին էր հնչում երիտասարդ աղջկա տրտուճը: Նստած վրանում, ուր առանձնացել էր նաժիշտ Բրանժիենի հետ, լալիս էր նա՝ կարոտելով իր երկիրը: Ո՛ր էին տանում իրեն այդ օտարականները, ո՛ւմ մոտ էին տանում, ինչպիսի՞ նակատագրի դեմհանդիման: Երբ Տրիստանը մոտենում էր Իզոլդային և ուզում էր սփոփել անուշ խոսքերով, արքայադուստրը զայրանում ու ետ էր վանում նրան, և սիրուն աղջկական փքվում էր ստելությունից: Եկել էր Տրիստանը, նա՛ հափշտակողը, նա՛ Մոռոտիսի սպանողը: Խորամանկություններով խել էր մորից ու երկրից: Չբարեհաճեց կնության ամուսնել և ահա ջրերի վրայով թշնամի երկիր էր տանում որպես ավար: «Ի՛նչ դժբախտն եմ ես,—

ասում էր ինքն իրեն, — անթծյալ լինի այն ծովը, որն ինձ տանում է, երանի մեռնելի այն հողին, որի վրա ծնվել եմ, միայն թե չապրեի այն օտար երկրում...»

Մի օր քամիները չքացան, և ստագաստները կախ ընկան կայմերն ի վար: Տրիստանը հրամայեց խարիսխ գցել կղզու ափին, և ծովից ձանձրացած հարյուր կոռնուացի սուպետներն ու նավաստիներն ափ դուրս եկան: Միայն Իզոդան էր մնացել նավի վրա, ինչպես նաև մանկահասակ մի աղախին: Տրիստանը մոտեցավ թագուհուն և ջանում էր մեղմել նրա սրտի թախծը: Եվ քանի որ արևն այրում էր, ծարավել էին, ուստի խմել ուզեցին: Աղջնակն սկսեց խմիչք փնտրել և գտավ Իզոդայի մոր կողմից Բրանժիենին հանձնելված սափորը:

— Ես գիհի՞ եմ գտել, — բացականչեց:

Ոչ, դա գիհի չէր. կիրք էր, դառն ուրախություն, անասման տազնայ և մահ: Փոքրիկ աղախինը գալաթը լցրեց ու մատուցեց տիրուհուն: Մեկընդմեջ շունչ քաշելով՝ նա խմեց ազահորեն, հետո գալաթը պարզեց Տրիստանին, որը և այն դատարկեց մինչև հատակ:

Այդ պահին Բրանժիենը ներս մտավ և տեսավ, որ երկուսն իրար նայում են անբարբառ, ասես շվարած ու զմայլված: Տեսավ, որ նրանց սուսը դրված է համարյա դատարկված սափորն ու գալաթը: Վերցրեց սափորը, վազեց դեպի նավախելը և նետելով ափքների մեջ՝ մղկտաց.

— Ի՞նչ դժբախտն եմ ես: Անիծվի այն օրը, որ ծնվեցի և անիծվի այն օրը, որ այս նավը բարձրացա: Իզոդա, սիրելիս, և դուք՝ Տրիստան, այդ ձեր մահն է, որ խմեցիք:

Նավը կրկին պանում էր դեպի Տիևսաժեղ: Տրիստանին թվում էր, թե կենսունակ մի մորենի, սուր փշերով ու հոտա-

վետ ծաղիկներով, արմատներն է խրել յուր սրտի արշան մեջ և մարմինը, բոլոր մտքերն ու ամբողջ տենչանքը ամուր կապելով փաթաթել է Իզոդայի չքնաղ մարմնին: Նա խորհում էր. «Անդրեան, Դեմուալեն, Գեներոն և Գոնդոին, դուք, նեղգավորներդ, ինձ ամբաստանում էիք, որ ուզում եմ տիրանալ Մարկ թագավորի հողերին, ա՛հ, իմ ստորությունը խորն է առավել, և հողերը չէ, որ տենչում եմ ես: Միրելի մորեղբայր, դուք, որ ինձ՝ որբուկիս, սիրեցիք, դեռ չիմանալով, որ իմ երակներում հոտում էր ձեր քրոջ՝ Բլանչֆլյորի արյունը, դուք, որ այնպես գորովագին արտասվում էիք, երբ թևերի վրա ինձ տանում էիք դեպի անտառաատ ու անթօհակ նավակը, սիրելի մորեղբայր, ինչո՞ւ հենց սուսչին իսկ օրը, չվտարեցիք թափառական պատանուն, որը եկել էր դավաճանելու: Ա՛հ, մտքովս այդ ի՞նչ անցավ: Իզոդան ձեր կինն է, ես՝ հպատակ, Իզոդան ձեր կինն է, ես՝ որդի, Իզոդան ձեր կինն է և չի կարող ինձ սիրել»:

Իզոդան նրան սիրում էր: Թեև ուզում էր ասել: Չէ՞ որ Տրիստանը քամահրել էր ստորաբար: Ոգում էր ասել և չէր կարողանում ի՞ խորոց սրտի զաչքանալով մեջը ծառացող, սարսուռն այն քնքջանքի վրա, որն ավելի ցավագին էր, քան ասելությունը:

Բրանժիենը հետևում էր տազնաբահար, տատապելով դեռևս ավելի դաժանորեն, քանզի միայն ինքը գիտեր, թե ինչպիսի չարիք է պատճառել: Երկու օր լրտեսեց, տեսավ, որ նրանք հրաժարվում են ունեղիքից, ամեն քմպելիքից և ամենայն հանգստավետությունից, տեսավ, որ փնտրում են մեկմեկու, ինչպես կույրեր, որոնք խարխալելով գնում են իրար դեմհանդիման, դժբախտ, երբ հայտնաչ են լինում միմյան-

ցից հետո և էլ ավելի դժբախտ, երբ միասին են ու դողում են առաջին խոստովանության սուկումից:

Երբորդ օրը, մինչ Տրիստանը գալիս էր նալի կամրոջակին ամրացված վրանի կողմը, Իզոլդան, որ այնտեղ էր նստած, տեսնելով որ նա մոտենում է, համեստորեն ասաց.

— Մտեք, տե՛ր իմ:

— Թագուհի՛,— ասաց Տրիստանը,— ինչո՞ւ ինձ տեր անվանեցիք: Չէ՞ որ, ընդհակառակը, ես ձեր վասալն եմ, հպատակը՝ պատրաստ մեծարելու, ծառայելու և սիրելու, ինչպես իմ թագուհուն ու տիրուհուն:

Իզոլդան պատասխանեց.

— Ոչ, դու գիտես, որ ինքդ ես իմ իշխանը և տերը: Գիտես, որ քո զորությունն ինձ տիրում է, և ես քո ճորտուհին եմ: Ա՛հ, ինչո՞ւ այն ժամանակ բուժեցի վիրավոր սաքաացի խոցերը: Ինչո՞ւ փրկեցի վիշապն սպանողին, որ մեռնում էր նահանախի խոտերի մեջ: Ինչո՞ւ շխիեցի այն թրով, որ թափահարում էի նրա գլխին, երբ պառկած էր բաղնիքում: Ավա՛ղ, այն ժամանակ չգիտեի, ինչ այսօր գիտեմ:

— Իզոլդա, այսօր դուք այդ ի՞նչ գիտեք: Ի՞նչն է ձեզ տանջում:

— Ա՛հ, ինձ տանջում է այն ամենը, ինչ գիտեմ և այն ամենը, ինչ տեսնում եմ: Ինձ տանջում է այս երկինքը, և՛ այս ծովը, և՛ իմ մարմինը, և՛ իմ կյանքը:

Թեև դրեց Տրիստանի ուսին, արցունքները մարեցին աչքերի շողերը, շրթունքները դողացին: Տրիստանը կրկնեց.

— Ի՞նչն է ձեզ տանջում, հարազա՛տ իմ:

Նա պատասխանեց.

— Քո սերը:



## ԲՐԱՆԺԻԵՆԸ ՀԱՆԶԵՎԱԾ ԾՈՐՏԵՐԻՆ

Բարձրաթեք էին շապիկները,  
 Որ հանձնել էր մեզ մայրն Իզոլդայի,  
 Բայց նա պատուեց շապիկն իր հարսնության,  
 Եվ այն գիշերը, ես ինք տալի նրա փոխարեն:  
 (Ռամբո, կոմս դ'Օրանժ<sup>1</sup>)

Մարկ թագավորը ծովափին դիմապորեց Ոսկեհեր Իզոլդային: Տրիստանը բռնեց ձեռքից և առաջնորդեց արքայի մոտ: Արքան էլ ընդունեց՝ յուր հերթին ձեռքը բռնելով: Մեծաշուք հանդիսավորությամբ առաջնորդեց դեպի Տիևուս-ժեյի դղյակը, և երբ Իզոլդան հայտնվեց արահում համախմբված վասալների առաջ, նրա գեղեցկությունն այնպես փայլատակեց, որ պատերը լուսավորվեցին, ինչպես վաղորդյան արեգակի ճառագայթներից: Այնժամ, Մարկ թագավորը զովաբանեց ծիծեռնակներին, որոնք ի նշան գալիք հարսանյաց՝ լուսամտից ներս թռան՝ կտուցներին ոսկեղեն մազը: Գովաբանեց Տրիստանին և այն հարչուր ասպետներին, որոնք արկածների միջով Տիևուսժեյ բերեցին իր աչքերի ու սրտի ուրախությունը: Ավա՛ղ, ձեզ համար նույնպես, ազնիվ արքա, նախը բերել է դառը վիշտ ու խորին ստառապանքներ:

Տասնութե օր անց, համախմբելով բոլոր բարոններից, նա կնության վերցրեց Ոսկեհեր Իզոլդային: Բայց երբ գիշերն

Այնժամ, Տրիստանը շուրթերը սեղմեց Իզոլդայի շուրթերին:

Եվ մինչ երկուսն էլ առաջին անգամ ճաշակում էին սիրո հրճվանքը, Բրանժիենը, որ լրտեսում էր, ճիչ արձակեց և թևատարած, արտասովալի նետովեց նրանց ոտքերի առաջ:

— Դժբախտներ, կա՛նգ առեք և ե՛տ շրջվեք դեպի անցյալը, եթե դեռ կարող եք: Բայց, ո՛չ, անվերադարձ է ողին, սիրո զորությունն արդեն քշելով տանում է ձեզ, և այլևս չի լինելու ուրախություն առանց վշտի: Բուսախառն գինին է տիրակալը, սիրո ըմպելիքը, որ վատահել էր ինձ ձեր մայրը, Իզոլդա: Մարկ թագավորը, միայն նա, ձեզ հետ պիտի խմեր այդ գինին: Բայց ստոսանան երեքիս էլ խաբեց, և դուք դատարկեցիք գավաթը: Տրիստան, իմ բարեկամ, Իզոլդա, սիրելիս, քանի որ չպահպանեցի սիրո ըմպելիքը, ուրեմն եղա պարտագանց, ուստի դուք իրավասու եք տնօրինելու իմ անձն ու կյանքը, քանզի իմն էր հանցանքը, երբ անհիծյալ գավաթից խմեցիք և՛ սեր, և՛ մահ:

Սիրահարները գրկախառնվեցին, և կյանքի, տենչանքի սարսուռներով էին ջերմանում հույսկապ մարմինները: Տրիստանն ասաց.

— Ուրեմն, թող գա այդ մահը:

Եվ երբ իջավ երեկոն, նավի վրա, որն ավելի ու ավելի արագ էր պլանում դեպի Մարկ թագավորի երկիրը, առհավետ կապված մեկմեկու, նրանք անձնատուր եղան սիրո վայելքին:

<sup>1</sup> Բնաբանը վերցված է պրովանսի տրուբադուր, կոմս դ'Օրանժի (մահացած 1173 թ.) թատերախաղից:

իջավ, թագուհու պատվագրկությունը քողարկելու և նրան մահից փրկելու համար Բրանժիենը մտավ հարսանեկան մահինը: Սիրո ըմպելիքն անփույթ պահպանելու հանցանքը քավելով, ընկերուհու նկատմամբ տաժաժ սիրուց, նա՛ հավատարիմը հավատարիմներից, զոհաբերեց իր մարմնի կուսությունը: Գիշերվա խավարը թաքցրեց արքայից խարդախությունն ու ամոթը:

Աքաբասացներն այս տեղում պնդում են, որ Բրանժիենը ծով չենտեց բուսախառը գիճու սափորը, որն իբրև թե ամբողջապես դատարկված չէր սիրահարների կողմից, և որ առավոտյան, երբ տիրուհին յուր հերթին մտավ Մարկ թագավորի անկողինը, Բրանժիենը զավաթի մեջ լցրեց այն, ինչ մնում էր սիրո ըմպելիքից և մատուցեց ամուսիններին, և որ Մարկը ազահույությամբ խմեց, մինչ Իզոլդան իր բաժինը թափեց գաղտագողի: Բայց իմացած եղեք, սեճիորներ, որ այդ ասքաբասացներն աղավաղել են պատմությունը և այն խեղաթուրել: Եթե հորինել են այդ սուտը, ապա պատճառն այն է, որ չեն կարողացել հասկանալ այն հրաշալի սերը, որ Մարկ թագավորը մշտապես տաժեց թագուհու նկատմամբ: Անշուշտ, ինչպես շուտով դուք այդ կիմանաք, երբեք, հակառակ տազնապին, տառապանքին և ահավոր վրեժխնդրություններին՝ Մարկը երբեք չկարողացավ իր սրտից վանել ո՛չ Իզոլդային, ո՛չ Տրիստանին: Բայց իմացած եղեք, սեճիորներ, որ նա չիմեց բուսախառը գիճին: Ոչ թույն, ոչ կախարդանք, լոկ վեսն սրտի քնքշությունն էր, որ սեր ներշնչեց նրան:

Իզոլդան թագուհի է, և թվում է երջանիկ: Իզոլդան թագուհի է և ապրում է վշտահար: Իզոլդան վայելում է Մարկ

թագավորի գուրգուրանքը, քարոհների հարգանքը, և հասարակ մարդիկ նույնպես պաշտում են նրան: Իզոլդան օրն անցկացնում է շքեղորեն նկարագարով, ծաղկատառ սենյակներում: Իզոլդան ունի թանկագին քարեր, ծիրանագույն հյուսվածքներ, Թեոսալիայից բերված գորգեր. նա շրջապատված է տրուբադուրների երգերով ու տավիղների նվագով. ունի վարագույրներ, որոնց վրա նախշված են ընձառյուծներ, արծիվներ, թութակներ, անտառաբնակ ու ծովային անհամար կենդանիներ: Իզոլդան ունի կրքոտ ու քնքուշ հույզեր, և իր մոտ կարող է կանչել Տրիստանին, երբ կամենա, թե՛ ցերեկը, թե՛ գիշերը, քանզի մեծ իշխանների սովորության համաձայն, նրա սիրասունը քնում է արքայալուսն սեղանկում, հավատարիմների և արտոնչալների հետ: Իզոլդան, ասկայն, դողդողում է: Ինչո՞ւ դողդողալ: Թաքուն չի՞ պահում արդյոք նա իր սերը: Ո՞վ կկասկածի Տրիստանի վրա: Ո՞վ կկասկածի արդյոք որդու վրա: Ո՞վ է տեսնում: Ո՞վ է լրտեսում: Ո՞վ է վկան: Այո՛, կա մի վկա, որ լրտեսում է: Բրանժիենը հետևում է: Միայն Բրանժիենը գիտի սիրային կյանքի գաղտնիքը: Իզոլդան նրա ճանկերի մեջ է: Աստվա՛ծ իմ, եթե Բրանժիենը հանկարծ ձանձրանա, քանց աղախին, ամեն օր պատրաստել այն անկողինը, որտեղ ինքն է առաջինը պսակել, և մատնի՛ հայտնելով արքային: Եթե Տրիստանը մահանա Բրանժիենի խարդախանքից... Այսպես, վախը թագուհուն դարձնում է մտամոլոր ու տազնապահար: Ո՛չ, Իզոլդայի մտառանշության ակունքը հավատարիմ Բրանժիենը չէ: Սեփական սրտի կասկածներից է, որ մորմոքվում է նա: Լսեցե՛ք, սեճիորներ, թագուհու նյութած մեծագույն դավաճանությունը, բայց աստված, ինչպես

շուտով կհմանաք, խղճաց նրան, և դուք նույնպես եղեք նե-  
րողամիտ:

Այդ օրը Տրիստանն ու արքան որսի էին գնացել հեռու,  
և Տրիստանը չհմացավ այդ ոճրագործության մասին: Իզո-  
ղան կանչել տվեց երկու ճորտի և խոստացավ ազատություն  
ու վաթսուն տաղանդ բյուզանդական ոսկի, եթե երդվեն կա-  
տարել իր ցանկությունը: Երդվեցին:

— Ես ձեզ, ուրեմն, կհանձնեմ մի երիտասարդ աղջիկ, —  
ասաց թագուհին, — կտանեք անտառ՝ մոտիկ թե հեռու, բայց  
այնպիսի վայր, որտեղ ոչ ոք երբեք չհասնուաքերի իրողու-  
թյունը. այնտեղ կապանեք և ինձ կրեքեք նրա լեզուն: Լավ  
հիշեցեք այն խոսքերը, որ ձեզ կասի, որպեսզի ինձ մոտ  
կրկնեք այդ ամենը: Գնացեք, ձեր վերադարձին կլինեք ազատ  
և հարուստ:

Հեռու կանչեց Բրանժիենին.

— Միրելիս, տեսնում ես, թե ինչպես հյուժվում եմ ու  
տանջվում. դու չե՞ս գնա անտառ բույսեր քերելու իմ ցալի  
դարմանի համար: Այստեղ երկու ճորտ կա, որոնք քեզ կա-  
ռաչնորդեն. նրանք գիտեն, թե որտեղ են աճում բույսի խո-  
տերը: Հետևեքը գնա, և լավ իմացիր, քույրիկ, որ եթե քեզ  
եմ անտառ ուղարկում, ուրեմն բանը վերաբերում է իմ  
հանգստությանն ու կյանքին:

Ճորտերը նրան տարան: Հասնելով անտառ՝ Բրանժիենն  
ուզեց կանգ առնել, քանզի շրջապատում աճել էին բազա-  
րաբ չափով առողջարար խոտեր: Բայց նրան տարան ավելի  
հեռու:

— Ե՛կ, ջահել աղջիկ, այստեղ չե՞ ամենահարմարը:

Ճորտերից մեկը բացում էր առջևից, մյուսը՝ ետևից: Ոչ  
մի արանեա չի երևում, լույ տառաակ, մորեճի և ուղաաիւմշ

խառնված են իրարու: Այնժամ, այն մարդը, որն առջևից էր  
գնում, թուրը դուրս քաշեց ու շրջվեց: Աղջիկը նետվեց դեպի  
մյուս ճորտը՝ օգնություն հայցելու. նա ևս մերկացրել էր  
թուրը, այսպես ասաց.

— Չափե՛լ աղջիկ, քեզ պետք է սպանենք:

Բրանժիենն ընկավ խոտին, և նրա թևերը փորձում էին  
վանել թրի սայրերը: Գիտություն էր հայցում այնպիսի մեղմ  
ու խղճալի ձայնով, որ ճորտերն ասացին.

— Չափե՛լ աղջիկ, եթե Իզոլդա թագուհին՝ քո և մեր տի-  
րուհին, ցանկանում է, որ դու մահանաս, ուրեմն անկա-  
կած, նրան ինչ-որ մեծ վնաս ես հասցրել:

Բրանժիենը պատասխանեց.

— Ես չգիտեմ, բարեկամներ, և հիշում եմ լույ մի հան-  
ցանք: Երբ Իզոլանդիայից հեռացանք, և՛ ես, և՛ նա մեզ հետ  
վերցրինք, որպես զարդագեղատներից ամենաթանկագինը,  
մի-մի ձյունաայիտակ շապիկ հարսնության գիշերվա հա-  
մար: Ծովի վրա պատահեց այնպես, որ Իզոլդան պատռեց  
իր հարսնության շապիկը, և ամուսնության գիշերը ես ինը  
տոլի նրա փոխարեն: Բարեկամներ, ահա այն ամբողջ հան-  
ցանքը, որ գործել եմ: Բայց եթե նա ուզում է՝ ես մեռնեմ,  
ասացեք, որ իրեն հղում եմ ողջույն և սեր, և որ շնորհա-  
կալ եմ ամեն լավի ու պատվավորի համար, որ արել է այն  
ժամանակվանից, երբ մահուկ հասակում ինձ հափշտակած  
ծովահեճները վաճառեցին, և մոր կարգադրությամբ ես կոչ-  
ված եղա նրան ծառայելու: Թող աստված բարին կատարի՝  
պահպանելով թագուհու պատիվը, առողջությունը և կյանքը:  
Իսկ այժմ հարվածեցեք, եղբայրներ:

Ճորտերը խղճահարվեցին: Խորհուրդ արեցին, և դատե-  
լով, որ այդպիսի հանցանքի համար մահապատիժն անար-

դարացի է, Բրանժիենին կապեցին մի ծառի: Այնուհետև  
սպանեցին մի շնիկ. արանցից մեկը կտրեց լեզուն, պահեց  
թիկնոցի քղանցքի տակ, և աշդպես երկուսով հայտնվեցին  
Իզոլդայի առջև:

— Արդյոք նա խոսե՞ց,— հարցրեց Իզոլդան մտահոգ:

— Այո՛, թագուհի, խոսեց: Ասաց, որ զայրացել էիք մի-  
այն մի հանցանքի պատճառով. դուք ծովի վրա պատռել էիք  
մի ձյունաձերմակ շապիկ, որ բերել էիք Իդյանդիայից, և  
հարսանյաց գիշերը նա փոխ էր տվել իրենը: Ահա այդ է,  
ասում էր, իր միակ հանցանքը: Երախտագիտություն հայտ-  
նեց մանկուց սուսցած բարեգործությունների համար և աստ-  
ծուն աղոթեց, որ պահպանի ձեր պատիվն ու կյանքը: Նա  
հղում է ողջույն և սեր: Թագուհի, ահա բերել ենք լեզուն:

— Մարդասպաններ,— ճչաց Իզոլդան,— վերադարձրեք  
Բրանժիենին՝ իմ սիրելի անժիշտին: Չգիտեի՞ք, որ նա էր իմ  
միակ բարեկամը: Մարդասպաններ, վերադարձրեք արան:

— Թագուհի, ճշմարիտ են ասում. «Կինը արագափոխիկ  
է մի ժամից մյուսը: Համարյա միաժամանակ ծիծաղում է,  
լալիս, սիրում է, ասում»: Մենք արան սպանել ենք, քանի  
որ դուք այդ հրամայել էիք:

— Ինչպե՞ս թե ես այդ հրամայել եմ: Ո՞ր մի չարագոր-  
ծության համար: Մի՞թե Բրանժիենը չէր իմ սիրելի ընկե-  
րուհին՝ անուշիկ, հավատարիմ ու գեղեցիկ: Դուք այդ գի-  
տեիք, մարդասպաններ. ողարկեցի բուժիչ խոտեր ճարե-  
լու, հրամայեցի, որ պահպանեք ճանապարհին: Այո՛, ես  
կասեմ, որ սպանել եք, և ձեզ կայրեն ածուխների վրա:

— Թագուհի, արդ իմացեք, ուրեմն, որ Բրանժիենը կեն-  
դանի է, մենք արան ողջ-ստողջ ետ կբերենք:

Բայց Իզոլդան չէր հավատում և, ցնորվածի նման, փոխ-

նիփոխ անիծում էր մեկ՝ մարդասպաններին, մեկ՝ ինքն իրեն:  
Մտալ պահեց ճորտերից մեկին, մինչ մյուսն շտապում էր  
դեպի այն ծառը, որին կապկպված էր Բրանժիենը:

— Գեղեցկուհի, ասոված շնորհ արեց, և ահա տիրուհին  
ձեզ ճորից կանչում է:

Հայտնվելով Իզոլդայի առջև՝ Բրանժիենը ծնրադրեց և  
թողություն խնդրեց իր հանցանքների համար. բայց թագու-  
հին նույնպես ծնրադրել էր նրա սոջև, և երկուսը գրկա-  
խառնված, երկար զեղում էին իրենց հույզերը:

## Գ Լ Ո Ւ Ջ Վ I

### ՄԵԾ ՍՈԾԻՆ

Իզոլդա, իմ սեր, Իզոլդա բարեկամ,  
Գու ես իմ մահը, իմ կյանքը դու ես:  
(Գործրիդ դը Ստրագբուրգ)

Ոչ թե հավատարիմ Բրանժիենից, այլ հենց իրենք իրեն-  
ցից պետք է զգուշ լինեն սիրահարները: Բայց սիրուն ինչ-  
պե՞ս զգոն լինի, երբ սիրուց է հարբել: Սերը նեղում, հա-  
լածում է արանց, ինչպես ծարավը դեպի գետակն է մղում  
մահախերձ եղևիկին: Կամ աշդպիսին է որսաբազեն, որը  
երկարատև ծոմից հետո հանկարծակի ազատ արձակվելով՝  
խոչանում է ալյարի վրա: Ավա՛ղ, սերը թաքցնել հնարավոր  
չէ: Անշուշտ, Բրանժիենի աշարջության շնորհիվ, ոչ ոք  
անակնկալի չբերեց թագուհուն, երբ վայելքի մեջ էր սիրե-  
ցյալի գրկում: Բայց ամեն բույս, ամենուրեք, ամեն ոք չի՞  
տեսնում, թե ինչպես տենչանքը արանց խոտվում է, սեղմում

է, հորդում է բոլոր զգայարաններից, ինչպես մահաւում է արտահոսում կարասից:

Արդեւ թագուհու շուրջն են թափառում արքունի չորս դավադիրները, որոնք Տրիստանին ստում են՝ նախանձելով արիությանը: Արդեւ գիտեն ճշմարտությունը նրա սիրային տենչանքների մասին: Եվ ընչաքաղցությունը, ատելությունը, չարախնդրությունը ետում են նրանց երակներում: Լուրը կհայտնեն թագավորին և ականատես կլինեն, թե սերն ինչպես կայլափոխվի ցասումի, թե ինչպես Տրիստանին կարտաքսեն կամ կդատապարտեն մահվան և թե ինչպես թագուհին տանջամահ կլինի: Նրանք, սակայն, վախենում էին Տրիստանի զայրուքից, բայց, ի վերջո, ատելությունը սանձահարեց անը, և մի օր, չորս բարոնները Մարկ թագավորին հրավիրեցին խորհրդակցության, ու Անդրեան ասաց.

— Ազնիվ արքա, անկասկած քո սիրտը զայրուքով է լրցվելու, և դա մեզ՝ չորսիս, պիտի վշտացնի: Բայց մենք պարտավոր ենք հայտնել այն, ինչ հայտնաբերել ենք: Գու սիրտը վատահել եւ Տրիստանին, իսկ նա ուզում է քեզ պատվազրկել: Ապարդյուն զգուշացնում էինք, որ ի սեր մեն մի մարդու՝ վաչել չէ քամահրել մյուս ազգականներին, ողջ բարոնական դասը և լքել մեզ՝ բոլորիս: Իմացիր, ուրեմն, որ Տրիստանը սիրում է թագուհուն. ապացուցված ճշմարտություն է, և այդ մասին արդեւ խոսում են:

Ազնիվ թագավորը ցնցվեց և պատասխանեց.

— Ստոր արարած, այս ի՞նչ խարդավանք եւ մոգոնել: Իհարկե, ես իմ սիրտը վատահել եմ Տրիստանին: Այն օրը, Մոռտյոը ձեզ կանչում էր մենամարտի, դուք բոլորդ դողահար կախել էիք գլուխներդ և պապանձվել համրերի նրման, բայց Տրիստանը, այս հողի պատիվը փրկելու հա-

մար, ի գեւ ելավ, և նրա հոգին կարող էր դուրս թռչել ստացած ամեն մի վերքից: Ահա թե ինչու դուք ստում եք, և անհա թե ինչու ես սիրում եմ նրան ավելի, քան քեզ՝ Անդրեան, ավելի քան ձեզ՝ բոլորիդ, ու բոլորից առավել: Մակայն ասացեք, տեսնեմ, այդ ի՞նչ եք հայտնաբերել, ի՞նչ եք տեսել, ի՞նչ եք լսել:

— Փաստորեւ ոչինչ, տեր, ոչինչ այնպիսին, որ կարողանան տեսնել քո աչքերը, ոչինչ այնպիսին, որ կարողանան լսել քո ականջները: Նաչիր, ունկնդրիր, ազնիվ տեր, գուցե դեռ բոլորովին ուշ չէ:

Եվ հեռանալով, թողեցին, որ նա կամաց-կամաց ճաշակի կասկածի թույնը:

Մարկ թագավորը չկարողացավ իրենից հեռու վանել սեւեռուն չարափվությունը: Եվ ինքը ևս, իր իսկ կամքին հակառակ, լրտեսեց քրոջորդուն, լրտեսեց թագուհուն: Սակայն Բրանծիենն այդ նկատեց, նրանց զգուշացրեց, և թագավորն, իզուր, խորամանկություններով փորձեց ստուգել Իզոլդային: Ծուռով ընդվզեց իրեն անարժան այդ պաշքարից և, հասկանալով, որ չպիտի կարողանա կասկածը ցրել, կանչել տվեց Տրիստանին ու ասաց.

— Տրիստան, հեռացիր այս դղչակից և, երբ հեռացած կլինես, մի հանդգնիր վերադառնալ ու անցնել պարիսպներն ու խանդակները: Ստոր դավադիրները քեզ մեղադրում են սուկայի դավաճանության մեջ: Ինձ մի հարցրո, թե բանն ինչ է: Չեմ կարողանա հայտնել նրանց խոսքերը, ստանց մեզ՝ երկուսիս պատվազրկելու: Ամոքիչ խոսքեր մի՛ որոնիր. զգում եմ, որ լինելու են ապարդյուն: Այնուամենայնիվ, չեմ հավատում դավադիրներին. եթե հավատայի, քեզ արդեւ դատապարտած պիտի լինեի ամոթալի մահվան:



Բայց նրանց չարանենգ խոսքերը խոռվել են իմ սիրտը, և միայն քո հեռանալն ինձ կհանգստացնի: Մեկնի՛ր, ես, անկասկած, քեզ շուտով ետ կկանչեմ. մեկնիր, որդյակ իմ, դու միշտ սիրելի:

Լսելով այդ լուրը՝ դավադիրներն իրար ասացին.

— Նա գնաց, այդ կախարդը, վտարված, ինչպես անարգ մի գող: Ի՞նչ կարող է անել այսուհետև: Անկասկած, կանցնի ծովից այն կողմը՝ արկածներ որոնելու և իր նենգամիտ ծառայությունը մատուցելու որեիցե հեռավոր մի արքայի:

Ո՛չ, Տրիստանը հեռանալու ուժ չունեցավ, և երբ անցել էր արդեն բերդի խանդակներն ու պատնեշները, հասկացավ, որ ավելի հեռանալ ինքը չի կարողանա: Տրիստանը մնաց հենց Տիևտածելի ավանում և Գորվենալի հետ ապաստան գտավ մի ռամիկի տանը: Եվ հյուժվեց նա տեղից տանջահար, ավելի խոցված, քան այն օրերին, երբ Մոնոլտի նիգակը թունավորել էր մարմինը: Այն օրերին, երբ պատկած էր ծովափին կառուցված տնակում, և բոլորը փախչում էին վերքերի գարշահոտությունից, դեռևս երեք մարդ, այնուամենայնիվ, գտնվում էին կողքին՝ Գորվենալը, Դինաս դը Լիդանը և Մարկ թագավորը: Հիմա Գորվենալն ու Դինասը նորից կանգնած էին նրա սնարի մոտ, բայց Մարկ թագավորը չէր գալիս, և Տրիստանը հառաչում էր.

— Անշուշտ, սիրելի մորեղբայր, մարմինս այժմ արձակում է այնպիսի թույնի գարշահոտություն, որն ավելի զագրելի է, և ձեր սերն էլ չի կարողանում սանձահարել զրգվանքը:

Բայց տեղի սաստկության մեջ, խելահեղ ճծույզի նման, կիրքն անդադար նրան բշտ էր դեպի ամբակուտ աշտարակները, որոնք ներփակել էին թագուհուն. ճծույզն ու հեծ-

յալը զարնվում, ջարդվում էին քարակերտ պատերին, բայց ճծույզն ու հեծյալը կրկին ելնում էին ոտքի և անդադար վերսկսում էին միևնույն արշավը:

Ամբակուտ աշտարակների մեջ ներփակված՝ Ոսկեներ Իզողանն ևույնպես հյուժվում էր՝ դեռևս նրանից ավելի դրժբախտ, քանզի րոտեող օտարականներով շրջապատված՝ պետք է ամբողջ օրը ձևանա, որ ուրախ է և ծիծաղի, իսկ գիշերը, Մարկ թագավորի կողքին պատկած՝ անջարժության մեջ պետք է զսպի մարմնի խոռվքն ու տեղի ցնցումները: Նա ուզում է փախչել դեպի Տրիստանը: Իրեն թվում է, որ վեր է կենում և վազում է մինչև դուռը, բայց խափար շեֆքին դավադիրները մեծ թակարդներ են լարել: Նրբագեղ ծնկները դեմ են առնում սրածայր ու չարանենգ թրերին: Իրեն թվում է, որ ընկնում է, և անդամահատված ծնկներից երկու արնածոր աղբյուրներ են հորդում:

Ծոռով, սիրահարները պիտի մեռնեն, եթե ոչ ոք նրանց օգնության չհասնի: Իսկ ո՛վ պիտի օգնի, եթե ոչ Բրանժիենը: Կյանքի գնով գաղտագողի սողուկել է այն տունը, որտեղ հյուժվում է Տրիստանը: Գորվենալը հրճվանքի մեջ բացում է դուռը նրա սոջև, և սիրահարներին փրկելու համար Բրանժիենը մի հնարք է սովորեցնում Տրիստանին:

Ոչ, սեփորներ, դուք երբեք լսած չեք լինի այդքան նրբամիտ սիրալին հնարքի մասին:

Տիևտածելի դոյակի ետևում ծավալվում էր մի ընդարձակ պտղատու այգի, որը շրջապատված էր ամրապինդ ցցապատնեշներով: Այնտեղ աճում էին անթիվ գեղեցիկ ծառեր՝ ծանրացած մրգերով ու անուշաբույր ողկույզներով, որոնց շուրջ թռչումներ էին ծվլում: Ամենահեռավոր մասում, ընդ-

հույ ցցապատուներին մոտիկ, ուղիղ և բարձր աճել էր մի սոճի, որն ամրակազմ բնի վրա կրում էր փարթամ ճյուղավորություն: Ստորոտին աղբյուր կար աշխույժ, որի ջուրը նախ՝ ջինջ ու հանդարտ ձևավորվում էր լայն ու շքեղ ավազանի մեջ, որի եզերքը մարմարակերտ էր ու եղեգնապատ, ապա՝ երկու ափերի միջև սեղմված՝ վազում էր պողպայգու մեջ և դրչակն իսկ ներթափանցելով, հոսում էր կանաճնց հարկաբաժնի միջով:

Եվ այսպես, ամեն երեկո, Բրանժիենի խորհուրդների համաձայն, Տրիստանը ճարտարորեն կտրատում էր ծառի կեղևներ և մանր-մունր ճյուղեր: Նա անցնում էր սրածայր ցցապատուների վրայով և, հասնելով սոճու տակ, տաշեղները նետում էր աղբյուրի մեջ: Փրփուրի պես թեթև՝ լողում էին ջրի երեսին և հոսում էին դեպի նա՝ Իզոլդան, որը կանաճնց հարկաբաժնում հետևում էր, թե այդ երբ պիտի հայտնվեն: Այն երեկոներին, երբ Բրանժիենը կարողանում էր շեղել դավադիրների և Մարկ թագավորի ուշադրությունը, Իզոլդան անմիջապես գալիս էր սիրեցչալի մոտ:

Գալիս էր թեթևաքայլ, բայց վախվորած, ամեն քայլափոխին ստուգելով, թե արդյոք դավադիրները դարան չէ՞ն մտել ծառերի ետև: Բայց ահա նրան տեսնելուն պես՝ Տրիստանը գրկաբաց պանում է ընդատաշ: Այնժամ, գիշերային խավարը և մեծ սոճու մտերիմ սուվերը պահապան են դառնում սիրահարներին:

— Տրիստա՛ն,— ասում է թագուհին,— չէ՞ որ նավագները պնդում են, թե Տրիստանի դրչակը կախարդված է, և որ, տարին երկու անգամ, ձմռանը և ամռանը, դյուրանքով անհետանում է, դառնում անտեսանելի: Անհետացել է նա հիմա: Արդյոք սա այն հրաշալի պողպայգին չէ՞, որի

մասին հիշատակում են երգերի մեջ: Օդային պատվարն այն պարփակում է բոլոր կողմերից. ծաղկավետ ծառեր, հող բուրումնալի. հերոսը, չճերանալով, այստեղ ապրում է իր սիրուհու թևերի մեջ, և ոչ մի թշնամական ուժ չի կարող ջարդել օդային պատվարը:

Տիևտածելի աշտարակների վրայից արդեն հնչում են պահակագործի փողհարումները, որոնք ազդարարում են՝ բացվում է արշալույսը:

— Ո՛չ,— ասում է Տրիստանը,— օդային պատվարն արդեն փշրված է, և սա չէ հրաշալի պողպայգին: Բայց մի օր, սիրելիս, մենք միասին կգնանք այն երջանկավետ երկիրը, որտեղից ոչ ոք չի վերադառնում: Այնտեղ ձերմակ մարմարից դրչակ է կառուցված, որի հազար լուսամուտներից յուրաքանչյուրի վրա վառվող մոմ է շողողում. ամեն լուսամուտի մոտ ասքասաց կա, որ նվագում ու երգում է մի անվախճան մեղեդի: Արեգակն այնտեղ չի փալլում, և, սակայն, ոչ ոք չի կարոտում նրա լույսը. դա ապրող մարդկանց երջանիկ երկիրն է:

Բայց Տիևտածելի աշտարակների գազաթին այգաբացը լուսավորում է մեջընդմեջ դասավորված կանաչ ու երկնագույն քարային զանգվածները:

Իզոլդան նորից գտավ իր ուրախությունը. Մարկի կասկածը ցրվում է, իսկ դավադիրները, ընդհակառակը, հասկանում են, որ Տրիստանը հանդիպում է թագուհուն: Բրանժիենը, սակայն, այնքան լավ է հսկում, որ իզուր են լրտեսում: Վերջապես դուքս Անդրեալը, աստված նրան անիծի, ընկերներին ասաց.

— Սենիորներ, եկեք խորհուրդ հարցնենք սասպատավոր

գաճաճ Ֆրոսինից: Նա տիրապետում է յոթ արվեստների՝<sup>1</sup> կախարդանքին և դյութանքի ամեն տեսակ հնարներին: Ուզածդ երեխայի ծննդյան օրից գիտի այնպես զննել յոթ մոլորակների<sup>2</sup> և աստղերի ընթացքը, որ կանխագուշակում է նրա կյանքի բոլոր շրջադարձները: Բուգիբուսի և Նուարոնի<sup>3</sup> զորությամբ հայտնաբերում է գաղտնիքները: Եթե կամենա, մեզ կտվորեցնի մերկացնել Ոսկեհեր Իզոլդայի խորամանկությունները:

Ատելով գեղեցկությունն ու արիությունը՝ չարամիտ մարդուկը կախարդանքի տառանջաններ խզբզեց, դասավորեց մոգական բախտանիշեր, զննեց Օրիոնի և Լուցիֆերի ուղեծիրը, հետո ասաց.

— Ուրախ կացե՛ք, սիրելի սեմիորներ, այս գիշեր դուք նրանց կկարողանաք բռնել:

Կախարդին տարան արքայի մոտ:

— Տե՛ր իմ,— ասաց նա,— կարգադրեցե՛ք որսորդներին, որ բաց թողնեն որսաշների ոհմակը և թամբեն ձուլվենքը. հայտարարեցե՛ք, որ յոթ օր, յոթ գիշեր ապրելու էք անտառում որսորդությունը դեկավարելու համար: Եվ դուք ինձ

<sup>1</sup> Այդ յոթ արվեստներն են՝ քերականություն, տրամաբանություն, հետադրություն, թվաբանություն, երկրաչափություն, պատմություն և երաժշտություն, որոնք աշխարհիկ ուսուցման հիսնքն էին կազմում միջնադարում:

<sup>2</sup> Հնագույն աստղաբաշխության մեջ, ի տարբերություն անջարժ աստղերի, թափառող մոլորակները համարվում էին Արեգակը, Լուսինը, Մերկուրին, Վեներան, Մարսը, Յուպիտերը և Սատուրնը:

<sup>3</sup> Չարերի անուններ: Առաջինը հնչյունների միասնությունն է, երկրորդը՝ ճշմանակում է «սևուկ»:

տանջամահ արե՛ք, եթե այս գիշեր իսկ չլսե՛ք, թե ինչպես Տրիստանը սիրաբանում է Իզոլդայի հետ:

Արքան աղպպես էլ արեց, թեև սիրտը կախ էր: Մոլթն ընկնելուն պես՝ որսորդներին թողեց անտառում, գաճաճին վերցրեց ձուլված վրա և վերադարձավ Տրիստանին: Գաղտնի մուտքից թափանցեց պողպատյա գուռը, և գաճաճը նրան առաջնորդեց մեծ սոճու տակ:

— Սիրելի արքա, անհրաժեշտ է, որ դուք բարձրանաք այս ծառի ճյուղերին: Ձեզ հետ վերցրե՛ք նետ ու աղեղ. գուցե ունենաք դրանց կարիքը: Եվ թաքուն կացե՛ք, երկար չէք պսակվու:

— Կորիք, սատանի շուն,— պատասխանեց Մարկը:

Եվ գաճաճը գնաց՝ հետը տանելով նրա ձուլվածը:

Շճմարիտ էր ասել սատանի շունը, արքան երկար չսպասեց: Այդ գիշեր լուսինը փայլում էր պայծառ ու գեղեցիկ: Ծյուղերի մեջ թաքնված՝ արքան տեսավ իր քրոջորդուն՝ սրածայր ցցապատնեշների վրայից ցատկելիս: Տրիստանը եկավ ծառի տակ և շուրջ նետեց տաշեղներ ու մանր ճյուղեր: Բայց քանի որ նետելիս թեքվել էր աղբյուրին, ուստի ջրի մեջ սնեսավ արքայի արտացոլված պատկերը: Ա՛հ, եթե կարողանար կանգնեցնել փախչող տաշեղները: Բայց ոչ, լողում են, արագորեն վազում են պողպատյա միջով: Այնտեղ՝ կանանց հարկաբաժնում, Իզոլդան հետևում էր, թե երբ պիտի հայտնվեն. արդեն, անկասկած, նա տեսնում է տաշեղները, վազում դեպի ժամադրալայրը: Թող աստված պահապան լինի սիրահարներին:

Իզոլդան գալիս է: Նստած, անջարժ՝ Տրիստանը նայում է նրան, ունկնդրում, թե ինչպես նետը ճրթում է՝ դեմ առնելով աղեղի պարանին:



Իզոլդան գալիս է ճարպիկ և սակայն զգուշ, ըստ իր սովորության: «Ի՞նչ կա արդյոք,— մտածեց նա,— ինչո՞ւ այս երեկո Տրիստանը չի վազում ինձ ընդատաշ: Արդյոք որևէ թշնամո՞ւ է նկատել»:

Կանգ է առնում Իզոլդան, հայացքով զննում խավարչը-տին թփերը և ահա հանկարծ, լուսնի պայծառ լույսի տակ, լուր հերթին տեսավ արքայի սովերը սովակի վրա:

— Տե՛ր իմ աստված,— ասաց կամացուկ,— ինձ միայն շնորհ արա այն, որ կարողանամ խոսել սուաջինը:

Ահա շարունակում է մոտենալ: Լսեցեք, թե ինչպես նա կանխում և զգուշացնում է սիրեցյալին:

— Մե՛նիոր Տրիստա՛ն, այդ ինչպե՛ս համարձակվեցիք: Ինձ հրավիրել այսպիսի վա՞րդ, այս ժամի՛ն: Բազմիցս արդեն ինձ կանչել էիք՝ ինչ-որ բան խնդրելու, ասում էիք դուք: Իսկ ի՞նչ եք խնդրելու ինձանհից: Ի՞նչ կարող եմ անել ձեզ համար: Ի վերջո եկա, քանզի չկարողացա անգիտանալ այն, որ ես պարտավոր եմ այդպես վարվել որպես թագուհի: Ահավասիկ այստեղ եմ. ի՞նչ եք ուզում:

— Թագուհի, ձեզանհից աղաչում եմ մեղմացնել արքայի գայրույթը:

Դողում է Իզոլդան և լաց է լինում: Բայց Տրիստանը գուժ է հղում տեղ ասածուն, որ վտանգը ցույց տվեց սիրեցյալին:

— Այո՛, թագուհի, կանչել եմ հաճախ ու միշտ ասարդյուն. այն ժամանակից, ինչ արքան ինձ վտարել է, երբեք չանսացիք իմ կանչին: Բայց ողորմացեք թշվառիս, արքան ինձ ասում է, չգիտեմ ինչու: Բայց թերևս դուք այդ գիտեք, և ո՞վ, եթե ոչ դուք միայն, ուղղամիտ թագուհի, վաչելուչ Իզոլդա, միայն դուք կկարողանաք մեղմել արքայի գայրույթը, քանզի նա սիրող ձեզ է ապավինում:

— Դուք իրոք դեռ չգիտե՞ք, սենիոր Տրիստան, որ նա կասկած ունի մեր երկուսի նկատմամբ: Այն էլ ինչպիսի՞ դավաճանության մեջ: Եվ, ի լրումն այդ ամոթանքի, ինձ պիտի վիճակվեր ձեզ տեղյակ պահել: Իմ տերը կարծում է, որ ես ձեզ հանցավոր սիրով եմ սիրում: Աստված գիտե, սակայն (և եթե սուտ եմ, թող մարմինս հոշոտվի), երբեք իմ տերը չեմ տվել ոչ մի տղամարդու, բացի նրան, ով առաջինը ինձ, երբ դեռ կույս էի, վերցրեց թևերի մեջ: Եվ դուք, Տրիստան, ուզում եք, որ ե՛ս ձեր ներումը հայցեմ արքայից: Բայց եթե սուկ իմանա, որ եկել եմ այս սոճու տակ, վաղև իսկ մոխիրս քամուն կտա:

Տրիստանը մղկտում է.

— Ազնի՛վ մորեղբայր, ասում եմ. «Ստոր չէ նա, ով չի անում ստորություն»: Սակայն ինչպիսի՞ սրտում կարողացավ ծագել այդպիսի՞ կասկած:

— Սենիոր Տրիստան, այդ ի՞նչ եք ուզում ասել: Ո՛չ, թագավորը՝ իմ տերը, ինքն իրենից չէր կարողանա մոգոնել այդպիսի զրպարտություն: Բայց այս երկրի նենգավոր դավադիրները հավատացրել են նրան այդ կեղծիքը, քանզի հեշտ է մոլորեցնել ազնիվ սրտերը: «Միմյանց սիրում եմ», ասացին արքային ու նրան չարությամբ լցրին մեր նկատմամբ: Այո, դուք ինձ սիրում էիք, Տրիստան, և ինչո՞ւ ժըխտել: Արդյոք ձեր մորեղբոր կինը չե՞մ, և մի՞թե երկու անգամ ձեզ չեմ ազատել մահից: Այո՛, ես ձեզ սիրում էի փոխադարձաբար. դուք արդյոք չե՞ք պատկանում արքայական գերդաստանին, և քանի՞-քանի անգամ իմ մորից լսել եմ, որ կինը չի սիրում իր տիրոջը, քանի դեռ չի սիրում նրա ազգականներին: Ի սեր թագավորի՝ ձեզ սիրում էի, Տրիստան, հիմա էլ դեռևս, եթե ներում չնորհի, կուրախանամ:

Բայց դողում եմ, սարսափում, ես հեռանամ, արդեն անչափ երկար մնացի:

Ծառի ճյուղերի մեջ՝ արքան խղճահարվեց ու ժպտաց: Փախչում է Իզոլդան, Տրիստանը ետ է կանչում:

— Թագուհի՛, հանուն փրկչի, ողորմած եղեք և հասեք ինձ օգնության: Վախկոտները ցանկանում էին արքայի կողքից հեռացնել բոլոր նրան սիրողներին. հասան իրենց նպատակին և հիմա ծաղրում են: Թող այդպես լինի. ես, ուրեմն, դուրս կգամ այս երկրից ու կգնամ հեռու, թշվառական, ինչպես այն ժամանակ, երբ եկա այստեղ: Բայց, գոնե, արքայից ձեռք բերեք նրա համաձայնությունը, և, որպես երախտագիտություն անցյալ ծառայությունների դիմաց, թող ինձ տա այնքան դրամ, որ ի վիճակի լինեմ ծախսերս հոգալ, որ կարողանամ ետ վերցնել գրավ դրամ իմ նծույզն ու գեները և առանց ամոթանքի հեռու արշավեմ այս տեղերից:

— Ո՛չ, Տրիստան, դուք ինձ չպետք է դիմեիք այսպիսի խնդրանքով: Միայնակ եմ այս երկրում, միայնակ պալատում, որտեղ ոչ ոք ինձ չի սիրում, և մնացել եմ առանց նեցուկի, արքայի տնօրինության տակ: Եթե ձեզ համար մի բան իսկ ասեմ նրան, չե՞ք տեսնում, որ դրանով իսկ ինձ կենթարկեմ ամոթալի մահվան: Բարեկամ, թող աստված ձեզ պահպանի: Արքան անարդարացիորեն է ասում: Բայց ուր էլ որ դուք գնաք, տեր աստվածը կլինի օգնական:

Իզոլդան գնաց, փախավ մինչև իր սենյակը, որտեղ և դողահար ընկավ Բրանծիենի թևերի մեջ: Թագուհին նրան պատմեց եղելությունը: Բրանծիենը բացականչեց.

— Իզոլդա՛, տիրուհիս, աստված ձեզ համար մեծ հրաշք

կատարեց: Մեր հայրն է՝ ողորմած և իմաստուն, և չարիք չի ցանկանում նրանց, ովքեր անմեղ են:

Մեծ տոճու տակ, մարմարակերտ ափին հենված՝ Տրիստանը վշտանում էր.

— Թող աստված ինձ խղճա, և ուղղի այն մեծ անարդարությունը, որից տանջվում եմ իմ սիրելի տիրոջ պատճառով:

Երբ նա անցավ պողպատե ցանկապատի վրայից, արքան ծպտալով սասց.

— Սիրելի քրոջորդի, օրհնյալ լինի այս ժամը: Տես, այն հեռավոր արշավը, որին պատրաստվում էիր այս առավոտ, ավարտվել է արդեն:

Այնտեղ, անտառի քացատում, գաճաճ Ֆրոսինը հարցմունք էր անում աստղերի ուղեծիրներին. այնտեղ կարդաց, որ արքան մահվամբ է սպառնում. սևացավ նա վախից ու ամոթից, կատաղելուց փքվեց և շուտափույթ փախավ գալիացիների երկիրը:

## Գ Լ Ո Ւ Խ VII

### ԳԱՃԱՃ ՖՐՈՍԻՆԸ

Ազիծյալ լինի այն գաճաճը,

որ կամի կորստյան մատնել ազգիվ մարդուն:

(Էյնհարտ դ'Օբերգ<sup>1</sup>)

Մարկ թագավորն հաշտություն է շնորհել Տրիստանին: Թույլատրել է վերադառնալ դղյակ, և ինչպես առաջներում,

<sup>1</sup> Գերմանացի բանաստեղծ, որն ապրել է 12-րդ դարի վերջում և

Տրիստանը քնում է արքայի սենյակում, արտոնյալների և հավատարիմների հետ: Ցանկացած պահին նա կարող է այնտեղ մտնել, կարող է դուրս գալ այնտեղից. թագավորն այդ մասին չի մտահոգվում: Բայց ո՞վ կարող է արդյոք երկար ժամանակ թաքցնել իր սիրո գաղտնիքը:

Մարկը ներել է դավադիրներին: Պատահեց նաև այն, որ մի օր, հեռավոր անտառում, գտնելով սապատավոր գաճաճին՝ թափառական ու թշվառ, արքունի արդարադատության նախարար Դինաս դը Լիդանը բերեց թագավորի մոտ, որը խղճահարվելով, ներեց նրա չարագործությունը:

Բայց Մարկի բարեսրտությունը լոկ գրգռեց բարոնների ատելությունը: Տեսնելով, որ Տրիստանն ու թագուհին շարունակում են տեսակցել իրար հետ՝ նրանք միասնաբար երդվեցին. եթե արքան երկրից չվտարի քրոջորդուն, պիտի քաշվեն իրենց բերդերը նրա դեմ պատերազմելու համար: Մարկին հրավիրեցին խորհրդի.

— Տե՛ր արքա, ուզում ես մեզ սիրիք, ուզում ես ատիր, կամքը քոնն է, բայց մենք ցանկանում ենք, որ դու վտարես Տրիստանին: Նա սիրում է թագուհուն, և ով ցանկանա՝ այդ կարող է տեսնել: Բայց մենք, մենք այլևս չենք հանդուրժի նրան:

Թագավորը նրանց ունկնդրում է, հառաչում, գլուխը խոնարհում է ու լռում:

— Ոչ, արքա, այլևս չենք հանդուրժի, քանզի մենք այժմ գիտենք, որ այդ լուրը, որը մի ժամանակ այնպես տարօրի-

13-րդ դարի սկզբում՝ Սաբսի դուքս Հենրիխ Աուլոմի արքունիքում: Մոտ 1190 թվականին՝ նա գերմաներեն թարգմանեց «Տրիստան և Իզոլդա» պոեմի մի տարբերակը, որն ավելի վաղ է, բան այն, որը հետագայում վերստեղծել է Գոթֆրիդ դը Մորագրուրգը:

նակ էր հնչում քո ականջներին, այժմ քեզ չի զարմացնում, և դու հավանություն ես տալիս նրանց հանցագործությանը: Թե ինչ ես անելու, մտածի՛ր և խորհրդակցի՛ր: Ինչ վերաբերում է մեզ, եթե անվերադարձ չհեռացնես քո քրոջորդուն, կբաշվենք մեր բարոնական կալվածքները, և մեր հարևաններին նույնպես կտանենք, քանզի չենք կարող հանդուրժել, որ նրանք այստեղ մնան: Այսպիսին է ընտրությունը, որն սուաջարկում ենք, ընտրի՛ր ուրեմն:

— Սեկիորներ, հավատ ընծայեցի այն չար խոսքերին, որ ասում էիք Տրիստանի մասին, և գղջացի: Դուք իմ հպատակներն էք, և ես չեմ ցանկանում կորցնել զինակիցների: Խորհուրդ տվեք, ուրեմն, ձեզ եմ դիմում, քանզի պարտավոր եք լինել ինձ խորհրդատու: Դուք քաջ գիտեք, որ ես խուսափում եմ ամենայն գոռոզամտությունից և ծայրահեղությունից:

— Ուրեմն, արքա՛, կանչել տվեք այստեղ գաճաճ Ֆրոսինին: Դուք նրան հավատ չեք ընծայում պողպատ պատահարի պատճառով: Եվ սակայն, չէ՞ որ աստղերի մեջ կարդացել էր, որ թագուհին այդ երեկո գալու է սոճու տակ: Շատ բան գիտի, դիմեցեք նրա խորհրդին:

Մոտ վազեց գաճաճը, և Դենուպենը գրկեց նրան: Լսեցե՛ք, թե այդ անիծյալն ինչպիսի խարդավանք սովորեցրեց թագավորին:

— Արքա՛, հրամայիր քո քրոջորդուն, որ վաղն արշալույսին շուտափույթ արշավի դեպի Կորդուել՝ Արթուր թագավորին տանելու համար մագաղաթի վրա գրված ու մո-

մով կնքված նամակ: Արքա՛, Տրիստանը պատկում է անկողնիդ կողքին: Դուք եկ սենյակից, երբ նոր քնած կլինեն հավատարիմներն ու արտոնչալները, և երդվում եմ ասածով ու Հոռմեական դավանանքով, որ եթե նա Իզոլդային սիրում է հանցավոր սիրով, ապա ցանկանալու է հետը խուսել՝ մեկնելուց առաջ: Իսկ եթե Տրիստանը գա թագուհու մոտ, և ես այդ չիմանամ, ու դու այդ չտեսնես, այնժամ ինձ սպանիր: Ինչ վերաբերում է մնացյալին, ապա թույլ տուր, որ ծուղակը պատրաստեմ իմ ուզածի նման: Միայն զգուշացիր, որ նախքան քնելու ժամը Տրիստանի հետ չխոսես այդ պատգամի մասին:

— Այո՛,— պատասխանեց Մարկը,— թող այդպես լինի:

Այնժամ գաճաճն իրագործեց մի նեղգամիտ խարդավանք: Մտավ հացթուխի մոտ, գնեց չորս դեմիեի ալրափոշի և այն թաքցրեց զգեստի քղանցքի մեջ: Ահ, ո՛վ արդյոք կկարողանար երբևիցե կուսնել այդպիսի խարդավանք: Երբ մութն ընկավ, արքան ընթրեց, զինակիցները քնեցին սենյակին կից ընդարձակ սրահում, և Տրիստանն, ըստ սովորության, եկավ Մարկ թագավորի ննջարանը՝ բարի գիշեր մաղթելու:

— Միրելի քրոջորդի, կատարեցեք իմ կամքը. դուք արշավելու եք մինչև Կորդուել և Արթուր՝ թագավորին հանձնելու եք այս նամակը: Իմ կողմից ողջունեցեք և մոտը միայն մի օր մնացեք:

— Արքա, վաղը ես այդ կտանեմ:

— Այո՛, վաղը, նախքան կբացվի արշալույսը:

<sup>1</sup> Մեծ Բրիտանիայի լեգեհոսը թագավոր: Նրա ստասպելական քաջագործությունները ծնունդ տվեցին «Կլոր սեղանի վեպերին»:

<sup>1</sup> Քաղաք Անգլիայի հյուսիսում:

Եվ ահա Տրիստանը մեծ հուզմունքի մեջ է: Նրա անկողինը մի նիզակաչափ հեռու էր Մարկի անկողնուց: Մեջը բռնկվեց թագուհու հետ խոսելու կատաղի տենչանք, և սրտանց վճռեց, որ նախարշապույսին, եթե Մարկը քնած լինի, ինքը մոտենա թագուհուն: Ա՛հ, աստված իմ, ինչպիսի՜ խելացնոր ցանկություն:

Գաճաճն, ըստ սովորության, քնում էր արքայի սենյակում: Երբ համոզվեց, որ բոլորը անջում են, վեր կացավ և Տրիստանի ու թագուհու անկողինների միջև սիտեց արափոշին, եթե սիրահարներից մեկը մյուսի մոտ գնա, ոտնահետքերը կմնան արափոշու վրա: Բայց նրա սիտելու ժամանակ Տրիստանը, որն արթուն էր մնացել, տեսավ:

«Ինչ խոսք, որ այս գաճաճն իմ օգուհին ծառայելու սովորություն չունի, բայց ես նրան հուսախաբ կանեմ. մարդ պիտի ապուշ լինի՝ ոտնահետքերն այստեղ թողնելու համար»:

Կեպիշերին արքան վեր կացավ ու դուրս եկավ սապատավոր գաճաճի ողեկցությամբ: Մուտք էր սենյակում, ոչ լամպ կար, ոչ էլ վառվող մոմ: Տրիստանը կանգնեց անկողնուն: Աստված՛ իմ, ինչո՞ւ հղացավ այդ միտքը: Միացնում է ոտնաթաթերը, աչքաչափով գնահատում տարածությունը, ցատկում և ընկնում է թագավորի անկողնու վրա: Ավա՛ղ, նախորդ օրը, անտառում, մի մեծ վարազ ժանիքով խոցել էր ազդրը, և, ի դժբախտություն նրա՝ վերքը կապած չէր: Այդ ոտնուհի ճիգից վերքը բացվում է, և արյունը ծորում է, բայց Տրիստանը չի տեսնում արյունը, որ հոսում ու կարմրացնում է սավանները: Իսկ դրսում, լուսնի լույսի տակ, գաճաճը կախարդական արվեստի շնոր-

հիվ, իմացավ, որ սիրահարները միացել են: Ուրախությունից ցնցվեց և թագավորին ասաց.

— Գնա, և եթե հիմա նրանց միասին չգտնես, ինձ կսխալես սուր:

Ուրեմն, ահա, գալիս են դեպի սենյակը՝ թագավորը, գաճաճը և չորս դավադիրները: Բայց Տրիստանը լսեց ոտնահետքերը. ու նա վեր է կենում, ցատկում հասնում է իր անկողնուն... Ավա՛ղ, ոտնուհի պահին արյունը, իբրև մատնիչ, վերքից հոսեց արափոշու վրա:

Ահա նրանք՝ արքան, բարոնները և գաճաճը, որը լույս է բռնել: Տրիստանը և Իզոդան քնած էին ձևանում. սենյակում մնացել էին միայնակ՝ Պերիսիսի հետ, որը պառկում էր Տրիստանի ոտքերի մոտ և չէր շարժվում: Բայց արքան տեսնում է, որ անկողնի սավաններին կան կարմիր բծեր, և հատակին սիոված արափոշին թրջված է արյան թարմ հետքերից:

Այնժամ, Տրիստանի արիությանը նախանձող չորս բարոնները նրան սեղմում են անկողնուն և ապառնում են թագուհուն, ծաղրում ու անարգում՝ խոստանալով արդար դատաստան: Ահա, հայտնաբերում են արնածոր վերքը:

— Տրիստա՛ն,— ասում է արքան,— այսուհետև, ոչ մի հերքում արժեք չունի. վաղը դուք մեռնելու եք:

Տրիստանը բացականչում է.

— Թողություն շնորհեցեք ինձ, տեղ իմ: Հանուն աստծո, որ խաչվեցավ վասն մեր, տեղ իմ, գթացե՛ք:

— Սրբա, եղիր վրիժառու,— պատասխանում են դավադիրները:

— Ազնիվ մորեղբայր, ինձ համար չէ, որ աղաչում եմ. ի՞նչ փույթ մեռնելը: Անշուշտ, չիկներ ձեզ զայրացնելու եր-





կյուղը, եւ այդ վախկոտներին կստիպէի թանկ վճարել անարգանքի համար, և պարզ է, որ առանց հովանավորութեան նրանք չէին հանդգնի մարմնիս դիպչել ձեռքերով: Բայց հանուն հարգանքի և սիրո, որ տածում եմ ձեր հանդեպ, ինքս ինձ հանձնում եմ ձեր տնօրինությանը: Վարվեցեք, ինչպես կամենաք: Պատրաստ եմ, տեր իմ, բայց թագոստուն խնայեցեք:

Եվ Տրիստանը թեքվում ու խոնարհվում է նրա ոտքերի առջև:

— Գթացեք թագոստուն, քանզի, եթե ձեր տանը գտնվի որևէ տղամարդ այնքան հանդուգն, որ պնդի այն սուտը, թե ես թագոստուն սիրել եմ հանցավոր սիրով, ապա ինձ կգտնի ոտնկալս՝ պատրաստ մեղամարտելու: Տեր իմ, թողություն շնորհեցեք թագոստուն, հանուն աստծո:

Բայց երեք բարոնները պարաններով կապտոնել են Տրիստանին և թագոստուն: Ա՛հ, եթե իմանար, որ իրեն չի թույլատրվելու հատուկ մեղամարտով<sup>1</sup> ապացուցել անմեղությունը, ավելի շուտ պիտի համաձայնվեր, որ ողջ-ողջ անդամահատեն, քան թե թույլ տար, որ ստորաբար կապտեն:

Բայց Տրիստանն ապավինում էր աստծուն և գիտեր, որ մեղամարտում ոչ ոք չի համարձակվի իր դեմ գեւք վերցնել: Եվ, իհարկե, աստծուն ապավինում էր արդարացիորեն: Երբ երդվում էր, որ թագոստուն երբեք չի սիրել հանցավոր սիրով, դավադիրները ծիծաղում էին անպատկառ խաբէության վրա: Բայց ձեզ եմ դիմում, սեղիորեն՝ ո՛ր, որ

<sup>1</sup> Ամբաստանողի և ամբաստանչաի միջև փակ դաշտում տեղի ունեցող մեղամարտ, որը ընդունված էր որպես իրավաբանական ապացույց:

գիտեք ճշմարտությունը սիրո ըմպելիքի մասին, որ խմեցին ծովի վրա, դուք, որ հասկանում եք, թե ինչպիսին է դրա զորությունը, ասացե՛ք՝ արդյոք ստո՞ւմ էր Տրիստանը: Փաստը չէ, այլ դատաստանն է, որ հիմնավորում է ոճրագործությունը: Մարդիկ տեսնում են փաստը, բայց աստված սրտերն է տեսնում, և միայն նա է ճշմարիտ դատավորը: Նա է սահմանել, որ ամեն մեղադրյալ մարդ իրավունք ունի անմեղությունը վիճարկելու մեկամարտի մեջ, և ինքը՝ աստված, մարտնչում է հոգուտ անմեղի: Ահա թե ինչու Տրիստանը պահանջում էր դատաստան ու մեկամարտ և զգուշացավ Մարկ թագավորի հանդեպ որևէ կերպ թերանալուց: Բայց եթե կարողանար նախատեսել այն, ինչ պատահելու էր, պիտի սպաներ դավադիրներին: Ահ, աստված իմ, ինչո՞ւ չսպանեց:

### Գ Լ Ո Ւ Խ VIII

#### ՈՍՏՅՈՒՆ ՄԱՏՈՒՌԻՑ

Նենգավոր սիրո ունի նա,  
Ով տեսնի մարմինն ու դեմքը Իզոլայի՝  
տոանց նրան խղճահարվելու:

(Բերով!)

Քաղաքով մեկ, մութ գիշերով թռչում է լուրը. բռնել են Տրիստանին ու թագուհուն. թագավորն ուզում է նրանց ըս-

<sup>1</sup> «Տրիստան» պոեմի հեղինակը: Գրված է 12-րդ դարի վերջում: Պահպանվել է լոկ մի հատված, որի շարունակությունն ամբողջակա-նացվել է անհայտ ասքասացի կողմից:

պանել: Հարուստներն ու հասարակ մարդիկ՝ բոլորը լաց են լինում:

«Ավա՛ղ, լաց չի՞նել մենք չենք կարող: Տրիստան, ուզմիկ քաջարի, մի՞թե նենգավոր դավադրության գոհն եք դառնալու: Եվ դուք, ազնիվ թագուհի, մեծարված թագուհի, էլ ո՞ր երկրում երբևէ կձեռնի այսքան գեղեցիկ, այսքան սիրասուն արքայադուստր: Ուրեմն, գաճաճ սուպատավոր, ա՛յս է քո կախարդանքների պտուղը: Թող երբեք աստժո տեսքին չարժանանա այն մարդը, որ քեզ հանդիպելիս՝ նիզակը չխրի քո մարմնի մեջ: Տրիստան, ազնիվ ու սիրելի բարեկամ, երբ մեր երեխաներին հափշտակելու համար Մոռուլոը ափ դուրս ելավ այս ծովեզրին, բարոններից ոչ մեկը չհամարձակվեց մարտնչել, և բոլորը լուռ էին համրերի նման: Բայց դուք, Տրիստան, մեկամարտն ընդունեցիք մեզ՝ բոլոր կոռնուացիներին համար, և սպանեցիք Մոռուլոին, և նա այնպես խոցեց նիզակով, որից քիչ էր մնում՝ մեռնեիք մեզ համար: Այդ անձնագոհ սխրանքների հուշը մեր սրտերում, այսօր ինչպե՞ս հավանություն տանք ձեր մահվանը»:

Քաղաքով մեկ քարձրանում է ողբուկոծը. բոլորը վազում են դեպի դղչակը: Բայց այնպիսին է արքայի ցատու՝ որ չկա այնքան ուժեղ ու անվեհեր բարոն, որ հանդգնի մի խոսք իսկ ասել՝ շեղելու համար նրա անխնայ վճիռը:

Լուսաբացը մոտենում է, անցնում է գիշերը: Արևածագից ստաջ Մարկն արշավում է քաղաքից դուրս, դեպի այն վայրը, որտեղ սովորություն ունի անելու դատ ու դատաստան: Հրամայում է, որ փոս փորեն ու լցնեն սուր, ոլորուն տատակներով, արմատախիլ արված սև ու սպիտակ փշերով:

Առավոտյան ժամը վեցին, երկրով մեկ, հրամայում է ազ-

դարարել, որ անմիջապէս հաւաքվեն Կոնստանդի քնակիչները: Հաւաքվում են մեծադորոք աղմուկով, և ով ասես չի արտասպում, Տիևուածելի գաճաճից բացի: Այնժամ, արքան խոսեց այսպէս.

— Մեկիորեն՛ր, ես հրամայեցի պատրաստել այս տառակչա խարուկը Տրիստանի և թագուհու համար, քանզի նրանք զանց են առել երկրի օրէնքը:

Բայց բոլորը բացականչեցին.

— Դատ ենք պահանջում, արքա՛: Նախ և առաջ դատ, ինչպէս և՛ ինքնարդարացման խոսքի իրավունք: Խայտառակություն ու ոճիր է՛ սպանել առանց դատի: Արքա՛, դատաստանդ հետաձգի՛ր և եղի՛ր ողորմած:

Զայրույթից բռնկված՝ Մարկը պատասխանեց.

— Ո՛չ, ո՛չ հետաձգում, ո՛չ ողորմածություն, ո՛չ ինքնարդարացման խոսք, ո՛չ էլ դատ: Երդվում եմ արարիչով, որն ստեղծել է աշխարհը, եթե որևէ մեկը հանդգնի նման բան խնդրել ինձանից, ինքն առաջինը կբարձրանա այս խարուկի վրա:

Հրամայում է, որ վստեն կրակը, և նախ՝ Տրիստանին քերեն ամբոցից:

Փշերը բոցավառվում են, բոլորը պապանձվում են, արքան սպասում է:

Ծառաները վազեվազ հասան այն սենյակը, որտեղ սիրահարները խիստ հսկողության տակ են գտնվում: Բարշ են տալիս Տրիստանին՝ ձեռքերը պարաններով կապկպած: Աստված վկա, ստորություն էր այդպես կապտուելը: Նա լաց է լինում անարգված լինելուց: Բայց ի՞նչ օգուտ արցունքներից: Ամոթահար ստորությամբ են տանում նրան, և թագուհին, անձկությունից կիսախելագար, բացականչում է.

— Ինձ համար, սիրելի՛ս, մեծ երջանկություն կլինե՞ր մահն ընդունել հանուն քո փրկության:

Պահակներն ու Տրիստանը դուրս են գալիս քաղաքից, և գտնիվայր շարժվում են դեպի խարուկը:

Սակայն մի ձիավոր մրկարշավ հասնում է նրանց ետևից, ցած է թռչում դեռ պացող ձմուզից. Գիենան է, արքունի արդարադատության բարի նախարարը: Լսելով եղելության մասին՝ գալիս էր Լիդանի դղչակից, և փրփուրը, քրտինքն ու արյունը ծորում էին ձիու կողերից:

— Որդյակ, շտապում եմ դեպի արքայական դատը: Տերաստվածը գուցե ինձ այնպիսի խորհուրդ ներշնչի, որ իմ ճարտասանությամբ երկուսիդ էլ փրկեմ: Արդեն տերն ինձ թույլ է տալիս քեզ մատուցել հարգալի ծառայություն: Բարեկամներ,— սասց ծառաներին,— ես կամենում եմ, որ ասպետին տանեք առանց այդ կապանքների,— և Գիենայը կտրատեց ամոթալի պարանները,— եթե փորձի փախչել, չէ՞ որ ձեռքի տակ ունեք թրերը...

Համբուրում է Տրիստանի շուրթերը, կրկին թռչում է թամբին, և ձմուզը սրարշավ տանում է նրան:

Լսեցե՛ք, ուրեմն, թե ինչպէս տեր աստվածը լի է ողորմածությամբ: Նա, որ չի ցանկանում մեղապարտի մահը, ցավակցորեն ունկնդրեց խեղճ մարդկանց լացերն ու պոռկումները, որոնցով պաղատում էին բազմատանջ սիրահարների փրկությունը: Այն ճամփի եզրին, որով անցնում էր Տրիստանը, ժայռի կատարին ու գեփշուռին հանդիպակաց մի մատուռ իշխում էր ծովի վրա: Խորանի պատը կտուցված էր ապառաժի ծայրամասին, որը բարձր էր՝ քարքարոտ ու սրածայր կտրվածքներով. խորանի ետևը, անդունդի եզ-

քին, կար նկարագարդ ապակիներով հսկա լուսամուտ՝ մի սուրբ մարդու ճարտար գործը: Տրիստանն ողեկիցներին ասաց.

— Սենհորներ, տեսնո՞ւմ եք այս մատուռը. թույլ տվեք այնտեղ մտնել: Մահս մոտալուտ է, աղոթելու եմ աստծուն՝ թողություն հայցելով նրա դեմ գործած մեղքերիս համար: Սենհորներ, մատուռը այս ելքից բացի, ուրիշը չունի: Ձեզանից ամեն մեկը մերկացրել է թուրը. դուք լավ գիտեք, որ կարող եմ անցնել միայն այս դռնով: Երբ աստծուն աղոթած լինեմ, հարկ պիտի լինի անշուշտ, որ ես կրկին հանձնվեմ:

Պահակներից մեկն ասաց.

— Կարող եմք թույլ տալ նրան:

Թույլատրեցին, որ ներս մտնի: Վազում է նա մատուռի միջով, անցնում է երգասարահը, հասնում խորանի ապակեպատ ետնամասին, բռնում է պատուհանի փեղկերը, բացում ու դուրս է թռչում... Ավելի լավ է լինել ջարդուփշուր, քան այրվել խարույկի վրա, իմբված այդ մարդկանց սուսը:

Բայց իմացեք, սենհորներ, որ աստված մեծագույն շնորհ արեց. քամին ոռոցնում է զգեստները, բարձրացնում է նրան և կամաց իջեցնում փոռում է լայն քարի վրա, ժայռի ստորոտին: Կոռնուայի բնակիչները մինչև այժմ էլ այդ քարն անվանում են «Տրիստանի ոստյուն»:

Իսկ մատուռի սուշն դեռ սպասում էին: Բայց իզուր, քանզի աստված այժմ նրան վերցրել է իր հովանավորության տակ: Փախչում է Տրիստանը, ավազը շարժվում, փխրվում է ուղքերի տակ: Ընկնում է, շրջվում ու նայում է հեռավոր խարույկին. բոցը ճրթճրթում է, ծուխը բարձրանում է: Նա փախչում է:

Թուրը կասյած՝ սանձն արձակած՝ Գորվենալը փախել էր

քաղաքից. արքան այրել կուտար տիրոջ փոխարեն: Մարգագետնում նա հասավ Տրիստանին, և Տրիստանը բացականչեց.

— Ուսուցի՛չ, աստված թողություն շնորհեց: Ա՛հ, թըշվառս, այդ իմ ինչի՞ն էր պետք: Եթե իմը չէ Իզոլդան, ինձ ոչինչ պետք չէ: Ավելի լավ էր թուշկուց ջարդուփշուր լինեի ժայռին: Ես փախա, Իզոլդա, և քեզ պիտի սպանեն: Ինձ համար է այրվելու խարույկի վրա, ես նույնպես պիտի մահանամ նրա համար:

Գորվենալն ասաց.

— Ազնիվ տեր, հանգստացեք և մի՛ տրվեք զայրույթին: Տեսնո՞ւմ եք այս խիտ մացառուտը, որով ծածկված է մեծ փոսը. եկեք այդտեղ թաքնվենք: Այս ճամփով մարդիկ շատ են անցնում. մեզ կպատմեն եղելությունը, և եթե Իզոլդային խարույկ բարձրացնեն, զավակս, երդվում եմ աստծո անունով, Մարիամի որդու անունով, որ երբեք չեմ քնի ծածկի տակ, մինչև որ վրեժը չլուծենք:

— Մոտս չէ իմ թուրը:

— Ահա, ես այն բերել եմ:

— Լավ, ուսուցիչ, այլևս ոչնչից չեմ վախենում, աստծուց բացի:

— Որդյակ, իմ թիկնոցի տակ ունեմ ևս մի բան, որ քեզ պիտի որսխացնի. ահա այս գրահը՝ թեթև ու ամուր, որը կարող է լավ ծառայել:

— Տուր, սիրելի ուսուցիչ, վկա է աստված, որին հավատում եմ, այժմ ազատելու եմ իմ սիրեցյալին:

— Ո՛չ, մի՛ շտապիր ամենևին,— ասաց Գորվենալը,— աստված անշուշտ նախատեսել է ավելի հաստատ ինչ-որ վրիժառություն: Խորհիր, որ այժմ քո կարողությունից վեր

Է մոտենալ խարուկին. հարուստներն այն շրջապատել են, և նրանք վախենում են արքայից, քեզ խիելու է առաջին իսկ պատահած մարդը, թեև ի սրտե կողեմա, որ դու փրկվես: Որդյակ, լավ են ասում. «Մոլեգնությունը քաջություն չէ»: Սպասի՛ր...

Երբ Տրիստանն, ուրենն, իրեն ժայռից վար նետեց, մի խեղճ աղքատ տեսավ, թե ինչպես կանգնեց ոտի ու փախավ: Նա շտապեց դեպի Տինտածել և սողոսկեց մինչև Իզոլդայի սենյակը.

— Թագուհի, էլ մի՛ արտասովեք, ձեր սիրեցյալը փախել է:

— Օրհնյալ է ասոված,— ասաց Իզոլդան,— հիմա ինձ կկապտեն թե ազատ կարձակեն, ինձ կխնայեն թե կսպանեն՝ միևնույն է:

Դավադիրները, սակայն, պարաններն այնպես դաժանորեն էին սեղմել դաստակների շուրջը, որ արյուն էր ծորում: Բայց ծպտալով նա ասաց.

— Անշուշտ, ես պիտի լինեի արժանագուրկ մի կին, եթե հիմա արտասվեի այս ցավից, մինչ ասոված բարին ի կատար ածեց՝ իմ սիրեցյալին ազատելով դավադիրներից:

Երբ լուրը հասցրին, որ Տրիստանը փախել է սպակեպատ լուսամտի միջով, արքան զայրույթից գունատվեց և իր մարդկանց հրամայեց բերել Իզոլդային:

Քարշ են տալիս թագուհուն. սրահից դուրս, շեմքին, նա հայտնվում է, պարզում է քնքուշ ձեռքերը, որոնցից ծորում է արյունը: Գոռում-գոչյուն է բարձրանում փողոցնիվեր:

— Տե՛ր ասոված, գթացեք նրան: Ազնիվ թագուհի, մեծարված թագուհի, ինչպիսի՛ վիշտ են սփռել այս երկրի

երեսին, ովքեր ձեզ մատնել են: Անեժք թափվի մատնիչների գլխին:

Թագուհուն քարշ տվեցին մինչև տատակյա խարուկը, որը բոցավառվում է: Այնժամ, Դինասը՝ Լիդանի իշխանը, ընկավ արքայի ոտքերը.

— Տե՛ր իմ, լսիր ինձ. ես երկար ծառայել եմ առանց ստորությունների, ուղղամտորեն և առանց որևէ օգուտի, քանզի չկա այնպիսի աղքատ, որը կամ պատավ, որից մի դեմիե անգամ վերցրած լինեմ՝ օգուվելով քո շնորհած նախարարությունից, որ ղեկավարել եմ իմ ամբողջ կյանքում: Որպես պարզևատրում խնդրում եմ ներողամտություն թագուհու նկատմամբ: Դու ուզում ես Իզոլդային այրել առանց դատի. դա օրինազանցություն է, քանի որ նա չի ընդունում քո մեղադրանքը: Խորհիր նաև այն, որ եթե թագուհուն այրես, այս երկրում այլևս չի լինելու սպահովություն: Տրիստանը փախել է, լավ գիտի դաշտերն ու անտառները, գետանցներն ու ճամփաները: Նա խիզախ է: Անշուշտ, դու մորեղբայրն ես, և քեզ վրա չի հարձակվի: Բայց կազանի բոլոր այն բարոնների՛ն՝ քո վասալների՛ն, որոնց կկարողանա բերել անակնկալի:

Այդ լսելով՝ չորս դավադիրները գունատվում են, ասես արդեն տեսնում են դարանակալած Տրիստանին, որը նրանց հետևում է:

— Թագավոր,— ասաց արքունի արդարադատության նախարարը,— եթե ճշմարիտ է, որ ես քեզ լավ եմ ծառայել իմ ամբողջ կյանքում, Իզոլդային հանձնիր ինձ. պատասխանատու կլինեմ որպես նրա պահակն ու երաշխավորը:

Բայց արքան բռնեց Դինասի ձեռքը և բոլոր սրբերի ան-

վամբ երդվեց, որ անմիջապես ի կատար կածի դատաստանը:

Այնժամ, Դինասը ոտի կանգնեց.

— Արքա՛, ես վերադառնում եմ Լիդան և հրաժարվում եմ ձեզ ծառայելուց:

Իզոլյան տխրամամ ժպտում է նրան: Դինասը բարձրանում է թամբին և հեռանում է գլխիկոր, զայրացած ու մոայլ:

Իզոլյան կանգնած է ուղիղ բոցի դիմաց: Ծորջն ամբողջը ճշում է, անհծում է թագավորին, անհծում է դավաճաններին: Արցունքները հոսում են երեսնիվար: Հագել է նեղ, մոխրագույն միջնագգեստ, որի մեջ ոսկյա թել է հյուսված. ոսկյա թել է հյուսված մագերի մեջ, որոնք իջնում են մինչև սրունքները: Ստոր սիրտ ունի նա, ով այդ գեղեցկություներ տեսնելիս, չի խղճահարվի: Աստված իմ, որքան ամուր են կապկպված թևերը:

Այնպես պատահեց, որ ձեփներմակ ու փտած մարմիններով հարյուր այլանդակված բորոտներ, փայտյա ճոռաների՝ աղմկարարությամբ, կառչած հեռակներից, հապշտապ հավաքվել ու սեղմվել էին խարույկի մոտ, և ոտած կոպերի տակից նրանց արնակալած աչքերը հրճվում էին այդ տեսարանով:

Իվենը՝ այդ հիվանդներից ամենազազրելին, ճղճղանք ձայնով դիմեց արքային.

<sup>1</sup> Բանի դեռ բորոտների համար ընդունված չէր կտուցել հատուկ բնակավայրեր, նրանք զանգվածաբար թափառում էին ճամփաների վրա՝ ողորմություն խնդրելով: Նրանք պարտավոր էին իրենց հետ ունենալ ճոռաներ, որոնց աղմուկով զգուշացնում էին իրենց մտեճալու մասին:

— Տեղ, դու ուզում ես քո կնոջը նետել խարույկի մեջ. արդար դատաստան է, քայց խիստ կարճատև: Այս ուժեղ կրակը արագորեն կրափի նրան, այս ուժեղ քամին արագորեն կցրի մոխիրը: Եվ քիչ հետո՝ երբ այս կրակը հանգչի, կհանգչեն և նրա ցավերը: Ուզո՞ւմ ես՝ ես քեզ սովորեցնեմ ավելի դաժան մի պատիժ, որով ողջ մնալով հանդերձ, Իզոլյան լինի այնպես պատվազուրկ, որ մշտապես ուզենա մահանալ: Արքա, ուզո՞ւմ ես՝ ստեմ:

Մարկը պատասխանեց.

— Այո՛, կյանք նրան, քայց խիստ անպատվաբեր և մահից էլ վատթար... Ով ինձ ուսուցանի տանջելու աշդպիսի հմարք, ստավել չափով կարծանանա իմ հովանավորությանը:

— Տեղ, ես, ուրեմն, միտքս կարճ կարտահայտեմ: Ահավասիկ ունեմ այստեղ հարյուր ընկեր: Տուր Իզոլյային, և թող պատկանի մեզ՝ բոլորին: Ախտը գրգռում է մեր ցանկությունները: Տուր նրան քո բորոտներին: Երբեք ոչ մի տիրուհի արժանացած չի լինի ավելի վատթար վախճանի: Նա չի՞ր, մեր ցնցոտիները կպած են թարախակալած վերքերին: Նա, որ քո կողքին վայելում էր սամուրազարդ, շքեղ հյուսվածքներ, արամանդ ու մարմարազարդ սրահներ, նա, որ վայելում էր ընտիր գինիներ, ուրախություն ու պատիվ, երբ տեսնի քո բորոտների արքունիքը, երբ հարկադրված լինի մտնել մեր ցածրակտուր խրճիթները և երբ պատկի մեզ հետ, այնժամ, նա՛ գեղեցկուհի, Ոսկեհեր Իզոլյան ընդունելու է իր մեղքը և ափսոսալու է տատասկյա այս հրաշալի խարույկը:

Արքան ունկնդրում է, վեր է կենում ու երկար ժամանակ

մնում է անշարժ: Վերջապես նետվում է դեպի թագուհին ու բռնում է ձեռքից: Իզոլդան ճշում է.

— Գթացե՛ք ինձ, տեր իմ, ավելի լավ է՝ ինձ այրեցե՛ք, այրեցե՛ք շուտապույթ:

Արքան հանձնում է նրան: Իվենը թագուհուն վերցնում է, և հարյուր բորտուներ սեղմվում են շուրջը: Լսելով, թե դրանք ինչպես են ճշում ու կաղկանձում, բոլորի սրտերը հալվում էին խղճահարությունից: Բայց Իվենը հրճվում է: Իզոլդան գնում է, Իվենը տանում է նրան: Քաղաքից դուրս է հոսում զազրելի թափորը:

Նրանք գնում են այն ճանապարհով, որի վրա դարան է մտել Տրիստանը: Գորվենալը ճիշ է արձակում.

— Որդյակ, ի՞նչ ես անելու. ահա քո սիրեցյալը:

Տրիստանը փոսից դուրս է քշում նծույզը:

— Իվեն, դու թագուհուն, արդեն, բավականաչափ ողբել-ցել ես. այժմ թո՛ղ նրան, էթե ոգում ես ապրել:

Սակայն Իվենն արձակում է թիկնոցը.

— Արիացե՛ք, ընկերներ, օ՛հ, առաջ, մահակներով ու հենակներով: Ժամանակն է ի հայտ բերել արիությունը:

Այնժամ, հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես բորտուները նետում էին թիկնոցները, ցցվում էին տկար ոտքերի վրա, հնում էին, ճշում, թափահարում էին հենակները. մեկն սպառնում է, մյուսը ունում: Սակայն Տրիստանը զգվում է նրանց խիելուց: Ասքասացները պնդում են, որ նա սպանեց Իվենին. ստորություն է այդպես ասելը: Տրիստանն իսկական սապեռ էր և չէր խողիտողի այդպիսի մի վիժվածքի: Գորվենալն էր, որ կաղնուց մի հաստ ճյուղ պոկելով, խիեց Իվենի գանգին: Ժայթեց սև արյունը, որը հոսեց ալյանդակված ոտքերի վրա:

Նա կրկին տիրեց թագուհուն: Այլևս Իզոլդան ոչ մի ցավ չի զգում: Տրիստանը կտրեց սիրեցյալի թևերը կաշկանդող պարանները: Եվ դաշտից հեռանալով՝ Տրիստանը, Իզոլդան ու Գորվենալը գնացին Մորուայի անտառի խորքերը: Այդտեղ, հսկա ծառերի միջև, Տրիստանն իրեն ապահով է զգում, ինչպես ամբակուռ բերդի պատվարի ետևում:

Երբ արեգակը թեքվեց, նրանք կանգ առան լեռան ստորոտին. վախը հոգնեցրել էր թագուհուն. գլուխը հեռեց Տրիստանի կրծքին ու ննջեց:

Առավոտյան, Գորվենալը անտառապահից գողացավ աղեղն ու երկու սրածայր ատամնավոր նետերը, և դրանք տվեց Տրիստանին՝ հմտտ աղեղնակրիճ, որը հանկարծակիի քերեց մի այծյամի ու սպանեց: Գորվենալը չոր ճյուղերի կույտ հավաքեց, խիեց կաշծքարը և թեժ կրակ վառեց՝ միսը եփելու համար: Տրիստանը ճյուղեր կտրատեց, հյուղակ պատրաստեց և ծածկեց տերևներով: Իզոլդան փարթամ խոտեր լցրեց այնտեղ:

Այնժամ, վայրի անտառի խորքում, սկսվեց դառը, բայց սիրելի մի կյանք փախառականների համար:

## ՄՈՐՈՒԱՅԻ ԱՆՏԱՌԸ

Մենք կորցրինք աշխարհը, և աշխարհը մեզ կորցրեց, քեզ այդպես չի՝ թվում, Տրիստան, սիրելիս: Իմ սիրասունը, երբ դու ինձ հետ ես, ինձ էլ ի՞նչ է պետք: Եթե ամբողջ աշխարհը հիմա մեզ հետ լիներ, ես դարձյալ միայն քեզ պիտի տեսնեի:

(Տրիստանի վեպը՝ արձակ<sup>1</sup>)

Վայրի անտառի խորքում, հետապնդված գազանների պես բազմաշարչար, թափառում են, և երեկոները, հազվադեպ համարձակվում են վերադառնալ նախորդ օրվա սպաստանը: Ուտում են միայն վայրի կենդանու միս և կարտում են աղի ու հացի համին: Գունատվել են նիհարած դեմքերը, տատանկներից պատառոտված զգեստները դարձել են ցնցոտիներ: Իրար սիրում են, չեն տանջվում:

Մի օր, երբ անցնում էին այնպիսի մացառոտներով, որոնց երբեք կացին չէր դիպել, պատահաբար գտան եղբայր Օգրինի կրոնախոցը:

Արևի տակ, թխկենու պուրակում, մացառոտին մոտիկ՝ ձերուկին, հենակին կառչած, շարժվում էր մանրաքալը:

— Սենիոր Տրիստան,— բացականչեց նա,— իմացեք, թե ինչպիսի մեծ երդում են տվել Կոռնուայի բնակիչները: Արքայի հրամանով բոլոր վանքերին հրովարտակ է ազդա-

րարված, ըստ որի, ով ձեզ բռնի, ստանալու է հարյուր մարեք ոսկի որպես վարձատրություն, և բոլոր բարոնները երդվել են ձեզ հանձնել ողջ կամ մեռած: Չղջացեք, Տրիստան, աստված ներում է գղջացող մեղապարտներին:

— Չղջա՛լ, տե՛ր Օգրին: Ո՞ր մեղքիս համար: Գուք, որ մեզ դատում եք, գիտե՛ք արդյոք, ինչպիսի ըմպելիք խմեցինք ծովի վրա: Այո՛, անուշ խմիչքը հարբեցնում է, և ավելի շուտ՝ պիտի նախընտրեի ողջ կյանքում Իզոլդայի հետ մուրալ ճամփաների վրա և սնվել խոտերով ու արմտիքներով, քան թե առանց նրան՝ դառնալ մի հրաշալի թագավորության տիրակալը:


— Սենիոր Տրիստան, աստված լինի ձեզ օգնական, քանզի կորցրիք և՛ այս աշխարհը, և՛ այն մյուսը: Ով դավաճանում է իր տիրոջը՝ պետք է անդամահատվի երկու ձիերի տանջահնարով, պետք է այրվի թե՛ խարույկի վրա, և այլևս խոտ չի բուսնի այնտեղ, որտեղ թափվի նրա մոխիրը, և ամենայն աշխատանք այդ հողի վրա կլինի սպարդյուն, և ծառ ու կանաչ կփտեն այնտեղ: Տրիստան, վերադարձրեք թագուհուն նրան, ով հետը ամուսնացել է հոռմեական դավանանքի համաձայն:

— Իզոլդան այլևս չի պատկանում արքային: Ինքը նրան բորոտներին է տվել: Բորոտներից է, որ իվել եմ ու նվաճել: Այդուհետև Իզոլդան իմը դարձավ. ես չեմ կարող բաժանվել նրանից, ոչ էլ նա՝ ինձանից:

Նստել էր Օգրինը, որի ոտքերի մոտ Իզոլդան լալիս էր՝ գրուխը դրած այդ մարդու ձկներին, որը տատապում էր ի սեր ասածո: Ծգնավորը կրկնում էր ավետարանի սուրբ խոսքերը, բայց արտասվաթոր՝ Իզոլդան գրուխը թափահարում էր և հրաժարվում էր հավատալուց:

<sup>1</sup> Տրանսերեն արձակ վեպ, որ գրվել է մոտ 1230 թվականին և որը բազմիցս վերամշակվել ու ընդարձակվել է 13-րդ և 14-րդ դարերի ընթացքում:





— Ավա՛ղ,— ասաց Օգրինը,— ինչո՞վ կարելի է սիրուիե՞լ մեղսւղներին: Չղջա, Տրիստան, քանզի մեղայալ է նա, ով ապրում է մեղքի մեջ առանց գղջալու:

— Ո՛չ, եւ ապրում եմ և չեմ գղջում: Կվերադառնանք այն անտառը, որը մեզ ապարկեմ է և պահապան: Եկ, Իզոլդա, սիրելիս:

Իզոլդան ոտի կանգնեց: Իրարու ձեռք բռնեցին և մտան բարձր խոտերի ու թփուտների մեջ. նրանց անցնելուց հետո ծառերն իջեցրին ճյուղերը. Սիրահարներն անհետացան տերևախիտ անտառում:

Լսեցե՛ք, սենիորներ, հետաքրքիր արկածի պատմություններ: Տրիստանը խնամել էր մի որսաշուն՝ գեղեցիկ, աշխույժ. ո՛չ կոմս, ո՛չ արքա նմանը չուներին, որ լիներ այդքան ճարպիկ աղեղնաորսի ժամանակ: Ծանր Հյուզդեն էին անվանում: Հարկ եղալ, կապը վզին, նրան բանուարկել աշտարակում. այն օրվանից, ինչ դադարել էր տիրոջը տեսնելուց, հրաժարվում էր ամեն մի սննդից, թաթով քերում էր հողը, արտապում էր ու ոռնում: Ծառերը կարեկցեցին:

— Հյուզդեն,— ասում էին,— ոչ մի կենդանի այնպես չի սիրել, ինչպես դու: Այո՛, իմաստուն է Սողոմոնի խոսքը. «Ծջմարիտ բարեկամը իմ որսաշունն է»:

Եվ Մարկ թագավորը, հիշելով անցյալ օրերը, խորհում էր յուր արտում. «Այս շունը շատ խելոք է, որ այդպես լալիս է տիրոջ համար, քանզի կա՞ արդոք Կոռնուայում մի մարդ, որ լինի Տրիստանին հավասար ու արժանի»:

Երեք բարոնները եկան արքայի մոտ.

— Արքա, արձակել տվեք Հյուզդենի կապերը, իմանանք, թե տիրոջը կարոտելո՞ւց է, որ այդքան վշտանում է: Եթե

ոչ՝ հազիվ ազատ արձակված, երախը բաց ու լեզուն դուրս գցած, հետապնդելու է մարդկանց ու կենդանիների՝ նրանց կծելու համար:

Քանդում են կապերը: Նա ուսույուն է կատարում դեպի դուռը ու վազում է այն սենյակը, որտեղ մի ժամանակ գրտնում էր Տրիստանին: Ունում է, վնասում, որոնում ու վերջապես գտնում է տիրոջ հետքը: Քալլ առ քալլ անցնում է այն ճանապարհը, որով Տրիստանը գնացել էր դեպի խարույկը: Բոլորը հետևում են: Նա բարձրաձայն հաշում է և մագլցում քարայրնիվեր: Ահա մատուռի ներսում է և ցանկում է դեպի խորանը. հանկարծ դուրս է գետկում լուսամուտից, ընկնում ժայռի ստորոտին, ծուլեզրին նորից է գրտնում տիրոջ հետքը, մի պահ կանգ է առնում ծաղկած թփի մոտ, որի ետևում դարան էր մտել Տրիստանը, ապա սլանում է դեպի անտառ: Լցվում է խղճահարությանը յուրաքանչյուր ոք, ով տեսնում է Հյուզենին:

Այնժամ ասպետներն ասացին.

— Ազնիվ արքա, եկեք այլևս չհետևենք նրան. կարող է մեզ տանել այնպիսի վայր, որտեղից վերադառնալը դժվար կլինի:

Թողեցին ու վերադարձան: Անտառի խորքում շունը բարձրաձայն հաչեց, և անտառը թնդաց: Տրիստանը, թագուհին և Գորվենալը հեռվից լսեցին: «Հյուզենին է»: Նրանք վախենում են. թագավորն անկասկած իրենց հետապնդում է, ինչպես որ վայրի գազաններին է քշում որսաշներով: Խորանում են թավուտի մեջ, որի եզրին Տրիստանը կանգնում է՝ աղետը լարած: Բայց երբ Հյուզենը տեսավ ու ճանաչեց տիրոջը, ուսունց դեպի նա, ցնցեց գլուխն ու պոչը, մեջքը ծոկեց ու շրջանաձև կծկվեց: Ո՛վ է երբևիցե տեսել այսպիսի

ուրախություն: Հետո՝ վազեց դեպի Ոսկեհեր Իզոլդան ու Գորվենալը և ձիուն նույնպես ողջագորեց: Տրիստանը շատ խղճաց որսաշներ:

— Ավա՛դ, ինչպիսի՛ դժբախտություն, որ նա մեզ գտավ: Ի՞նչ կարող է անել հալածված մարդն այս շան հետ, որ դադար չունի: Դաշտերով ու անտառներով, ողջ երկրով մեկ արքան հալածում է. Հյուզենը հաշոցներով մեզ կմատնի: Ա՛հ, սիրուց ու բնածին ազնվությունից դրդված՝ եկավ իր մահը գտնելու: Պետք է, սակայն, խնայել նրան: Ի՞նչ անել: Ինձ խորհուրդ տվեք:

Իզոլդան ձեռքով շոյեց Հյուզենին և ասաց.

— Տե՛ր իմ, խնայեցե՛ք: Ես լսել եմ մի գալիացի անտառապահի մասին, որը շանը վարժեցրել էր հետևել վիրավոր եղջերուների արյան հետքերին՝ առանց հաչելու: Սիրելի Տրիստան, որքան ուրախալի պիտի լինեք, եթե ներույթուն քաշելով, քեզ հաշողվեք այդպես վարժեցնել Հյուզենին:

Նա մի պահ խորհեց, մինչ շունը լիզում էր Իզոլդայի ձեռքերը: Խղճահարվեց և ասաց.

— Ուզում եմ փորձել. ինձ համար անչափ ծանր է սպանել նրան:

Ծուռով, Տրիստանը գնում է որսի, տեղահան է անում մի եղնիկի, նետով վիրավորում է: Որսաշունն ուզում է սլանալ եղնիկի հետքերով և հաշում է այնպես բարձր, որ ամբողջ անտառն արձագանքում է: Տրիստանը խփելով լուցնում է, Հյուզենը գլուխը բարձրացնում է տիրոջ կողմը, զարմանում է, չի համարձակվում հաչել, թողնում է հետքը. Տրիստանը ոտքերի արանքում սեղմում է նրան, հետո շագանակեմո ճյուղով մտրակում երկարաճիտ կոշիկը, ինչպես անում են որսորդները՝ շներին գրգռելու համար. ըստ այդ

ազդանշանի Հյուզդենն ուզում է հաշել անոթից, բայց Տրիստանը սաստում է: Այդպես սովորեցնելով, մի ամիս չանցած, նրան վարժեցրեց որսալ անաղմուկ: Եվ երբ նետը այծյամ կամ եղնիկ էր վիրավորում, Հյուզդենը, առանց հաշելու, գնում էր ձյան, սառույցի կամ խոտի վրա մնացած հետքերով: Եթե կենդանուն նեղում էր ծառածածկ վայրում, ապա գիտեր տեղը նշել՝ ճյուղեր հավաքելով այնտեղ: Բաց դաշտավայրում սպանված որսի վրա խոտ էր հավաքում և առանց որևէ հաշոցի գալիս էր տիրոջը գտնելու:

Ամսուն անցնում է, գալիս է ձմեռը: Սիրահարներն ապրեցին ժայռի խոռոչում կծկված, և ցրտերից կարծրացած հատակին դեղին տերևների մի շեղջ էր սառցածերպերով փշապատված նրանց անկողիներ: Սիրո գորուջյան շնորհիվ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չզգացին թշվառությունը:

Վերադարձան պաշտոն եղանակները, և փարթամ ծառերի տակ սիրահարները սարքեցին իրենց հյուղակը՝ կանաչագարդ ճյուղերով: Տրիստանը մանկուց սովորել էր ծըլվրլացնել սարյակի, ճնճողուկի, սոխակի, անտառաբնակ մյուս բոլոր փետրավորների նման, և երբեմն, արձագանքելով նրա կանչին, հյուղակի ճյուղերի վրա, բազմաթիվ թռչուններ, կոկորդները փքուն, սիրերգ էին երգում ցերեկվա շոդարձակումների մեջ:

Անտառի միջով սիրահարներն այլևս չէին փախչում անվերջ թափառական, քանզի բարոններից ոչ մեկը չէր համարձակվում նրանց հետապնդել՝ իմանալով որ Տրիստանը, եթե բռնի, կկախի ծառերի ճյուղերից: Մի օր, սակայն, չորս դավադիրներից մեկը՝ Գեներոնը (Աստված նրան անիծի) որսալու խանդավառությունից տարված՝ համարձակվեց

քախտը փորձել Մորուսյի շոշակալքում: Այդ առավոտ, անտառի եզրին, ջրառատ ձորակի խորքում Գորվենալը հանել էր նծուցի թամբը, որպեսզի նա արածի թարմ խոտերի մեջ: Այնտեղ՝ տերևախիտ օթևանում, ծաղկած կանաչի վրա Տրիստանն ամուր գրկել էր թագուհուն, և երկուսով քնած էին:

Հանկարծ, Գորվենալը լսեց ոհմակի հաշոցները. շները մեծ թափով հետապնդում էին մի եղջերու, որն իրեն նետեց դեպի ջրառատ ձորակը: Հեռու դաշտում երևաց որսորդը: Գորվենալը ճանաչեց նրան: Գեներոնն էր, այն մարդը, որին Տրիստանն ստում էր բոլորից ավելի: Միայնակ, առանց զինակրի, խթանելով երիվարի արնակալած կողերը և մրտակելով վիզը՝ վարգում էր դեպի ձորակը: Ծառի ետևում դարան մտած՝ Գորվենալը ահա հետևում է. Գեներոնն արագ է գալիս, ավելի դանդաղ պիտի լինի վերադարձը:

Նա անցնում է: Գորվենալը թաքստոցից դուրս է թռչում, բռնում է ձիու սանձը, և այդ պահին վերհիշելով այն ամբողջ չարիքը, որ արել էր այդ մարդը, սպանում է, անդամահատում և հեռանում, հետը տանելով կտրված գլուխը:

Այնտեղ, տերևածածկ օթևանում, ծաղկած խոտի վրա, իրար ամուր գրկած՝ քնել էին Տրիստանն ու թագուհին: Գորվենալը ներս մտավ անաղմուկ՝ մեռածի գլուխը ձեռքով պահած:

Անգլուխ մարմինը ծառի տակ գտնելով՝ որսորդները, մահից վախեցած, փախան խելակորույս, կարծես Տրիստանն արդեն նրանց հետապնդում էր: Այդ ժամանակից սկսած՝ էլ ոչ ոք չէկավ այդ անտառը, որս անելու:

Որպեսզի արթնանալիս իր տերն ուրախանար, Գորվե-

նալը կտրած գլուխը մազերից կապեց հյուղակի պունհին. խիտ ճյուղերն այն տերևապատում էին:

Տրիստանն արթնացավ ու տեսավ տերևների ետևում մասամբ թաքնված մի գլուխ, որ նայում էր: Ծանաչելով Գեներլոնին՝ ահա նա վախեցած վեր է թռչում: Բայց ուսուցիչը բարձրադաղակ ասում է.

— Հանգստացիր, մեռած է: Ես այս թրով սպանեցի: Որդյակ, նա քո թշնամին էր:

Հրճվանքի պոթոկում. սպանված է Գեներլոնը, նա, որին ասում էր Տրիստանը:

Այնուհետև ոչ ոք չհամարձակվեց մտնել վայրի անտառը. սարսափը պահպանում է մուտքը, և սիրահարները տերուտիրակն են այնտեղ: Այն ժամանակ էր, որ Տրիստանը սարքեց Անվրեպ աղեղը, որը միշտ դիպուկ էր նետահարում թիրախը՝ լինել մարդ թե անասուն, և նետահարում էր ճիշտ նշանառված տեղը:

Սենիորներ, ամառային մի օր էր, հնձի ժամանակ, Չատիկից քիչ անց, և թռչունները նախարշապույսի ցողերի մեջ մոտակա այգաբացն էին ավտում: Տրիստանը հյուղակից դուրս եկավ, թուրը կապեց մեջքին, վերցրեց Անվրեպ աղեղը և անտառի միջով, միայնակ, գնաց որսի: Նախքան կիջնի կրեկոն, մեծ պատուհաս է թափվելու նրա գլխին: Ո՛չ, չեն եղել կրեկոն սիրահարներ, որոնք այսքան սիրելին իրարու և հատուցելին այսքան դաժան:

Երբ Տրիստանը որսից վերադարձավ, ծանր տոթից թըմբած՝ թագուհուն առավ թևերի մեջ:

— Ո՛ր էիր գնացել, սիրելի՛ս:

— Մի եղջերուի ետևից, որն ինձ անչափ հոգնեցրեց: Նա-

յիր, քրտինքը հոսում է վրայիցս: Ուզում եմ պառկել ու քնել:

Կանաչ ճյուղերի հովանու տակ, թարմ խոտերի շեղջի վրա սառչիկը պառկեց Իզոլդան: Տրիստանը պառկեց կողքին և մերկացրած թուրը մեկնեց իրենց մարմինների միջև: Բարեբախտաբար, հագնված էին: Թագուհին յուր մատին ուներ գմբխազարդ ոսկյա մատանի՝ Մարկի հարսանեկան նվերը. մատներն այնքան քարակել էին, որ մատանին կարող էր դուրս սահել ու կորչել: Այդպես պառկել էին իրար ամուր սեղմված. Տրիստանը մի թևով գրկել էր սիրեցչայի պարանոցը, իսկ մյուս թևը գցել էր նրա գեղեցիկ մարմնի երկարությամբ: Սիրահարների շրթունքները, սակայն, իրար չէին դիպչում ամենևին: Ջեփյոտի հեքն անգամ չկար, ոչ մի տերև չէր դողում: Տերևածածկ տանիքի միջով արեգակի ճառագայթն ընկնում էր Իզոլդայի դեմքին, որը փայլում էր սառույցի նման:

Պատահեց այնպես, որ անտառապահներից մեկի աչքովն ընկավ ծառերի տակ մի տեղ, որի խոտերը տրորված էին: Նախորդ օրը սիրահարներն այդտեղ էին պառկել: Թեև չճանաչեց մարմինների թողած գոգավորությունները, բայց հետևելով հետքերին՝ գտավ սպաստարանը: Տեսավ, որ քնած են, ճանաչեց և փախավ՝ երկյուղելով Տրիստանի ահարկու զարթոնքից: Փախավ մինչև Տիևաժեղ, որ երկու մղոն հեռու էր այդտեղից, բարձրացավ սրահի աստիճաններով և գտավ արքային՝ համախմբված վառարների հետ նիստ գումարելիս:

— Բարեկամ, ինչո՞ւ ես եկել այստեղ, այն էլ հեկհե, ասես շների ետևից երկար վազած շնապահ լինես: Արդյոք դո՞ւ էլ ես պահանջում արդարադատություն քեզ հասցված վնասի համար: Ո՛վ քեզ վտարեց իմ անտառից:

Անտառապահը նրան մի կողմ տարավ ու ցածրաձայն  
ասաց.

— Ես տեսա թագուհուն ու Տրիստանին: Քնած էին, վա-  
խեցա:

— Որտե՞ղ ես տեսել:

— Մորուսի անտառի մի հյուղակում: Պառկել էին իրար  
գրկած: Ծուռ արի, եթե ուզում ես վրեժդ լուծել:

— Գնա և ինձ սպասիր անտառի եզրին, Կարմիր Խաչի  
տակ: Ոչ ոքի չհայտնես քո տեսածի մասին. արժաթ ու ու-  
կի կտամ, ինչքան որ ցանկանաս:

Ահա անտառապահը գնում ու նստում է Կարմիր Խաչի  
տակ: Անհիծյալ լինի լրտեսը: Բայց նա մեռնելու է ամոթալի  
մահով, ինչպես շուտով ձեզ հայտնի կլինի այս պատմու-  
թյունից:

Արքան Ըծույզը թամբել տվեց, կապեց թուրը և, առանց  
ուղեկցորդի, աննկատելի դուրս ելավ քաղաքից: Միայնակ  
արշավելիս՝ վերհիշեց այն գիշերը, երբ քրոջորդուն բռնեց  
հանցանքի պահին. ինչպե՞ս էր փաշիպայում Տրիստանին  
լուսերես, գեղեցկունի Իզոլդան: Եթե հանկարծակիի քերի,  
դաժանորեն պատժելու է այդ մեծ մեղքերի համար ու վրեժ-  
խնդիր է լինելու անարգողներից:

Կարմիր Խաչի մոտ գտավ անտառապահին:

— Գնա առջևից. ինձ տեղ հասցրու ուղիղ և արագ:

Նրանց պարտրում են հսկա ծառերի սև սուվերները:  
Արքան հետևում է լրտեսին: Ապավինում է իր թրին, որը մի  
ժամանակ հասցրել է փառավոր հարվածներ: Ա՛հ, եթե Տրիս-  
տանն արթնանա, երկուսից մեկը, աստված գիտի որ մեկը,  
մահացած ընկնելու է տեղում: Վերջապես անտառապահը  
ցածրաձայն ասաց.

— Մոտենում ենք, արքա:

Նա ասպանդակը պահեց, հետո ձիու սանձը կապեց կա-  
նաչ խնձորենու ճյուղերին: Ծարունակեցին մոտենալ և հան-  
կարծ, մի արևոտ քացատում, տեսան ծաղկազարդ հյուղակը:

Ահա, արքան արձակում է թիկնոցի նուրբ ոսկեղեն ճար-  
մանդները, այն դեմ է շարտում, և ի հայտ է գալիս գեղեցիկ  
մարմինը: Թուրը դուրս է քաշում պատշաճից և ի սրտե ինքն  
իրեն կրկնում է, որ կուզենա մեռնել, եթե նրանց չսպանի:  
Անտառապահը հետևում էր թագավորին. Մարկը ետ դառ-  
նալու նշան է անում:

Միայնակ մտնում է հյուղակը և թափահարում է մերկաց-  
րած թուրը... Ա՛հ, ինչպիսի՞ վիշտ, եթե հարվածի: Բայց  
տեսնում է, որ նրանց շրթունքներն իրար չեն դիպչում, և  
մի մերկացրած թուր դրված է մարմինների միջև:

«Աստվա՛ծ իմ,— ասաց ինքն իրեն,— ինչ եմ տեսնում ես  
այստեղ: Արդյոք պե՞տք է նրանց սպանել: Այս անտառում  
աղքան երկար ապրելուց հետո, եթե սիրելիս լինեին հան-  
ցավոր սիրով, արդյոք այս թուրը կդնեի՞ն հրեճ միջև: Եվ  
ո՞վ չգիտի, որ երկու մարմիններն իրարից բաժանող մերկ  
թուրը ժուժկալուծյալ երաշխավորն է և պահապանը: Եթե  
հանցավոր սիրով սիրեին, պիտի պառկեի՞ն այսպես մաք-  
րաբար: Ո՛չ, չեմ սպանելու. մեծագույն մեղք պիտի լիներ  
նրանց թրատելը: Իսկ եթե քնած Տրիստանին արթնացնեմ,  
և մեզանից մեկնումեկը սպանվի, ապա երկար պիտի չարա-  
խոսեն մեր մասին՝ ամոթանքի արժանացնելով: Բայց ես  
այնպես կանեմ, որ արթնանալիս՝ իմանան, որ քնած եմ  
գտել ու չեմ ցանկացել նրանց մահը, և որ աստված շնոր-  
հել է ողորմածությունը»:

Արեգակը, թափանցելով հյուղակի ներքը, այրում էր

Իզոլյայի ճերմակ երեսը. արքան նայեց իր սամուրազարդ ձեռնոցներին. «Իզոլյան էր,— մտածեց,— որ մի ժամանակ դրանք բերել էր Իուլանդիայից ինձ համար...»: Ձեռնոցները դրեց տերևների վրա՝ ծածկելու համար այն բացվածքը, որ տեղից ներթափանցում էր ճառագայթը. հետո կամացուկ, թագուհու մատից հանեց իր նվիրած գնդախառնազարդ մատանին. այն ժամանակներում հարկ եղավ մի քիչ ուժ գործարքել մատին անցկացնելու համար. հիմա մատներն այնքան էին բարակել, որ մատանին հեշտությամբ դուրս եկավ. դրա տեղը արքան անցկացրեց այն մատանին, որ Իզոլյան նախկինում նվիրել էր իրեն: Հետո վերցրեց սիրահարներին բաժանող թուրը. հենց նույնն էր, և ինքը այն ճանաչեց, նույն թուրը, որի շեղքը ջարդված էր Մոռուլտի գանգոն հարվածելուց. դրա տեղը դրեց իր թուրը, դուրս եկավ օթևանից, թուրով թամբին և անտառապահին ասաց.

— Դե, հիմա փախիր և քեզ փրկիր, եթե կարող ես:

Այն ժամանակ, մի տեսիլ հայտնվեց քնած Իզոլյայի երազում. ինքը գտնվում է շքեղ վրանի տակ, մեծ անտառի մեջտեղում: Երկու սույուն հարձակվել են վրան և իրար հետ կռվում են իրեն տիրանալու համար... Նա մի ճիշտ արձակեց և արթնացավ. սամուրազարդ, ճերմակ ձեռնոցներն ընկան նրա կրծքին: Ծիշը լսելուց՝ Տրիստանը թուրով ոտքի, ուզեց թուրը վերցնել ու ոսկյա դաստակից ճանաչեց թագավորինը: Եվ թագուհին մատին տեսավ Մարկի մատանին: Նա բացականչեց.

— Տեր իմ, ինչպիսի՞ դժբախտություն: Արքան մեզ հայտնաբերել է:

— Այո՛,— ասաց Տրիստանը,— նա տարել է իմ թուրը. միայնակ էր, վախեցավ ու գնաց զինակիցներին բերելու:

Կվերադառնա ու մեզ այրել կտա ամբողջ ժողովրդի առջև: Փախչենք...

Եվ երկար օրեր, Գորվենայի ուղեկցությամբ, նրանք փախան դեպի գալիացիների երկիրը, մինչև Մորուայի անտառի ծայրամասերը: Հանուն սիրո՛ ինչքա՛ն տառապանքներ:

## Գ Լ ո Վ Ս X

### ՃԳՆԱՎՈՐ ՕԳՐԻՆԸ

Նրանք կյանք են վարում դառն ու դճնակ.  
Սակայն իրենց սիրո գործության շնորհիվ,  
Ոչ մեկը, ոչ մյուսը չեն գգում թշվառությունը:  
(Քերոլ)

Երեք օր անց, վիրավոր եղջերուի հետքերով երկար վազելուց հետո, երբ արդեն մույթն ընկել էր, Տրիստանը խավար անտառում սկսեց խորհել.

«Ո՛չ, երկյուղելուց չէ, որ մեզ խնայեց: Իմ թուրը վերցրել էր, ես քնած էի, այդ վիճակով նա էր ուժեղ, կարող էր խփել: Ինչի՞ն էին պետք զինակիցները: Իսկ եթե ուզում էր ինձ ողջ բռնել, ապա ինչո՞ւ զինաթափելուց հետո նա պիտի թողներ սեփական թուրը: Ա՛հ, քեզ ճանաչեցի, հայր, ոչ թե վախից, այլ սիրուց ու խղճահարությունից է, որ ուզեցիր մեզ ներել: Այդ ո՞վ կարող էր, առանց իրեն ստորացնելու, հետաձգել հատուցումը: Ո՛չ, նա ամենին էլ չի ներել, բայց հասկացել է, որ խարույկի մոտ, մատուռից ցատկելու և բորոտների վրա իմ դարանամուտ հարձակվելու ժամանակ աստված մեզ դարձել էր պահապան: Այնժամ հիշած կլինի»

այն մանկանը, որն ատենոք տալիդի Գվագակցությամբ ոտ-  
քերի մոտ երգում էր, և Լոռուայի իմ երկիրը, որ թողել էի,  
որպեսզի ինձ կարտեւոց նա չտատապի, և Մոռոտի Գի-  
զակն ու Կոռնուայի պատիվը փրկելու համար իմ թափած  
արյունը: Հիշած կլինի, որ հանցանքս չընդունեցի, բայց  
ապարդյուն պահանջեցի դատ, իրավունք ու մեղամարտ: Եվ  
ազնվությունը նրան մղեց հասկանալու այն բաները, որ  
չըջապատող մարդիկ չեն հասկանում: Բանն այն չէ, որ գի-  
տի կամ երբևէ կարող է իմանալ ճշմարտությունը մեր սիրո  
մասին, այլ այն, որ տարակուսում է, հույս ունի, զգում է,  
որ չեն ստել. ցանկանում է, որ դատ ու մեղամարտով ապա-  
ցուցեմ իմ անմեղությունը: Ա՛հ, սիրելի մորեղբայր, մեղա-  
մարտում հաղթանակել աստծո օգնությամբ, հաշտություն  
ձեռք բերել և ձեզ համար նորից կրել զրահ ու սաղավարտ...  
Այդ ի՞նչ անցավ մտքովս: Արքան կրկին ետ վերցնի Իզոլ-  
դայի՞ն, ես իմ ձեռքո՞վ հանձնեմ նրան: Ավելի լավ չէ՞ր, որ  
ինձ սպաներ, երբ բուն էի մտել: Ատենոք, արքայից հալած-  
ված՝ կարող էի ստել ու մոռանալ: Իզոլդային թողել էր բո-  
րոտների համար. թագուհին այլևս նրան չէր պատկանում,  
ինձ էր: Բայց ահա իր կարեկցությամբ արթնացրեց իմ հա-  
մակրանքն ու վերանվաճեց թագուհուն: Թագուհո՞ւն. թա-  
գուհի էր նա դուրսկում, իսկ այս անտառում ապրում է նոր-  
տի նման: Ես այդ ի՞նչ արեցի Իզոլդայի երիտասարդությու-  
նը: Մետաքսապատ սենյակների փոխարեն տվեցի այս վայ-  
րի անտառը, հյուղակ՝ շքեղ անջարանի փոխարեն, և ինձ  
համար է, որ ընտրել է այս վատահամբավ ուղին: Տեր աստ-  
ծուն՝ աշխարհի տիրակալին, թողություն եմ հայցում և աղա-  
չում եմ, որ ինձ ուժ տա Իզոլդային վերադարձնելու: Չէ՞ որ  
նա Մարկ թագավորի կինն է, և արքան հետն ամուսնացել

է Հոռոմի դավանանքի համաձայն, և երկրի մեծահարուստ  
մարդիկ վկաներ էին:

Տրիստանը հեռվում է աղեղին և խոր հատաչում գիշե-  
րային խավարում:

Տատասկներով շրջափակված փոսի մեջ, որ դարձել էր  
օթևան, Ռուկեհեր Իզոլդան սպասում էր Տրիստանի վերա-  
դարձին: Լուսնի ճառագայթի լույսի տակ տեսավ փայլը ոսկե-  
յա մատանու, որ Մարկն անցկացրել էր մատին: Եվ խորհեց.

«Նա, ով ինձ վեհանձնորեն տվեց այս ոսկեյա մատանին,  
գայրացած մարդը չէ, որն ինձ հանձնում էր բորոտներին:

Ո՛չ, նա սրտացավ տերն է, որն ինձ դիմավորեց ու պաշտ-  
պանեց այն օրից, ինչ ես ոտք դրի այս հողի վրա: Ինչպես  
էր սիրում Տրիստանին: Բայց ես եկա և ի՞նչ արեցի: Չէ՞ որ  
Տրիստանը պետք է ապրեր արքայի պալատում՝ շրջապատ-  
ված հարյուր պատանյակներով, որոնք ծառայելով հրա տըն-  
օրիևության տակ, պիտի ձգտեին արժանանալ ասպետի կոչ-  
մանը: Չէ՞ որ արշավելով երկրներկիր, արքունիքից ար-  
քունիք՝ Տրիստանը պետք է որոներ արկած ու պարգև: Բայց  
ինձ համար մոռանում է ամեն ասպետականություն և ար-  
քունիքից արտաքսված, այս անտառում հալածակաև ապ-  
րում է վայրենու նման...»

Այնժամ, լսեց, թե ինչպես են խշխշում չորացած հյուղերն  
ու տերևները մոտեցող Տրիստանի քայլերից: Ըստ սովորու-  
թյան Իզոլդան եկավ ընդառաջ՝ զենքերը վերցնելու: Նրա  
ձեռքերից վերցրեց Անվրեպ աղեղն ու նետերը և արձակեց  
թրի ճարմանդները:

— Սիրելիս, — ասաց Տրիստանը, — սա Մարկ թագավորի  
թուրն է, որը պետք է մեզ սպաներ, բայց խնայեց:

Իզոլյան վերցրեց թուրք և համբուրեց ոսկյա դասուակը, ու Տրիստանը տեսավ, որ նա լաց է լինում:

— Սիրելիս, — ասաց, — եթե կարողանայի համոզել Մարկ թագավորին, որ ինձ թույլ տա մեճամարտում ապացուցելու, որ երբեք, ոչ բանիվ, ոչ գործով ձեզ չեմ սիրել մեղապարտ սիրով, ապա Լիդանից մինչև Գյուրհամ նրա թագավորության շրջանակներում ապրող ամեն մի ասպետ, հակաճառելու դեպքում, մարտասպարեզում կդառնար իմ ախոյանը: Այնուհետև եթե արքան ինձ հանդուրժեր ու թողներ շքախմբում, նրան կծառայեի ասպետական պատվախնդրությամբ, ինչպես իմ տիրոջն ու հորը: Իսկ եթե նախընտրեր ինձ հեռացնել ու ձեզ պահել, կզնայի ֆրիզների մոտ կամ Բրետան, որպես ընկեր հետս վերցնելով միայն Գորվենային: Բայց ուր էլ որ գնամ, թագուհի, ամենուրեք ու միշտ ձերը պիտի լինեմ: Իզոլյա, ես չեի խորհի այս բաժանման մասին, թե չլինեք, գեղեցկուհի, այն ծանր թշվառությունը, որ տանում եք ինձ համար այս ամսյի վայրերում:

— Տրիստան, հիշիր այն խրճիթում ապրող ճգնավոր Օգրիսին: Վերադառնանք նրա մոտ: Ի՞նչ լավ կլինեք, թե կարողանայինք մեր աղաչանքներով ակնկալել երկնային հզոր արքայի ողորմածությունը, Տրիստան, սիրելիս:

Արթնացրին Գորվենային... Իզոլյան նստեց ճծույզին, որի սանձից բռնած՝ Տրիստանը քայլեց ամբողջ գիշեր, մի վերջին անգամ անցան սիրասուն անտառի միջով. անխոս գնում էին:

Առափողջան հանգստացան, ապա նորից քայլեցին, մինչև որ հասան ճգնարան: Մատուռի շենքին Օգրիսը գիրք էր կարդում: Հեռվից տեսավ ու կանչեց հոգածությամբ.

— Բարեկամներ, սերն ինչպես է ձեզ հալածում թշվա-

ռությունից թշվառություն: Որքա՞ն է տևելու այդ խելագարությունը: Արիացեք, զղջացեք, վերջապես:

Տրիստանն ասաց.

— Լսեցեք, տեր Օգրիս: Մեզ օգնեք, որ կարողանանք համաձայնության գալ թագավորի հետ: Ես կվերադարձնեմ թագուհուն ու կզնամ հեռու, Բրետան կամ ֆրիզների մոտ: Մի օր, եթե արքան կամի հանդուրժել իմ ներկայությունը, կվերադառնամ ու կծառայեմ նրան, ինչպես որ հարկն է:

Ճգնավորի ոտքերին խոնարհված՝ Իզոլյան շուր հերթին տխրությամբ ասաց.

— Այսպես չեմ ապրելու ես այլևս: Չեմ ասում, թե զղում եմ, որ սիրել եմ ու սիրում եմ Տրիստանին, որին և սիրելու եմ շարունակ և ընդմիջտ, բայց մեր մարմինները հետապստ բաժանված են լինելու իրարից:

Ճգնավորն արտասպեց և աղոթեց աստծուն.

— Աստված ամենազոր և երկնային սիրելի թագավոր: Փառք քեզ, տեր, որ թույլ տվիր ապրեմ այնքան, որ կարողանամ օգնել այս մոլորյալներին:

Այնուհետև նրանց տվեց իմաստուն խորհուրդներ, ապա վերցրեց թանաք ու մագաղաթ և գրեց նամակ, որի մեջ Տրիստանը արքային առաջարկում էր գալ համաձայնության: Գրեց այն բոլոր խոսքերը, որ ասաց Տրիստանը, և Տրիստանը մատանիով կնքեց նամակը:

— Սա ո՞վ պիտի տանի, — հարցրեց ճգնավորը:

— Ես կտանեմ:

— Ո՛չ, սեճիոր Տրիստան, դուք ձեզ վտանգի չպետք է ենթարկեք, ինքս կզնամ, լավ եմ ճանաչում դոյակի բնակիչներին:

— Հարկավոր չէ, ազնիվ տեր Օգրիս, թագուհին կմնա



ճգնարանում, իսկ ես, մութն ընկնելուն պես, կզնամ իմ զինակրի հետ, որը նժույզս կպահի:

Երբ խավարն իջավ անտառի վրա, Տրիստանը Գորվենալի հետ ուղևորվեց: Տինտաժելի դարպասների մոտ բաժանվեց իր զինակրից: Պատնեշների վրա փողհարում էին պահակները: Նա խանդակն անցավ և կյանքը վտանգելով գնաց քաղաքի միջով: Ինչպես անցյալում, անցավ պտղաշգուր սրածայր ցցապատնեշի վրայով, նորից տեսավ մարմարյա ավազանը, աղբյուրն ու մեծ սոճին, ապա մոտեցավ պատուհանին, որի ետևում քնում էր թագավորը: Կամացուկ կանչեց նրան: Մարկն արթնացավ:

— Ո՛վ ես դու, որ գիշերով կանչում ես ինձ այսպես տարածամ:

— Ես Տրիստանն եմ, տեր իմ, ձեզ անմալ եմ բերել: Այն թողնում եմ այստեղ՝ պատուհանի երկաթյա ձողերի միջև: Ձեր պատասխանը կապել տվեք Կարմիր Խաչին:

— Ասածո սիրուն, ազնիվ քրոջորդի, սպասիր ինձ:

Նա սլացավ դեպի շենքը և, երեսն ուղղելով դեպի գիշերային խավարը, երեք անգամ աղաղակեց.

— Տրիստա՛ն, Տրիստա՛ն, Տրիստա՛ն, որդյա՛կ իմ:

Բայց Տրիստանը փախել էր: Հասավ իր զինակրին ու թեթև ուսոյունով թռավ թամբին:

— Խելագա՛ր,— ասաց Գորվենալը,— շտապիր, փախչենք այս անմիտվ:

Վերջապես հասան ճգնարան, որտեղ իրենց ապաստդ ճգնավորին գտան աղոթելիս, իսկ Եզդդային արտաավելիս:

### ՎՏԱՆԳԱՎՈՐ ԾԱՆԾԱՂՈՒՏԸ

Լսեցեք, դուք՝ բոլորդ, որ անցնում եք այս ճամփով, Եկեք այստեղ, և ձեզանից չորաքանչյուրը կտեսնի, Թե գոյություն ունի՞ ցավ, ավելի սուսկալի, քան իմն է. Մահը սպառնալիքի տակ է պահում Տրիստանին:

(Մահվան երգ)

Մարկը հրամայեց արթնացնել իր խոստովանահորը<sup>1</sup> ու նրան պարզեց նամակը: Հոգևորականը կնքամոմը պոկեց և նախ՝ Տրիստանի անունից ողջունեց արքային, ապա հմտորեն վերծանելով գրված խոսքերը՝ հայտնեց այն, ինչ հայցում էր Տրիստանը: Մարկն անխոս ունկնդրում էր և ի սրտե նրճվում, քանզի դեռ սիրում էր թագուհուն:

Իր մոտ հրավիրեց հատկապես ամենաարժանավոր բարոններից, և երբ բոլորը համախմբվեցին, ու լուրջուն տիրեց, նա ասաց.

— Սենիորներ, ստացել եմ այս նամակը: Ես ձեր թագավորն եմ, դուք իմ հպատակները: Լսեցեք այն ամենը, ինչ խնդրում են ինձանից, ապա խորհուրդ տվեք, քանի որ խորհուրդ տալը նույնպես ձեր պարտքն է:

Հոգևորականը ոտքի ելավ, երկու ձեռքով քանդեց նամակի ոլորանը և թագավորի աջև կանգնած.

— Սենիորներ,— ասաց,— Տրիստանը նախ ողջույն ու

<sup>1</sup> Խոստովանահայր— այստեղ նկատի ունենք դոյակին կից եկեղեցու ավագ հոգևորականը: Միջին դարերում նույնիսկ ամենաերևելի անձնավորությունները գրել-կարդալ չգիտեին, և այդ նպատակների համար օգտվում էին հոգևորականության ծառայություններից:

սեր է հղում թագավորին ու բոլոր բարոններին: «Արքա, ավելացնում է նա, երբ հրեշիւն սպանեցի ու նվաճեցի Իռլանդիայի թագավորի առջկան, տերը եւ դարձաւ և ունեի իրավունք նրան պահելու ինձ համար, սակայն այդ չցանկացաւ ամենին: Իզոլդային բերեցի Կոնոնայ և հանձնեցի ձեզ ի տնօրհնություն: Բայց հետը հազիվ էիք ամուսնացել, որ դավադիրները հավատացրին իրենց ստերը: Հայրույթի մոլուցքին անձնատուր՝ դուք, փրեյի մորեղբայր և իմ տեր, ուզեցիք մեզ այրել առանց դատաստանի: Բայց աստիճան եղաւ կարեկից, մենք աղաչեցինք, նա ազատեց թագուհուն, և այդ էր արդարը: Ես նույնպէս, նետվելով բարձր ծայրից, փրկվեցի աստճո ամենագորության շնորհիվ: Այնուհետև ի՞նչ եմ արել, որ լինի դատասպարտելի: Թագուհին բորոններին էր տրված, շտապեցի օգնության և խլեցի: Կարո՞ղ էի չընդատաշել նրան, ով անմեղ լինելով հանդերձ, քիչ էր մնացել մեռնի իմ պատճառով: Հետը փախաւ անուտի միջով. կարո՞ղ էի արդոք թագուհուն ետ բերելու համար դուրս գալ անուտից և իջնել դաշտավայր: Չէ՞ որ դուք հրամայել էիք բռնել մեզ ողջ կամ մեռած: Սակայն այսօր, ինչպէս և այն ժամանակ, ազնիվ տեր, պատրաստ եմ մարտահրավերի կոչել բոլոր նրանց, ովքեր կուզենան մենամարտել՝ պնդելով, որ երբևիցե ես՝ թագուհուն կամ թագուհին՝ ինձ սիրել է այնպիսի սիրով, որ դա անարգանք լինի ձեզ համար: Նշանակեցեք մենամարտը. ոչ մի հակառակորդից չեմ հրաժարվի և եթե չսպացուցեմ իմ արդարացիությունը, ինձ այրել տվեք հպատակների ներկայությամբ: Բայց եթե հաղթանակեմ, և ձեզ հաճո լինի նորից ընդունել լուսերես Իզոլդային, ապա բարոններից ոչ մեկը չի կարողուան ինձանից լավ ծառայել ձերդ ազնկությանը: Եթե, ընդհակառակը, դուք

չեք զգա իմ ծառայության կարիքը, ապա ես ծովը կանցնեմ ու կզինվորագրվեմ Գալուայի արքային կամ ֆրիզներին, և այլևս երբեք չեք լսի իմ մասին: Տեր իմ, խորհուրդ հրավիրեցեք և եթե չհանգեք ոչ մի համաձայնության, Իզոլդային ետ կտանեմ Իռլանդիա, այնտեղ, որտեղից վերցրել եմ. նա ի՞ր երկրում կլինի թագուհի»:

Երբ Կոնոնայի բարոններն իմացան, որ Տրիստանն իրենց հրավիրում է մենամարտի, բոլորը թագավորին ասացին.

— Տիրակա՛լ, ընդունիր թագուհուն: Ցնորված են, ովքեր զրպարտել են Իզոլդային: Իսկ Տրիստանը, ինչպես ինքն է ասում, թող զնա պատերազմի Գալուայի արքայի կամ ֆրիզների համար: Հայտնիր նրան, թող վերադարձնի Իզոլդային որոշակի մի օր, ինչքան շուտ, այնքան լավ:

Արքան երեք անգամ հարցրեց.

— Ոչ ոք չի՞ ելնում Տրիստանին մեղադրելու:

Բոլորը լուռ էին: Այնժամ նա խստովանահորն ասաց.

— Որեմն, ամենայն արագությամբ շարադրեցեք մի անմակ. դուք լսեցիք, թե ինչպիսին պիտի լինի բովանդակությունը: Ծտապեցեք գրել. Իզոլդան շատ տանջվեց, անչափ ավելի, քան բաժին է ընկնում երիտասարդ աղջիկներին: Մուրճն ընկնելուց առաջ, անմակը պետք է կապված լինի Կարմիր Խաչի ճյուղից: Արա՛գ:

Եվ ավելացրեց.

— Կարեք նաև, որ ես երկուսին էլ հղում եմ սեր ու ողջույն:

Մտո կեսգիշերին Տրիստանն անցավ Ճերմակ Տափաստանի միջով, գտավ անմակը և բերեց տվեց ճգնավոր Օգրինին: Ճգնավորը կարդաց անմակը. իր բոլոր բարոնների խորհուրդին անալով՝ Մարկը համաձայն էր ետ վերցնել

Իզոլդային, բայց չէր ցանկանում Տրիստանին պահել որպես զինակցի: Երեք օր անց Վտանգավոր Ծանձաղուտի մոտ նա թագմոմն պետք է հանձնէր Մարկ թագավորին ու դրանից հետո հեռանար ծովից այն կողմը:

— Աստված իմ,— ասաց Տրիստանը,— քեզ կորցնելն ինչպիսի՞ վիշտ է, սիրելիս: Սակայն դա անհրաժեշտ է, քանզի այժմ կկարողանամ ձեզ ազատել այն տանջանքից, որ կրում եք ինձ համար: Երբ վրա հասնի մեր անջատման պահը, կտամ մի ընծա՝ իմ սիրո գրավականը: Այն անձանոթ երկրից, ուր մեկնելու եմ ես, սուրհանդակ կուղարկեմ. նա ինձ կհաղորդի ձեր ցանկությունը, սիրելիս, և ստացին իսկ կանչին անապով, հեռավոր երկրից կշտապեմ ծառայություններս մատուցելու:

Իզոլդան հառաչեց և ասաց.

— Տրիստան, թո՛ղ ինձ մոտ քո շունը՝ Հյուզդենը: Երբեք ոչ մի ցեղական որսաշուն չի խնամվի ավելի հոգատարությամբ: Նրան տեսնելիս՝ քեզ պիտի հիշեմ, և իմ թախիծը պիտի նվազի: Սիրելիս, ես ունեմ կանաչ հասպիսյա մատանի, վերցրու և, որպես քո սիրո գրավականը, պահիր մատիդ: Եթե երբևիցե որևէ մեկը ներկայանա իբրև քո սուրհանդակը, ինչ էլ որ անի կամ ասի, չեմ հավատա, մինչև որ ցույց չտա այս մատանին: Բայց հենց որ տեսնեմ, ոչ մի գործություն, ոչ մի արքայական արգելք չեմ խոչընդոտի ինձ կատարելու այն, ինչ որ խնդրած կլինես՝ լինի դա ողջամտություն թե խելագարություն:

— Սիրելի՛ս, քեզ եմ տալիս Հյուզդենը:

— Սիրելի՛ս, պարզև թող լինի քեզ այս մատանին:

Տրիստանն համբուրեց Իզոլդայի շրթունքները, Իզոլդան համբուրեց Տրիստանի շրթունքները:

Եվ այսպես, սիրահարներին թողնելով ճգնարանում, Օգրինը հենակն առած, ճանապարհ ընկավ դեպի Մոն<sup>1</sup>: Այնտեղ գնեց կիսասպիտակ կիսամոխրագույն սկոտի, ինչպես և սամույրազարդ մուշտակներ, ծիրանի և հրակարմիր կերպասներ ու շուշանից էլ ձեռնակ վուշից վերնաշապիկ ու ոսկյա հեծեղասարքով շքերթային նժույգ, որն արշավում էր դանդաղ ու շորորուն: Մարդիկ ծիծաղում էին՝ տեսնելով որ այդպիսի տարօրինակ ու սքանչելի գնումների համար նա միտում է տարիների ընթացքում հավաքած դեղինները: Բայց ձերուսին թանկագին հյուսվածքները բեռնեց նժույգին ու վերադարձավ Իզոլդայի մոտ:

— Թագուհի՛, ձեր զգեստները պատառոտվել են: Ընդունեցեք այս ընծաները, որ ավելի չքան լինեք այն օրը, երբ գնաք Վտանգավոր Ծանձաղուտ: Վախենում եմ՝ դրանք ձեզ դուր չգան: Անփորձ եմ ես կանացի զարդագեստներ ընտրելու մեջ:

Մինչ այդ՝ արքայական հրովարտակները Կոնոուայով մեկ ազդարարում էին, որ երեք օր անց՝ Վտանգավոր Ծանձաղուտում, Մարկը հաշտվելու է թագմոմո հետ: Տիրուհիներ ու ասպետներ խմբովին շտապեցին դեպի հավաքավայրը: Բոլորը ցանկանում էին տեսնել Իզոլդա թագմոմոն, բոլորը սիրում էին նրան, բացի երեք դավադիրներից, որոնք դեռ ողջ էին:

Բայց այդ երեքից մեկը մեռնելու է թրի հարվածից, մյուսը նետահար է լինելու, երրորդը՝ ջրահեղձ: Իսկ անտառապահին, ազնիվ Պերինիսը՝ Խարսիշահները, անտառում

<sup>1</sup> Մոն— Մոն-Սեն-Միշել: Այդպես են անվանում Կոնոուայի մի լեռը, որը գտնվում է Մագարիոն-Ռոզ գյուղի դիմաց:

աստկացնելու է մահակի հարվածներով: Այդպես, աստված, որն ասում է ամեն վայրագության, սիրահարների վրեժն է լուծելու նրանց թշնամիներից:

Հավաքույթի նշանակված օրը, Վուսնգավոր Ծանծաղոտում, հեռվից շողշողում էր ամբողջ դաշտավայրը, որը ծայրեծայր ծածկված-գուգված էր բարոնների շքեղ վրաններով: Անտառում Տրիստանն արշավում էր Իզոլդայի հետ, և դարանից գգուշանալով՝ գրահն էր հագել ցնցոտիների տակից: Հանկարծ, երկուսով հայտնվեցին անտառի եզրին և տեսան Մարկ թագավորին, հեռվում, բարոններով շրջապատված:

— Սիրելիս, — ասաց Տրիստանը, — ահա արքան՝ քո տերը, նրա ասպետներն ու զինվորները: Գալիս են դեպի մեզ: Եվս մի պահ, և մենք, իրար հետ չենք կարողանալու խոսել: Ձեզ կոչ էմ անում երդվել ամենագոր ու փտավորյալ երկնակալի անունով, որ եթե երբևիցե սուրհանդակ ուղարկեմ, կատարելու եք այն, ինչ խնդրելու եմ:

— Սիրելի Տրիստան, հեկն որ նորից տեսնեմ կանաչ հասպիսյա մատանին, ո՛չ աշտարակ, ո՛չ պատնեշ ու պարիսպ չեն խոչընդոտի կատարելու իմ սիրեցյալի կամքը:

— Իզոլդա, թող աստված քեզ հաստուցի արժանին:

Նժույգները գնում էին կողք-կողքի: Տրիստանը նրան մոտ քաշեց ու սեղմեց թևերի մեջ:

— Սիրելիս, — ասաց Իզոլդան, — լսի՛ր իմ վերջին խընդրանքը. այս երկրից հեռանալու ես, գիտեմ: Բայց մի քանի օր ես սպասիր և թաքնվիր, մինչև իմանաս, թե արքան ինձ հետ ինչպես է վարվելու՝ բարության՝ մե, թե ցատումով... Ես միայնակ եմ, ինձ ո՛վ կպաշտպանի դավադիրներից: Վախեցնում եմ: Անտառապահ Օրրին քեզ գաղտնաբար կտա

ապաստան: Գիշերը դու աննկատ հասիր մինչև քանդված մատանը: Պերինիսին այնտեղ կուղարկեմ, որ հայտնի, թե որևէ մեկն արդոք ինձ հալածո՞ւմ է:

— Սիրելիս, ոչ ոք չի հանդգնի: Կմնամ թաքնված՝ Օրրիի մոտ: Եվ ով քեզ վիրավորանք հասցնի, թող ինձանից գգուշանա, ինչպես դեկից:

Երկու խմբերն իրար մոտեցել էին այնքան, որ կարող էին ողջույններ փոխանակել: Մի նետի մատչելիությամբ յուրայիններից սուս ընկած՝ Մարկն արհաբար արշավում էր: Նրա հետ էր Դինաս դը Լիդանը:

Երբ բարոններն ընդհուպ մոտեցան, Տրիստանը, Իզոլդայի ճծուցի սանձը բռնած, ողջունեց թագավորին և ասաց.

— Արքա՛, վերադարձնում եմ Ոսկեհեր Իզոլդային: Երկրի մարդկանց ներկայությամբ ես մեճամարտ եմ խնդրում քո արքունիքում: Ինձ գրկեցին դատի իրավունքից: Արա այնպես, որ մեճամարտի շնորհիվ արդարադատությունն իրագործվի իմ նկատմամբ: Եթե պարտվեմ, ինձ այրիի ծծումբի մեջ: Եթե հաղթանակեմ, պահիր ինձ քեզ մոտ կամ, եթե չես կամենում, կմեկնեմ հեռավոր մի երկիր:

Ոչ ոք չընդունեց Տրիստանի մարտահրավերը: Այնժամ, Մարկը, յուր հերթին, վերցրեց Իզոլդայի ճծուցի սանձը և հանձնելով Դինասին՝ առանձնացավ բարոնների հետ՝ խորհուրդ անելու:

Ուրախացած՝ Դինասը թագուհուն մատուցեց ամեն պատիվ ու հարգանք: Իզոլդայի վրայից վերցրեց շքեղ ծիրանագույն թիկնոցը, և նրբահյուս վերնաշապկի, մետաքսա ընդարձակ միջնագգետի տակից ի հայտ եկավ կանացի չքնադագեղ մարմինը: Թագուհին ժպտաց՝ հիշելով ծերունի ճգնավորին, որը չէր խնայել իր դեմիները: Ծքեղ է շրջա-

զգեստը, նրբիրան է նա ու գեղանի, աչքերը՝ երանգափոխ, մազերը՝ պայծառաշող, ինչպես արեգակի ճառագայթները:

Տեսնելով, որ թագուհին գեղեցիկ ու մեծարված է առաջվա նման, դավադիրները գայրացկոտ արշավեցին դեպի արքան: Այդ պահին մի բարոն, Անդրե դը Նիկոլը, ջանք էր թափում նրան համոզելու:

— Տեղ իմ,— ասում էր,— Տրիստանին պահիր քեզ մոտ: Նրա շնորհիվ դու կլինես ավելի ազդեցիկ թագավոր:

Ու քիչ-քիչ մեղմանում էր Մարկի սիրտը, բայց դավադիրները, գալով դեմ-հանդիման, ասացին.

— Արքա՛, լսի՛ր խորհուրդը, որ տալիս ենք ազնվորեն: Թագուհուն բամբասել են անտեղի, մենք այդ ընդունում ենք: Բայց եթե նա և Տրիստանը միասին մտնեն քո արքունիքը, ապա նորից է խոսվելու այդ մասին: Ավելի լավ է՝ թող Տրիստանը որոշ ժամանակով հեռանա: Մի օր, անկասկած, դու ետ կկանչես նրան:

Մարկն այդպես էլ արեց: Բարոնների միջոցով հաղորդեց Տրիստանին, որ անհապաղ հեռանա: Այնժամ, Տրիստանը մտնեցավ թագուհուն և հրաժեշտ տվեց: Նայում են իրարու: Թագուհին ամաչեց հավաքված հասարակությունից և շիկնեց:

Բայց արքան կարեկցանքից հուզվեց և առաջին անգամ դիմեց քրոջորդուն.

— Ո՛ր ես գնալու այդ ցնցոտիներով: Իմ գանձարանից վերցրու, ինչ որ կամենաս՝ ոսկի, արծաթ, մորթեղեն:

— Արքա՛,— ասաց Տրիստանը,— չեմ վերցնի՛ և ոչ մի դեմիե, ոչ մի զգեստ: Ես գնալու եմ, իմ ուժերի ներածին չափ, մեծավ ուրախությամբ, հոգով ու մարմնով, ծառայելու ֆրիզների մեծահարուստ թագավորին:

Շրջեց նմուզը և իջավ դեպի ծով: Իզոլդան հայացքով հետևեց սիրեցյալին և, քանի դեռ կարողանում էր հեռվում տեսնել նրան, գլուխը չթեքեց:

Հաշտության լուրն առնելուն պես՝ մեծ ու փոքր, տղամարդիկ, կանայք, երեխաներ խմբովին շտապեցին քաղաքից դուրս, Իզոլդային ընդառաջ: Ու խորապես վշտացած Տրիստանի աքսորից, նրանք տոնում էին իրենց թագուհու վերադարձը: Չանգերի դողանջի տակ, գորգ ու մետաքսով զարդարուն փողոցներով արքան, կոմսերն ու իշխանները շուքով ուղեկցում էին Իզոլդային: Պալատի դռները բացվեցին բոլորի առջև, հարուստ թե աղքատ, նստեցին կերուխումի: Եվ այդ օրը պանծացնելու համար՝ Մարկն ազատագրեց իր ճորտերից հարյուր հոգու և ասպետի կոչում շնորհեց քսան զինակիր երիտասարդների՝ անձամբ թուր ու գրամ տալով յուրաքանչյուրին:

Սակայն մութն ընկնելուն պես Տրիստանը, թագուհուն տված խոստումի համաձայն, աննկատելի հասավ անտառապահ Փրիի մոտ, որը և գաղտնաբար ապաստանեց նրան, քանդված մատուռում: Թող զգուշանան դավադիրները:

## Գ Լ Ո Ւ Խ XII

### ԴԱՏԱՍՏԱՆ ԾԻԿԱՑԱԾ ԵՐԿԱԹՈՎ

Աստված պատեղ հրաշք գործեց:  
(հերոս)

Ծառ չանցած՝ Դեմուպեներ, Անդրեուը և Գոնդոինը գրտան, որ ոչ մի վտանգ չի ապստևում: Տրիստանը կյանքը քարշ է տալիս ծովից այն կողմ, շատ հեռավոր երկրում,

որտեղից չի կարողանա իրենց հասնել: Եվ ահա մի օր, որսի ժամանակ, մինչ արբան, ունկնդրելով շների հաչոցին, ձին պահել էր բացատի մեջտեղում, երեքն էլ արշավեցին դեպի նա:

— Արքա՛, լսիր մեր խոսքը: Դու թագուհուն դատաւարտել էիր սուսնց դատաստանի, և դա անօրեն էր: Հինա նրան արդարացնում էս սուսնց դատաստանի, մի՞թե դա նույնպէս անօրեն չէ: Իգողիան երբէք չի արդարացել, և քո երկրի բարոնները ամբաստանում են ձեզ՝ երկուսիդ: Գոնէ խորհուրդ տվեք, որ ինքը պահանջի աստճո դատաստանը: Քանի որ անմեղ է, դա ի՛նչ դժվար բան է նրա համար, եթէ սրբերի անյունների վրա երդվի, որ երբէք չի մեղանջել քո հանդէպ և ձեռքով բռնի շիկացած մի երկաթ: Աղոյես է պահանջում սովորույթը, և այդ դյուրին փորձույթանք մեկ անգամ ընդմիջտ կչքանան հին կասկածները:

Մարկը գայրացած պատասխանեց.

— Աստված ձեզ կործանի, կոռնուացի իշխաններ, քանի որ անդադար ցանկանում էք ինձ ամոթահար անել: Ձեր պահանջով էս վտարեցի իմ բոջոբդուն: Էլ ի՛նչ էք ոգում. թագուհուն էլ Իոլանդիա՞ վտարեմ: Ի՛նչ նոր ամբաստանություններ ունեք: Ձեր հին ամբաստանությունների դեմ Տրիստանն արդոք հանձն չստա՞վ պաշտպանել նրան: Հանուն թագուհու արդարացմանը՝ մարտահրավերների կոչ արեց, և դուք բոլորդ այդ լսեցիք: Ինչո՞ւ նրան չդիմագրավեցիք վահաններով ու ճիգակներով: Իշխաններ, ինձանից պահանջում էք ավելին, քան իրավունքն է: Արդ զգուշացեք, որ ես կկանչեմ այստեղ այն մարդուն, որին վտարեցի ձեր կամոք:

Այնժամ վախկոտները դողացին. արդեն թվում էր, թէ

Տրիստանը վերադարձել է և արնաքամ է անում իրենց մարմինները:

— Տեր, մենք ազնիվ խորհուրդ էինք տալիս ձեր իսկ պատվի համար, ինչպէս որ դա վայել է հպատակներին: Բայց այսուհետև լռելու ենք: Մոռացեք ցատու՛նք և մեզ շնորհեցեք բարեմաղթություն:

Բայց Մարկը ձգվեց ասպանդակների վրա.

— Դո՛ւրս կորեք իմ հողից, նենգավորներ, այլևս չեմ շնորհի բարեմաղթություն: Ձեր կամոք էս վտարեցի Տրիստանին, այժմ ձեր հերթն է՝ դո՛ւրս իմ հողից:

— Թող այդպէս լինի, ազնիվ տեր: Մեր դղյակներն ամբակուտ են, լալ են պաշտպանված ցցապատնեշներով՝ դրժվարամատչելի ժայռերի վրա:

Եվ սուսնց հրածեշտ տալու՝ շոջեցին նժույգները:

Սուսնց որսաշներին ու որսորդներին սպասելու, Մարկը ձին քջեց դեպի Տիևուսժել, բարձրացավ սրահի սանդուղքով, և թագուհին լսեց, թէ ինչպէս սալաքարերի վրա արձագանքում են նրա փութկոտ ոտնաձայները:

Վեր կացավ, եկավ ընդստաշ, վերցրեց թուրը՝ ըստ սովորության, և խոնարհվեց մինչև գետին: Ձեռքերից բռնած՝ Մարկը նրան բարձրացնում էր, երբ Իգողիան, հայացքը վրան սևեռելով, տեսավ, որ արքայական ազնիվ դիմագծերը ծամածովել են գայրույթից: Աղոյես ցատումնալի տեսել էր նրան ինքն այն ժամանակ, խարույկի դիմաց:

«Ա՛հ,— մտածեց,— հաչոնաքերել են իմ սիրեցչալին, Մարկը նրան բռնել է»:

Միտը կրճքում ստեց, և սուսնց մի բառ իսկ ասելու՝ Իգողան փլվեց արքայի ոտքերի առաջ: Մարկը թագուհուն

առավ թևերի մեջ և կամացուկ համբուրեց. քիչ-քիչ ուշքի էր գալիս.

— Սիրելի՛ս, սիրելի՛ս, ի՞նչն է քեզ տանջում:

— Տեր իմ, այնքան էիք զայրացած, որ վախեցա:

— Այո՛, այդ որսից վերադառնում էի բարկացած:

— Ա՛հ, տեր իմ, եթե որսորդները ձեզ դժգոհություն են պատճառել, արժե՞ արդյոք արտի մոտ ընդունել որսի անհաջողությունները:

Մարկն այդ խոսքը լսելիս ժպտաց.

— Ո՛չ, սիրելիս, որսորդներն ինձ չեն բարկացրել, այլ այն երեք նենգավորներն են, որոնք վաղուցիվեր մեզ առում են: Դու նրանց ճանաչում ես՝ Անդրեանը, Գենուպեանը և Գոնդոնը: Ես իմ հողից վտարեցի այդ անօրեններին:

— Տեր իմ, նրանք ի՞նչ հանդգնեցին վատարանել իմ մասին:

— Քեզ ի՞նչ փույթ: Չե՞ որ վտարել եմ արդեն:

— Տեր իմ, ամեն մեկն ունի իրավունք իր միտքն արտահայտելու: Բայց ես նույնպես ունեմ իրավունք իմանալու իմ դեմ հարուցված մեղադրանքը: Եվ այդ ումի՞ց կարող եմ իմանալ, եթե ոչ ձեզանից: Միայնակ՝ այս օտար երկրում, ձեզանից բացի, տեր իմ, ոչ ոք չունեմ, որ ինձ պաշտպանի:

— Լա՛վ: Նրանք, ուրեմն, գտնում են, որ պատշաճություն է ըստ օրինաց, որ քեզ արդարացնես երդումով ու շիկացած երկաթի փորձությամբ: «Թագուհին, ասում էին, ինքը պետք է պահանջի այդ դատաստանը: Փորձությունները թեթև են նրա համար, ով գիտե, որ ինքն անմեղ է: Թագուհուն ի՞նչ դժվար է, որ... Աստված արդար դատավոր է. մեկընդմիջո

ներում է հին մեղքերը...»: Ահա թե ինչ էին պահանջում: Բայց թողնենք այդ ամենը: Ես քեզ ասացի, չե՞, որ նրանց վտարել եմ:

Իզոլդան ցնցվեց, նայեց արքային.

— Տեր, հրամայեցեք, որ վերադառնան: Ես երդումով կարդարանամ:

— Ե՛րբ:

— Տասներորդ օրը:

— Նախապատրաստվելու համար քիչ կլինի ժամանակը, սիրելիս:

— Ընդհակառակը, շատ է: Բայց ես պահանջում եմ, որ մինչ այդ՝ դուք հրավիրեք Արթուր թագավորին, սրբազան Գովենին, Ժիրֆլետին, արքունի արդարադատության նախարար Քեին և նրանց ասպետներից հարյուրին, որ արշավեն մինչև ձեր հողերի սահմանը, մինչև Մերմակ Տափաստանը, մինչև եզերքն այն գետի, որ բաժանում է երկու տերությունները: Հենց այդտեղ, մեր հարևան իշխանների ներկայությամբ է, որ ցանկանում եմ երդվել, և ոչ թե միայն մեր բարոնների առջև, քանզի դեռ չեմ հասցնի երդումս ավարտել, որ նրանք կրկին կպահանջեն ձեզանից, որ ինձ ենթարկեք մի նոր փորձության, և այդպես երբեք չեն վերջանա մեր տատապանքները: Սակայն Կոնոուայի բարոններն այլևս չեն հանդգնի, եթե դատաստանի երաշխավորները լինեն Արթուրը և նրա ասպետները:

Մինչ Մարկի զինակիր պատգամավորներն շտապում էին դեպի Կորդուել, Արթուր թագավորի երկիրը, Իզոլդան գաղտնաբար Տրիստանի մոտ ուղարկեց ծառային՝ Հալատարիմին, Խարտիշաներ Պերինիսին:

Պերիճիսը վազեց անտառածածկ վայրերով և խոտափում էր կոխտոված արահետներից, վազեց այնքան, մինչև հասավ անտառապահ Օրրիի տնակը, որտեղ օրեր շարունակ սպասում էր Տրիստանը: Պերիճիսը նրան հայտնեց պատահածի մասին, նոր խարդավանքը, դատաստանի օրը, որոշված ժամն ու վայրը:

— Իմ տիրուհին խնդրում է, որ որոշված օրը, ուխտավորի զգեստով, անճանաչելիորեն ծպտված ու անգլեն՝ փնեք Ճերմակ Տափաստանում: Դատաստանի վայրը հասնելու համար նա գետն անցնելու է նավակով: Հանդիպակաց ափին սպասելու եք այնտեղ, որտեղ գունվելիս պիտի լինեն Արթուր թագավորի ասպետները: Այնժամ, անկասկած ի փճակի պիտի լինեք նրան օգնելու: Իմ տիրուհին վստեղանում է այդ օրվա դատաստանից, թեև սպավիճում է ողորմածությանը տեր աստծո, որն արդեն մի անգամ փրկել է բորոտների ձեռքից:

— Վերադարձի՛ր թագուհու մոտ, ազնիվ բարեկամ Պերիճիս: Հայտնիր, որ ի կատար կածեմ նրա ցանկությունը:

Արդ, սենհորնե՛ր, այնպես պատահեց, որ Տիևուածել վերադառնալիս՝ Պերիճիսը խիտ մացառոտում նկատեց անտառապահին, որն այն ժամանակ, պատահաբար գտնելով քնած սիրահարներին, նրանց մատնել էր թագավորին: Մի օր, հարբած, պարծեցել էր իր այդ ստորությանը: Անտառապահը հողի մեջ խորունկ փուս էր փորել և վարպետորեն այն ծածկում էր ճյուղերով գալլ ու վարազ որսալու համար: Երբ տեսավ, որ թագուհու ծառան հարձակվում է իր վրա, ուզեց փախչել, բայց Պերիճիսը նեղեց նրան ծողակի եզրին:

— Դու, լրտես, որ մատնել ես թագուհուն, ինչո՞ւ ես փախչում: Մնա այնտեղ քո գերեզմանի մոտ, որի փորելու հոգսն ինքդ ես բաշել:

Մահակը վզգալով պտույեց օդում: Գանգն ու մահակը շարդվեցին միաժամանակ: Եվ Պերիճիսը՝ Խարտիշահերը, Հավատարիմը, մատնիչի մարմինը ոտքով հրեց գլորեց ճյուղերով ծածկված փոսի մեջ:

Դատաստանի նշանակված օրը Մարկ թագավորը, Իզոլդան և Կոռնուայի բարոնները շքեղակազմ արշավեցին Ճերմակ Տափաստան, հասան ափին այն գետի, որի մյուս եզերքին համախաբված Արթուրի ասպետները ողջուն հղեցին շողշողուն դրոշակներով:

Նրանց առջև, գետափին, նստած էր մի թշվառ ուխտավոր, փաթաթված թիկնոցի մեջ, որից խեցիներ՝ էին կախված: Պարզել էր փայտյա պնակը և ողորմություն էր խընդրում ճղճղան և վհատ ձայնով:

Առույգ թիավարների ջանքերով Կոռնուայի նավակները մոտենում էին: Երբ արդեն պատրաստվում էին ափ դուրս գալ, Իզոլդան հարցրեց իրեն շրջապատող ասպետներին.

— Սենհորնե՛ր, ես ինչպե՞ս կարողանամ ոտս դնել ամուր հողին՝ առանց երկար շրջագգեստու տիղմի մեջ ցեխտնելու: Հարկ է, որ մի ուամիկ ինձ օգնի:

Ասպետներից մեկը ձայն տվեց ուխտավորին.

— Բարեկա՛մ, վեր բշտիր քո թիկնոցը, ջուրը մտիր և

1 Պարտախից վերադարձած ուխտավորները գլխարկներն ու թիկնոցները զարդարում էին խեցիներով: Այդ նշանակում էր, որ նրանք ծովն անցել են:



թագուհուն անցկացրու, եթե, իհարկե, հյուժված, ինչպիսին որ կաս, չես վախենա սայթաքել կես ճանապարհին:

Մարդը թագուհուն վերցրեց թևերի մեջ: Իզոլդան շշուկով ասաց՝ սիրելիս, ապա ավելի ցածրաձայն. «Ընկիր ավագի վրա»:

Ափին հասնելով, սայթաքեց ու ընկավ՝ թագուհուն սեղմած թևերի մեջ: Զինակիր ու նավաստի, թիակներով ու կարթաձողերով, հարձակվեցին խեղճի վրա:

— Թողեք նրան,— ասաց թագուհին,— անկասկած թուլացել է երկարատև ուխտագնացությունից:

Եվ նուրբ ոսկյա ճարմանդը պոկելով իր վրայից՝ նետեց ուխտավորին:

Արթուրի վրանի սոջև, կանաչ խոտին, փոխված էր Նիցցայի շքեղ կերպաս, որի վրա արդեն դասավորել էին սրբատուփերից ու նրբարկղներից հանված սրբերի մասունքները: Սրբազան Գովենը, Ժիրֆլետը և արդարադատության արքունի նախարար Քեն պահուպան էին այդ մասունքների:

Թագուհին, աստժո ողորմածությանն անսալով, պարանոցի ու ձեռքերի վրայից հանեց գոհարները և բաժանեց խեղճ մուրացիկներին: Հանեց ծիրանի թիկնոցն ու նրբահյուս շղարշը և բաժանեց: Տվեց վերնաշապիկը, միջնազգեստն ու գոհարազարդ ոտնամանները: Հագին թողեց միայն մի ներքնազգեստ, և թևերն ու ոտքերը մերկ՝ քայլեց դեպի երկու արքաները: Ծուրջը լուռ դիտում էին բարոնները և արտասվում էին: Մասունքների մոտ այրվում էր խարույկը: Դողահար՝ նա աջ ձեռքը մեկնեց դեպի սրբերի աճյունները և ասաց.

— Դուք Լոգրեի և Կոռնուայի արքաներ, ազնվագարն Գովեն, Քեն, Ժիրֆլետ, և դուք բոլորդ, որ լինելու եք իմ երաշխավորները, լսեցեք. այս սրբազնագույն մասունքներով և այս աշխարհի բոլոր սրբազնագույն մասունքներով երդվում եմ, որ ինձ չի գրկել կնոջից ծնված ոչ մի տղամարդ, բացի իմ տեղի Մարկ թագավորից և այս խեղճ ուխտավորից, որը քիչ ստաշ սայթաքեց ձեր աչքերի սուաջ: Մարկ թագավոր, այս երդումը ձեզ բավարարո՞ւմ է:

— Այո՛, թագուհի, և թող աստված մեզ հայտնի իր արդար վճիռը:

— Ամեն,— ասաց Իզոլդան:

Մոտեցավ խարույկին՝ գունատ ու երերուն: Բոլորը լուռ էին. երկաթը շիկացած էր: Այնժամ, Իզոլդան մերկ թևերը սուզեց խարույկի մեջ, վերցրեց երկաթյա ձողը և, ձեռքերում պահած՝ արեց ինը քայլ, ապա, մի կողմ շարժելուց հետո, ափերը քաց՝ թևերը տարածեց խաչաձև: Եվ յուրաքանչյուր ոք տեսավ, որ նրա մաշկն ավելի հարթ էր, քան սալորը սալորենու վրա:

Այնժամ բոլորի կրծքերից փառաբանության մեծ ճիչ բարձրացավ սո աստված:

## ՍՈՒԽԱԿԻ ԳԱՅԼԱՅԻՆ

Գրում Տրիստանը երգում ու ողբում է:  
 Այդպես ամուսն վերջում տխակը  
 Հրածեշտ է տալիս խորին տխրությանը:  
 («Սիրահարների տվայտանքներ»)<sup>1</sup>

Անտառապահ Օրրիի տնակը վերադառնալուց հետո, երբ արդեն դեռ էր գցել ցուպը և հանել էր ոխտավորի թիկնոցը, իր սրտում որոշակիորեն նա հանգեց այն մտքին, որ հասել է այն օրը, երբ պետք է կատարի Մարկ թագավորին տված երդվյալ խոստումը՝ Կոննուայից հեռանալու մասին:

Ինչո՞ւ էր հապաղում: Թագուհին արդարացված էր, արքան գորգոբրում ու հարգում էր նրան: Արթուրը, եթե անհրաժեշտ լինի, պիտի հովանավորի, և, այսուհետև, Իզոլդայի դեմ ուղղված ոչ մի դավադրություն հաջողության չի հասնի: Էլ ինչո՞ւ շարունակ թափառել Տինուածելի մոտակայքում: Իզոլդա վտանգի էր ենթարկում և՛ իր կյանքը, և՛ անտառապահինը, և՛ Իզոլդայի անդորրը: Անշուշտ, պետք է մեկներ, և արդյոք վերջին անգամն էր այն, երբ ինքը, ոխտավորի զգեստի տակ, Ճերմակ Տախաստանում զգաց Իզոլդայի չքնադագեղ մարմինն իր թևերի մեջ:

Երեք օր ևս հապաղեց՝ ուժ չունենալով հեռանալու այն երկրից, որտեղ ապրում էր թագուհին: Բայց երբ վրա հասավ

<sup>1</sup> Գրվագային փոքրիկ պոեմ, որը պահպանված է 12-րդ դարի մի ձեռագրում:

չորրորդ օրը, հրաժեշտ տվեց անտառապահին, որ նրան սպաստանել էր, և Գորվենային ասաց.

— Սիրելի ուսուցիչ, արդ հասավ երկար ճամփորդության ժամը. գնալու ենք գալիացիների երկիրը:

Գիշերը, տխուր, նրանք ուղևորվեցին: Բայց ճանապարհն անցնում էր ցցապատներով և երիտակված պտղալցո մոտով, որտեղ մի ժամանակ Տրիստանն սպասում էր սիրեցյալին: Ծողոշողում էր պայծառ գիշերը: Ծամփի ոլորանին, ցցապատներից ոչ հեռու, տեսավ երկնքի պայծառ լույսով ողողված, մեծ սոճու հաղթ բունը:

— Սիրելի ուսուցիչ, ինձ սպասիր մոտակա անտառում, ես շուտով կգամ:

— Ո՞ր ես գնում, խելագար, դու շարունակ քո մա՞հն ես փնտրում:

Բայց արդեն, մի համարձակ ուսուցումով, Տրիստանն անցել էր ցցապատների վրայից: Եկավ մեծ սոճու տակ պայծառագույն մարմարյա ավազանի մոտ: Արժի՞ արդյոք հիմա նրբաձև տաշեղներ նետել աղբյուրի մեջ: Իզոլդան այլևս չի գա: Ծարպիկ և զգույշ քայլերով անցավ այն արահետը, որով մի ժամանակ գալիս էր թագուհին: Նա համարձակ մոտեցավ դղչակին:

Իր սենյակում, քնած Մարկի թևերի մեջ, Իզոլդան արթուն էր: Հանկարծ, կիսաքաց լուսամուտից, որի վրա խաղում էին լուսնի շողերը, ներս թափանցեց տխակի դայլը:

Իզոլդան ունկնդրում էր հնչուն ձայնը, որը գալիս էր հմալելու գիշերային անդորրը: Հնչում էր այնպես լայագին, որ ամենադաժան սիրտը, մարդասպանի սիրտն անգամ պիտի փափկեր: Թագուհին խորհեց. «Որտեղի՞ց է այս մեղեդին»:

Եվ հանկարծ հասկացավ. «Ա՛հ, Տրիստանն է: Այդպես Մորուայի անտառում, նմանակում էր երգող թռչուններին՝ ինձ հրապուրելու համար: Նա մեկնում է, և ահա վերջին հրաժեշտը: Ինչպե՛ս է ողբում: Այդպես ամառն վերջին տխրակր հրաժեշտ է տալիս խորին տխրությանը: Միրելիս, ես այլևս երբեք չեմ լսելու քո ձայնը»:

Մեղեդիին հնչեց ավելի կրքոտ:

— Ա՛հ, ի՞նչ ես ցանկանում, որ գամ քեզ մո՞տ: Ո՛չ, հիշիր ճգնավոր Օգրիվին և տրված երդումները հիշի՛ր: Լոհի՛ր, մահը մեզ հետամուտ է լինում... Ի՞նչ փույթ մահը: Դու ինձ կանչում ես, դու ինձ տենչում ես, ես գալիս եմ:

Վաճեց արքայի թևերը և համարյա մերկ մարմինը փաթաթեց իր թիկնոցի մեջ, որի ներսը մոխրագույն մորթոց էր: Նա պետք է անցներ հարևան սրահով, որտեղ ամեն գիշեր, հերթականորեն, հսկում էին տասը ասպետ: Մինչ հինգը քնում էին, մնացյալ հինգը զինված՝ լուսամուտների ու դռների առջև կանգնելով, հսկում էին դղյակի շրջակայքը: Բայց բարեբախտաբար նրանք բոլորն էլ քնած էին՝ հինգը անկողիններում, հինգը՝ սալաքարերի վրա: Իզոլդան անցավ աջ ու ձախ ընկած մարմինների վրայով, բարձրացրեց դուռն փակվածը. օղակը զնգաց, բայց չարթնացրեց պահակներին: Իզոլդան շեմքն անցավ, և երգիչը լռեց:

Ծառերի տակ, անխոս, Տրիստանը նրան սեղմեց կրծքին: Թևերն ամուր փաթաթեցին միմյանց մարմինների շուրջը, և մինչև լուսաբաց, ասես թակարդն ընկած թռչուններ, սիրահարները մնացին իրար սեղմված, չթուլացրին գրկախստնու՛մը: Ի հեճուկս արքայի ու պահակների նրանք վալելում են հրճվանքն ու սերը:

Այդ գիշերը սիրահարներին խենթացրեց, և հետագա օրերին, մինչ թագավորը Տրիստանից հեռու՝ Սեն Լյուբենում դատական գիտերն էր գումարում, Օրրիի մոտ վերադարձած Տրիստանը ամեն սուսվոտ, օրը ցերեկով, համարձակվում էր սողոսկել պողպազին ու մտնել կանանց հարկաբաժինը: Մի ճորտ նրան տեսավ ու գնաց հայտնեց Անդրեոսին, Գեներալեհին և Գոնդոլինին:

— Իշխաններ, այն գազանը, որը ձեր կարծիքով դուրս էր քշված, վերադարձել է իր որջը:

— Ո՛վ:

— Տրիստանը:

— Ե՞րբ ես տեսել նրան:

— Այս առավոտ և լավ ճանաչեցի: Դուք նմանապես վաղն արշալույսին կկարողանաք տեսնել, երբ գա թուրը կապած՝ մի ձեռքում աղեղը, մյուսի մեջ երկու նետ:

— Որտե՞ղ կտեսնենք նրան:

— Մի այնպիսի լուսամուտից, որն ինձ հայտնի է: Բայց եթե այն ցույց տամ, ինչքա՞ն էք վճարելու:

— Մեկ մարկ արծաթ, ու դու կդառնաս հարուստ գյուղացի:

— Ուրեմն, լսեցեք,— ասաց ճորտը,— կարելի է թագուհու սենյակի ներսը նայել մի նեղ ու բարձրադիր լուսամուտից, որը սարքված է դիմացի պատի վրա: Բայց երկար վարագույրը համատարած ծածկում է թագուհու սենյակի պատահանը: Վաղը ձեր երեքից մեկը թող կամացուկ մտնի պողպազին: Թող կտրի մի փշածածկ, երկար ճյուղ և ծայրը լավ արի. հետո թող մագլցի մինչև բարձրադիր լուսամուտը և ճյուղը ճաղի նման խրի վարագույրի կերպասի մեջ: Այդպիսով, կկարողանա այն մի քիչ թեթել: Եվ մարմինս այ-

րեցեք, իշխաններ, էթե այնժամ վարագույրի ետևում նա չտեսնի այն, ինչ պատմեցի:

Անդրեանը, Գոնդոինը և Դեմուալենը վիճարկեցին, թե իրենցից ով առաջինը պիտի վայելի այդ տեսարանի հաճույքը և, վերջապես, համաձայնվեցին նախ այն զիջել Գոնդոինին: Իրարից բաժանվեցին. հաջորդ օրը, արշալույսին, պիտի հանդիպեն իրարու: Վաղն արշալույսին, սիրելի սենյորներ, զգուշացեք Տրիստանից:

Հաջորդ օրը, դեռ մույժ էր, երբ հեռանալով անտառապահ Օրրիի տնակից, Տրիստանը տատասկի խիտ մացառուտների միջով գնաց դեպի դղյակը: Թափուտից դուրս գալու ժամանակ նայեց բացատի կողմը և տեսավ, որ Գոնդոինը գալիս է իր դղյակից: Տրիստանը ետ ոտներեց տատասկների մեջ ու դարձան մտալ:

«Ա՛հ, աստված իմ, այնպես արա, որ այնտեղ քայլողն ինձ չնկատի նպաստավոր ակնթաթից առաջ»:

Թուրը բռան մեջ՝ սպասում էր, բայց պատահաբար Գոնդոինը ուրիշ ճամփով գնաց ու հեռացավ: Տրիստանը դուրս եկավ թփի ետևից, հիասթափված, լարեց աղեղը, նշան բռնեց. ափա՛ղ, կենդանի թիրախն արդեն շատ էր հեռու:

Այդ պահին, սև ու փոքր ճծուզը հեծած, արահետով դանդաղ իջնում էր Դեմուալենը երկու խոշոր որսաշների ուղեկցությամբ: Տրիստանը հետևեց նրան՝ խնձորենու ետև թաքնված: Տեսավ, թե ինչպես գրգռում էր շներին, որ մի վարագի քշեն դեպի բացատը: Բայց նախքան որսաշները կենդանուն կտեղահանեն թաքստոցից, նրանց տերն ստանալու է այնպիսի վերք, որ ոչ մի թծիշկ չի կարողանա բուժել: Երբ Դեմուալենը մոտիկ էր արդեն, Տրիստանը ետ գցեց թիկնոցը և հայտնվեց թշնամու առջև: Դավադիրն ուղեց

փախչել. սպարդյուն, ժամանակ իսկ չունեցավ՝ «Ինձ խոցում ես» գոռալու: Ընկավ ձիուց, և Տրիստանը հատեց գլուխը, կտրատեց երեսին կախ ընկած մազերն ու դրեց զրբպանը: Ուզում էր Իզոդային ցույց տալ այդ ծամերը՝ նրա սիրտը հրճվանքով լցնելու համար: «Ափա՛ղ,— խորհում էր,— ի՛նչ եղավ Գոնդոինը. փախավ, ինչպե՛ս չկարողացա նույն կերպ վարձահատույց լինել նրան»:

Թուրը սրբեց, դրեց պատյանը, դիակի վրա ծառի բուն քարշ տվեց, և թողնելով արյունոտ մարմինը՝ կնգուղը քաշեց գլխին և ուտերին, ապա գնաց սիրեցյալի մոտ:

Գոնդոինը Տրիստանից առաջ հասել էր դղյակ: Բարձրադիր լուսամտին արդեն մազլցած՝ փշածածկ փայտիկը խրել էր վարագույրի մեջ, թեթևակի մի կողմ էր քաշել կերպասից երկու ծալք և շեղակի նայում էր եղեգներով ու ծաղիկներով ողողված սենյակի ներսը: Սկզբում, Պերիմիսից բացի, ոչ ոքի չտեսավ: Հետո երևաց Բրանձիենը, որը դեռևս ձեռքում պահել էր այն սանրը, որով հարդարել էր թագուհու ոսկեշող վարսերը:

Բայց ահա ներս մտավ Իզոդան, հետո Տրիստանը: Մի ձեռքով պահել էր բնափայտյա աղեղն ու երկու նետերը, իսկ մյուս ձեռքով՝ երկու երկար մազափնջեր:

Տրիստանը մի կողմ նետեց հագի թիկնոցը, և ի հայտ եկավ հոյակապ մարմինը: Ոսկեներ Իզոդան խոնարհվեց՝ նրան ողջունելու, և մինչ ողովում էր և գլուխը բարձրացնում դեպի սիրեցյալը, վարագույրի վրա արտացոլված տեսավ Գոնդոինի գլխի ստվերը:

— Տեսնո՞ւմ ես այս գեղեցիկ մազափնջերը,— ասում էր Տրիստանը,— պատկանում են Դեմուալենին: Ես վրեժի լու-

ծեցի արագից: Այլևս երբեք ճիգակ ու վահան ո՛չ պիտի գնի, ո՛չ պիտի վաճառի:

— Այդ լավ է, տեր իմ, բայց դուք լարեցեք այս աղեղը, խնդրում եմ: Կուզենայի տեսնել, թե արդյոք այն ձգելն հարմար է:

Տրիստանը զարմացած լարեց, թեև կիսով չափ կռահում էր, թե ինչն է բանը: Իզոլդան վերցրեց երկու նետերից մեկը, ամրացրեց, ստուգեց, թե արդյոք ձի՞գ է պարանը, հետո ցածրաձայն ու արագ սասց.

— Այնպիսի բան եմ տեսնում, որ ինձ անհասճ է: Լավ ճշան բռնիր, Տրիստան:

Ասպետը պատրաստ դիրք ընդունեց, հայացքը բարձրացրեց և վարագույրի ամենավերևում տեսավ Գոնդոիկի գլխի սավերը:

— Թող աստված ողորթություն տա այս նետին,— ասում է:

Ասում է, շրջվում դեպի պատուհանը և արձակում երկար նետը, որն օդում սուվելով (ո՛չ մանրաբազեն, ո՛չ ծիծեռնակն ավելի արագ չեն կարող թռչել), խրվում է դավադրի աչքը, թափանցում ողեղը, ինչպես խնձորի միջուկի ներսը, և, թրթռալով, դեմ է ստնում գանգին: Առանց ճիչ իսկ արձակելու՝ Գոնդոիկն ընկավ ցցի վրա:

Այնժամ, Իզոլդան Տրիստանին սասց.

— Հիմա, փախի՛ր, սիրելիս: Տեսնում ես, որ դավադիրները գիտեն քո սպաստարանը: Անդրետը դեռ ողջ է, նա կհայտնի արքային: Ապահով չէ քեզ համար անտառապահի տնակը: Փախի՛ր, սիրելիս, Պերինիս Հավատարիմն այս մարմինը կթաքցնի անտառում այնպես հմտորեն, որ արքան երբեք ոչինչ չիմանա: Բայց դու փախի՛ր այս երկրից հանուն քո և իմ փրկության:

Տրիստանն սասց.

— Ես ինչպե՛ս պիտի սարեմ:

— Այո՛, սիրելի Տրիստան, մեր կյանքերը կապված ու միահյուսված են իրարու: Ինքս էլ չգիտեմ, թե ինչպես պիտի սարեմ առանց քեզ: Մարմինս այստեղ է մնում, բայց իմ սիրտը դու քեզ հետ ես տանում:

— Իզոլդա, սիրելիս, ես մեկնում եմ, չգիտեմ՝ որ երկիրը: Բայց եթե երբևիցե նորից տեսնես կանաչ հասպիսյա մատանին, դու կանե՛ս արդյոք այն, ինչ ստրիանդակի միջոցով խնդրեմ քեզանից:

— Այո՛, դու այդ գիտես. եթե նորից տեսնեմ կանաչ հասպիսյա մատանին, ո՛չ աշտարակ, ո՛չ պատնեշ ու պարիսպ, ո՛չ մի արքայական արգելք չեն խոչընդոտի կատարելու իմ սիրեցյալի կամքը, որն ինձ հայտնված կլինի ստրիանդակի միջոցով՝ լինի դա խելագարություն թե ողջամտություն:

— Սիրելիս, թող Բեթղեմեմում ծնված աստվածը քեզ արժանին հատուցի:

— Թող աստված քեզ պահպանի, սիրելիս:

## Գ Լ Ո Ւ Խ XIV

### ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԲՈԺՈԺԸ

Չե՛ք հիշում արդյոք, անուշիկ իմ սիրելի,

Մի սիրո մասին, որ երկար չունեց:

(«Տրիստանի խելագարությունը»)

Տրիստանը սպաստան գտավ Գալիայում՝ ազնիվ դուքս Ժիլենի երկրում: Դուքսը երիտասարդ էր, հզոր ու բարի:

Դիմալորեց, ինչպես ցանկալի հյուրի: Ոչ մի ջանք չխնայեց՝ նրան մեծարելու և ուրախացնելու, բայց ոչ արկածախնդրությունները, ոչ տոնախմբությունները չցրեցին Տրիստանի թախիծը:

Մի օր, երբ նստած էր երիտասարդ դուքսի կողքին, սիրտըն այնքան էր ցավում, որ նա հառաչում էր առանց այդ նկատելու: Վիշտը մեղմելու համար դուքսը հրամայեց առանձնասենյակ բերել իր նախընտրած խաղալիքը, որ, տխուր ժամերին, կախարդանքով դյուխում էր աչքերն ու սիրտը: Սեղանի վրա, որ ծածկված էր նուրբ ու շքեղ, ծիրանագույն սիտոցով, դրեցին շանը՝ Պըտի-Կրյուիին<sup>1</sup>: Կախարդական շնիկ էր, որ դուքսն ստացել էր Ավալոն<sup>2</sup> կղզուց: Մի հավերժահարս այդ շնիկն ուղարկել էր որպես սիրո ընծա: Ոչ ոք չի կարողանա բավականաչափ հմուտ խոսքերով նկարագրել Պըտի-Կրյուի բնույթն ու գեղեցկությունը: Գեղմն օծոված էր երանգների այնպիսի հրաշալի գուգակցությամբ, որ անհնարին էր գույնը բնորոշել. վիզը, նախ՝ թվում էր ձյունից էլ ճերմակ, գավակը՝ երեքնուկի տերևից էլ կանաչ, կողերից մեկը՝ ծիրանավառ կարմիր, մյուսը՝ քրքումի պես դեղին, որովայնը՝ պարտիզաքարի պես կապույտ, մեջքը՝ վարդագույն: Բայց երբ նրան երկար էին նայում, այդ բոլոր գույները պարում էին աչքերի առաջ ու միաձուլվելով, հերթականորեն այլափոխվում էին բաց ու մուգ երանգների՝ ճերմակ ու կանաչ, դեղին, կապույտ, ծիրանի: Վզին ուներ

ուկյա շղթայիկից կախված բոժոժ՝ այնպիսի զվարթ, հրատակ ու անուշ զնգոցով, որ լսելիս, Տրիստանի սիրտը փափկեց ու հանդարտվեց, և վիշտը հալվեց: Նա դադարեց հիշել թագուհու համար կրած անթիվ տառապանքները, քանզի այդպիսին էր բոժոժի հրաշալի հատկությունը. այդքան անուշ, զվարթ ու հստակ զնգոցը լսելիս՝ մարդու սիրտը մոռանում էր ամենայն հոգս ու վիշտ: Եվ մինչ կախարդանքից հուզախոտվ, շույում էր գողտրիկ ու դյուխիչ կենդանուն, որը ցրում էր բոլոր ցավերը, այն գողտրիկ կենդանուն, որի մորթին, հալվելուց, թվում էր ավելի փափուկ, քան մետաքսաթավիշը, Տրիստանը խորհեց, որ դա մի գեղեցիկ ընծա կարող էր լինել Իզոդրայի համար: Բայց ի՞նչ անել: Դուքսը Պըտի-Կրյուիին սիրում էր ամեն ինչից ավելի, և ոչ ոք՝ ոչ խորամանկությամբ, ոչ խնդրանքով, չէր կարող նրանից ստանալ այդ հրաշալիքը:

Մի օր Տրիստանը դուքսին ասաց.

— Տեր իմ, ի՞նչ կտայիք նրան, ով ձեր երկիրն ազատեւ ածականա Ուրգան Բրդոտից, որը ձեզանից ծանր հարկեր է պահանջում:

— Ծշմարիտն ասած՝ հաղթողին իրավունք կտայի իմ հարստությունների միջից ընտրելու այն, ինչ նա համարեր ամենաթանկարժեքը: Բայց դե, ոչ ոք չի հանդգնի հարձակվել ածականայի վրա:

— Ահա և զարմանալի խոսքեր,— առարկեց Տրիստանը,— բայց չէ՞ որ երկիրը կարող է բարգավաճել միմիայն վտանգներ դիմագրավելու գնով, և եթե ինձ տալին Միլանի ամբողջ ոսկին, դարձյալ չէի հրաժարվի ածականայի դեմ մարտնչելու ցանկությունից:

<sup>1</sup> Պըտի-Կրյու— նշանակում է «կարճիկ», «սիրտիկ»:

<sup>2</sup> Ավալոն— կելտական հեքիաթներում կախարդական կղզի, առաւտության երկիր, որ բնակեցված էր հավերժահարսերով և բնորակի հերոսներով, որոնք այդտեղ էին հայտնվում մահից հետո կամ դեռևս կենդանի:

— Այնժամ,— ասաց դուք ժիւենը,— թող Բեթղեհեմում կույսից ծնված աստվածը ձեզ նեցուկ լինի և մահից ազատի:

Տրիստանը Ուրգան Բրդոտին գտավ լուր որջում: Մոլեզուորեն, երկար մարտնչեցին: Վերջապես քաջությունը հաղթեց ուժին, ճարպիկ թուրը՝ ծանր մահակին, և Տրիստանը, կտրելով ածրահայի աշ բռունցքը, բերեց դուքսին:

— Տեր իմ, որպես պարզև, ինչպես այդ խոստացաք, տվեք ինձ Պըտի-Կրյուին՝ կախարդական շնիկին:

— Բարեկամ, դու այդ ի՛նչ ուզեցիր: Ենիկը թող ինձ մոտ, և ավելի լավ է՝ վերցրու իմ քրոջն ու երկրի կեսը:

— Տեր իմ, ձեր քույրը գեղեցիկ է, և գեղեցիկ է նույնպես երկիրը, բայց հենց կախարդական շնիկին տիրանալու համար է, որ մարտնչեցի Ուրգան Բրդոտի դեմ: Հիշեցեք ձեր խոստումը:

— Ուրեմն, վերցրու, բայց իմացիր, որ դու ինձանից խվեցիր իմ աչքերի ուրախությունն ու սրտի հրճվանքը:

Տրիստանը շնիկը հանձնեց մի գալիացի խելոք ու խորամանկ ասքասացի, որը և տարավ Կոռնուս: Նա հառավ Տիևոսածել և Տրիստանի անունից գաղտնաբար հանձնեց Բրանժիեհին: Թագուհին անչափ ուրախացավ, ասքասացին նվիրեց տասը մարկ ոսկի, իսկ արքային ասաց, որ մայրը՝ Իդանդիայի թագուհին է ուղարկել այդ թանկագին նվերը: Ոսկերիչին հանձնարարեց բույն պատրաստել՝ գեղանրբորեն նախշված ոսկով ու թանկագին քարերով, և ուր էլ որ գնար, հետև էր տանում նրան՝ մեծարելով սիրեցյալի հիշատակը: Եվ ամեն անգամ, երբ նայում էր Պըտի-Կրյուին, սրտից չքանում էին տխրություն, տագնապ ու ախտասնք:

Սկզբում չհասկացավ կախարդանքը. «Եթե այսպիսի անդորր եմ գգում՝ շնիկին նայելիս,— մտածում էր,— ասլա այդ նրանից է, որ դա Տրիստանի նվերն է. անկասկած իմ սիրեցյալի հուշն է, որ ցավս թմրեցնում է»: Բայց մի օր, իմացավ, որ դա կախարդանք է, և բռնժի զնգոցն էր, որ դուրսում էր սիրտը:

«Ա՛հ,— մտածեց,— արդյոք վայել է, որ ես ճաշակեմ սիրտանքը, երբ Տրիստանը դժբախտ է: Նա կարող էր իր համար պահել այս կախարդական շնիկը և այդպես մոռանալ ամենայն ցավ ու վիշտ, բայց վեհանձնորեն նախընտրեց ընձա ուղարկել իր սիրեցյալին, նախընտրեց ինձ նվիրաբերել իր ուրախությունը ու նորից վերապրել թշվառության մեջ: Սակայն անպատշաճ է, որ այդպես լինի: Տրիստան, ես ուզում եմ տատապել այնքան ժամանակ, ինչքան դու ես տատապելու»:

Նա վերցրեց կախարդական բռնժը, մի վերջին անգամ զնգացրեց, ասլա կամացուկ անջատեց. հետո՝ բաց լուսամտից, բռնժը նետեց ծովի ալիքների մեջ:

## ՃԵՐՄԱԿԱԶԵՌ ԻԶՈՒԳԱՆ

Երկուողալի է կնոջ գաղտնայթը,  
Թող ամեն ոք գողտանա:  
Շուտ է ծագում կանանց սերը,  
Շուտ է ծագում և ստեղծությունը:  
(Թոմաս<sup>1</sup>)

Սիրահարները չէին կարող ոչ սպրեւ, ոչ մեռնել միմյանցից հեռու: Իրարից անջատված՝ դա ոչ կյանք էր, ոչ էլ մահ, այլ կյանք ու մահ միաժամանակ:

Ծովերով, կղզիներով ու երկրներով թափառելիս՝ Տրիստանն ուզում էր փախչել իր ցավից: Նա նորից տեսավ Լոռնուայի երկիրը, որտեղ Ռոհայա Խոստումնակատարը որդուն ընդունեց քնքշալի արցունքներով, սակայն ձանձրացած երկրի անդորրից՝ Տրիստանը թափառեց դքսությունից դքսություն, տերությունից տերություն, որոնելով վտանգավոր արկածախնդրություններ: Լոռնուայից ֆրիզների մոտ, ֆրիզներից Գալլուա, Գերմանիայից Իսպանիա: Ծառայեց բազում իշխանների, գործեց բազմազան սխրանքներ: Բայց երկու տարվա ընթացքում՝ ոչ մի լուր Կոռնուայից, ոչ մի բարեկամ, ոչ մի պատգամ:

Սլացմամբ, կարծեց, որ Իզոլդան դադարել է սիրելուց, իրեն մոռացել է:

<sup>1</sup> Բրետանցի Թոմասը հեղինակն է «Տրիստան» պոեմի, որ գրված է մոտ՝ 1170 թվականին:

Եվ անհա պատասխեց այնպես, որ մի օր, Գորվենալի հետ արշավելիս, մտավ Բրետան: Անցան ավերված հարթավայրի միջով: Ամենուրեք քանդված պատեր, անմարդաբնակ գյուղեր, կրակից խանձված դաշտեր, և նրանց նծույզները գնում էին ածուխի ու մոխրի վրայով: Ամայի տափաստանում Տրիստանը խորհեց. «Ես հոգնած եմ, ուժասպառ: Անիմաստ եմ այս արկածներս: Իմ տիրուհին հեռվում է, և ես նրան երբեք նորից չեմ տեսնելու: Ինչո՞ւ երկու տարվա ընթացքում ինձ, ուրիշի միջոցով փնտրել չտվեց օտար երկրներում: Ոչ մի սուրհանդակ՝ Կոռնուայից: Տրիստանը տարքան նրան մեծարում ու ծառայում է: Իզոլդան սպրում է ուրախության մեջ: Անշուշտ, շնիկի բոժոժը ներշնչել է մոռացության անդորրը: Թագուհին ինձ մոռանում է, և նրան չեմ հուզում վաղեմի վշտերն ու ուրախությունները, չի հուզում հիշատակը դժբախտիս, որ թափառում է այս ավերված երկրում: Արդյոք ես նույնպես չե՞մ մոռանալու երբևիցե նրան, ով ինձ մոռանում է: Երբևիցե չե՞մ գտնելու մեկին, որն իմ վիշտը ամոքի»:

Երկու օր Տրիստանն ու Գորվենալն անցան դաշտերով ու ավաններով և այդ ընթացքում չտեսան ո՛չ մարդ, ո՛չ աքլոր, ո՛չ էլ շուն: Երրորդ օրը, մոտ կեսօրին, մոտեցան մի բլրի, որի վրա բարձրանում էր հին մատուռը, և ընդհուպ կողքին՝ ճգնավորի խրճիթ: Ծգնավորի հագին չկային հյուսվածքեղեղից կարված զգեստներ, փոխարենը՝ ածի մորթի, իսկ մեջքին՝ բրդյա ցնցոտիներ: Գետին խնամարկված, ծընկներն ու արմունկները մերկ՝ աղոթում էր Մարիամ Մագթադինացուն, որ իրեն ներշնչի փրկարար աղոթքներ: Եկվորներին մաղթեց բարի գալուստ և, մինչ Գորվենալը ձիերի խնամքով էր զբաղված, Տրիստանի վրայից բեռնաթափեց



գեները, ապա սեղան բաց արեց: Չմատուցեց ընտիր խորտիկներ, այլ առաջները դրեց միայն մոխրախառը գարեհաց և աղբյուրի ջուր: Ծաշից հետո, երբ մթնել էր արդեն, և իրենք նստած էին կրակի շուրջ, Տրիստանը հարցրեց այդ ավերված երկրի անունը:

— Ազնիվ իշխան,— ասաց ճգնավորը,— սա Բրետանն է, որի իշխանն է դուքս Հոնելը: Ատենոք գեղեցիկ երկիր էր՝ հարուստ մարգագետիններով ու վարելահողերով. այստեղ՝ ալրադացներ էին, այնտեղ՝ խնձորենիներ, մի քիչ այն կողմ՝ սգարակներ, բայց կոմս Ռիոլ դը Նանտը ավերեց այդ ամենը. աչ ու ձախ թալանեց ու դարձրեց հրի ճարակ: Նրա զինակիրները հարստացան երկար ժամանակով: Ահա այդպիսին է պատերազմը:

— Եղբայր իմ,— ասաց Տրիստանը,— կոմս Ռիոլն ինչո՞ւ այդպես կործանեց ձեր իշխան Հոնելին:

— Արդ, ես ձեզ կասեմ, սենիոր, պատերազմի ստիժը: Իմացեք, որ Ռիոլը դուքս Հոնելի վասակն էր: Իսկ դուքսն ուներ մի աղջիկ՝ արքայադստրերի միջից ամենագեղեցիկը, և կոմս Ռիոլն ուզում էր նրան կնության առնել: Բայց հայրը չկամեցավ դստեր կնության տալ վասալի, և կոմս Ռիոլը փորձեց աղջկան փախցնել: Ծառ մարդիկ զոհվեցին այդ ընդհարման պատճառով:

Տրիստանը հարցրեց.

— Դուքս Հոնելն ի վիճակի՞ է շարունակելու պատերազմը:

— Մեծ դժվարությամբ, սենիոր: Մակայն վերջին ամբողջ՝ Կարհեն, դեռևս դիմադրում է, քանզի ամուր են պարիսպները, և ամուր է դուքս Հոնելի որդու՝ քաջ առպետ Կա-

մերդինի սիրտը: Բայց թշնամին նրանց նեղում ու սովի է մատնում. կկարողանա՞ն արդյոք երկար դիմանալ:

Տրիստանը հարցրեց, թե ինչ հեռավորության վրա է գտնվում Կարհեի ամբողջը:

— Ընդամենը երկու մղոն, սենիոր:

Առանձնացան ու քնեցին: Առավոտյան, երբ ճգնավորը երգեց շարականը, նրանք բաժանեցին մոխրախառն գարեհացը, հետո, Տրիստանը հրաժեշտ տվեց պատվարժան մարդուն և արշավեց դեպի Կարհե:

Երբ կանգ առավ ամրակոտ պատնեշների մոտ, Տրիստանը տեսավ դեռքի կանգնած մի խույր մարդկանց ու հարցրեց, թե որտեղ է դուքսը: Հոնելը զինակիցներով էր շրջապատված, նրանց հետ էր որդին՝ Կահերդինը: Դուքսը ներկայացավ, և Տրիստանն ասաց.

— Ես Տրիստանն եմ, Լոռնուայի թագավորը, և Մարկը՝ Կոռնուայի արքան, իմ մորեղբայրն է. իմացա, սենիոր, որ ձեր վասալներն ըմբոստացել են և եկա մատուցելու իմ ծառայությունը:

— Սվա՞հ, սենիոր Տրիստան, շարունակեցեք ձեր ճանապարհը, և աստված արժանին հատուցի: Զեզ ինչպե՞ս ընդունենք այստեղ: Մեր պաշարներն սպառվել են. ցորեն չունենք, մեր միակ սնունդն է բակլան ու գարին:

— Ի՞նչ փույթ,— ասաց Տրիստանը,— երկու տարի շարունակ ապրել եմ անստույմ ու սնվել եմ խոտերով, արմտիքներով ու որսի մսով, և իմացեք, որ ես այն կյանքը լավն էի համարում: Հրամայեցեք, որ իմ առաջ բաց անեն այս դուռը:

Այնժամ, Կահերդինն ասաց.

— Ընդունեցեք նրան, հայր իմ, քանի որ անկասկած

արիասիրտ է նա և թող մեզ հետ բաժանի բախտի չարն ու բարին:

Ընդունեցին մեծարանքով: Կահերդիին ուղեկցությամբ Տրիստանն այցելեց պնդակառույց պարիսպները և մայր աշտարակը, որի շուրջբոլորը, պատնեշածածկ ամրություններից հսկում էին նետաձիգները: Ատամակերպ պատերի բարձրությունից Կահերդիինը ցույց տվեց դաշտավայրը և հեռվում՝ դուքս Ռիոլի վրաններն ու տաղավարները: Երբ նրանք վերադարձան ու հասան ամրոցի շենքին, Կահերդիինը Տրիստանին ասաց.

— Արդ, սիրելի բարեկամ, մենք կբարձրանանք այն սրահը, որտեղ գտնվում են իմ մայրն ու քույրը:

Երկուսն իրար ձեռք բռնած, մտան կանանց հարկաբաժինը: Մայր ու աղջիկ բազմել էին գորգին, ժանյակներով զարդարում էին անգլիական վարագույրը և երգում էին հյուսող կանանց աշխատանքային երգը<sup>1</sup>, թե ինչպես արծաթագույն սատասկի ներքո, քամու դիմաց նստած՝ գեղանի Դոնտն սպասում ու կարոտում է Դոննին՝ սիրեցյալին, որն ուշանում է, չի գալիս: Տրիստանը նրանց ողջունեց, և նրանք ողջունեցին Տրիստանին: Ապա երկու ասպետները նստեցին կանանց կողքին, և Կահերդիինը մոր հյուսած ուրարը<sup>2</sup> ցույց տալով, ասաց.

— Տեսեք, սիրելի Տրիստան, թե ինչքան հմուտ է մեծ տիկինը, ինչպես գիտի հրաշալիորեն զարդարել փորորարներն ու շուրջառները՝ չքավոր վանքերին նվիրաբերելու հա-

<sup>1</sup> Երգի հեղինակն անհայտ է: Ձեռագիրը 7-րդ դարից է, հյուսիս արեգիային բնորոշ առանձնահատկություններով:

<sup>2</sup> Ուրար— կրոնավորի վզնոց:

մար, և ինչպես քրոջս, ձեռքերը ոսկե թելերն են վազեցնում ալիտակ մետաքսի վրա: Սիրելի քույրիկ, իրոք արդարացի է, որ քեզ անվանում եմ Ճերմակածեղ Իզոլդա:

Արդ, լսելով, որ անունը Իզոլդա է՝ Տրիստանը ժպտաց և նրան նայեց ավելի քնքշորեն:

Այդպես ուրեմն, կոմս Ռիոլն իր ճամբարը հաստատել էր Կարհեից երեք մղոն տարածության վրա, և օրեր շարունակ դուքս Հոնլի զինվորները չէին համարձակվում անցնել պարիսպներից այն կողմ՝ նրա վրա գրոհելու համար: Սակայն Տրիստանի ժամանելու հենց հաջորդ օրը, նա, Կահերդիինը և տասներկու երիտասարդ ասպետներ՝ սաղավարտակիր ու զրահապատ, դուրս եկան Կարհեից, արշավեցին կեչուտների միջով, ընդհուպ մոտեցան թշնամու վրաններին: Ապա՝ թաքստոցից հանկարծակի հարձակվելով, ուժով խլեցին կոմս Ռիոլի մի մարտակառքը: Սկսած այդ օրվանից՝ տարատեսակ հնարքներով ու արիությամբ նրանք ավերում էին թշնամու այն վրանները, որոնց հսկողությունը թույլ էր, գրոհում էին նրա գումակների վրա, վիրավորում ու սպանում էին զինվորներին և երբեք Կարհե չէին վերադառնում առանց որևէ ավարի: Այդպես, Տրիստանը և Կահերդիինը փոխադարձաբար միմյանց նկատմամբ սկսեցին տածել հավատ ու համակրանք այնքան, որ երբվեցին միշտ լինել զինակից ու բարեկամ: Երբեք չդրժեցին իրենց երդումը, ինչպես որ ձեզ հայտնի պիտի լինի այս պատմությունից:

Արդ, արշավներից վերադառնալիս, ասպետակառության ու վայելչագործության մասին զրուցելու ժամանակ, Կահերդիինը հաճախ, սիրելի ընկերոջ ներկայությամբ գովաբանում էր քրոջը՝ պարզունակ ու գեղանի Ճերմակածեղ Իզոլդային:

Մի առավոտ, մինչ արշալույսը դեռ նոր էր բացվել, դի-

տորդներից մեկը հասչտասպ իջավ աշտարակից, վազեց արահից արահ գողգողալով.

— Մեհիորանէ՛ր, շատ եք քնում, վե՛ր կացեք: Ռիովն անցել է հարձակման:

Սուպետներ ու հասարակ մարդիկ զինվեցին ու վազեցին դեպի պարիսպները: Տեսան, թե ինչպես դաշտավայրի մեջ փախում են սաղավարտները, ծածանվում են մետաքսյա, եռանկյունի դրոշները միզակների սայրերին, և թե ինչպես Ռիովի ամբողջ բանակն առաջ է ընթանում գեղեցիկ շարքերով: Դուքս Հոելը և Կահերդիան անմիջապես դարպասների առջև ծավալեցին ասպետների առաջին զորաշարքերը: Նետի մատչելիության սահմաններում թշնամուն մոտենալուց հետո խթանեցին ճծույզները՝ միզակներն իջեցրած: Եվ նետերը նրանց վրա թափվում էին սպրիլյան անձրևի նման:

Տրիստանը չոր հերթին զինվում էր նրանց հետ, ում դիտորդն արթնացրել էր վերջում: Ահա կայում է ուռնամանները, հագնում միջնազգեստը, նեղ սրնքակալներն ու ոսկյա խթանները: Ամրացնում է գրահն ու սաղավարտը, բարձրանում է ճծույզին, խթանում, քշում է մինչև դաշտավայր և հայտնվում է՝ վահանը կրծքին, գոտալով՝ Կարհե: Ծիշտ ժամանակին էր: Դուքս Հոելի զինվորներն արդեն նահանջում էին դեպի պարիսպները: Այնժամ, տեսելու բան էր. ընկած ձիերի ու վիրավոր վասալների քառս, երիտասարդ ասպետների դիպուկ հարվածներ, և խոտը, որն արյունոտվում էր ոտքերի տակ: Բոլորից առաջ հպարտորեն կանգ էր առել Կահերդիանը, որը նկատել էր, թե ինչպես իր վրա հարձակվում է մի խիզախ բարոն, կոմս Ռիովի եղբայրը: Նիզակներն իջեցրած՝ բախվեցին իրարու: Նանտե-

ցին կտորեց իր նիզակը՝ առանց սասանելու Կահերդիան, որն այնչի կտրուկ հարվածով ձեռքեց հակառակորդի վահանը և կոածո նիզակասայրը խրեց կողի մեջ, մինչև դրոշատիպ ռազմաճանակը: Ահա և պոկված իր տակի ձիուց՝ նա մի ակնթաթ կախված է մնում օդում և ընկնում է:

Լսելով եղբոր արձակած ճիչը՝ դուքս Ռիովը, սանձերն արձակած, գրոհեց Կահերդիան վրա: Բայց Տրիստանը կտրեց նրա ճանապարհը: Երբ բախվեցին իրարու, Տրիստանի նիզակը կտորվեց, իսկ Ռիովինը խրվեց հակառակորդի ձիու կտրծքը, և կենդանին անընչացած փովեց մարգագետնի վրա: Տրիստանը ոտքի էլնելուն պես, թուրը ձեռքին ճոճելով բացականչեց.

— Վախկոտ, խայտառակ մահ նրան, ով կայանի երիվարին՝ ողջ թողնելով տիրոջը: Դու կենդանի դուրս չես գալու այստեղից:

— Ես այն կարծիքին եմ, որ դուք ստում եք, — պատասխանեց Ռիովը՝ ճծույզը քշելով Տրիստանի վրա:

Բայց Տրիստանը խաբս տվեց հարվածից և բազուկը բարձրացնելով՝ թրի սայրը ծակորոտեց իջեցրեց Ռիովի սաղավարտին այնպես, որ օղակապը ձեռքվեց, և քթակալը մի կողմ թռավ: Նիզակը սահեց ասպետի ուսի վրայով դեպի կողը ձիու, որը նույնպես տասպալվեց: Ռիովը կարողացավ կողը ձիու, որը նույնպես տասպալվեց: Երկուսն էլ ոտի վրա՝ ծակորոտ գալ տակից և կանգնեց: Երկուսն էլ ոտի վրա՝ ծակորոտում են ու պաշտպանվում: Վերջապես Տրիստանը հարվածում ու ջարդում է Ռիովի սաղավարտի նոնաբարը<sup>1</sup>: Օղա-

<sup>1</sup> Սաղավարտի մի մասը, որ ծածկում է ճակատը և երբեմն զարդարված է լինում նոնաբարով՝ մուգ կարմիր գույնի թանկագին բարով:

Կապը պրկվում է, ու հարվածն այնքան ուժգին էր, որ բա-  
րունն ընկավ ծնկների ու ձեռքերի վրա:

— Վեր կաց, էթե կարող ես, վասալ,— գոռալով ասաց  
Տրիստանը,— դու տարածամ եկար այստեղ. պիտի մեռնես:

Ռիոլը նորից ոտի է կանգնում, բայց Տրիստանը նրան  
տապալում է ևս մի հարվածով, որ ճեղքում է սաղախարտը,  
հաստում տակի երկայտյա գլխարկը, և գանգը մերկացնում է:  
Ռիոլը թողություն խնդրեց, աղաչեց, որ կյանքը խնայի, և  
Տրիստանն ընդունեց նրա թուրը: Այն ընդունեց ճիշտ ժամա-  
նակին, քանզի բոլոր կողմերից նախնեցիները հասել էին,  
որ օգնեն իրենց տիրոջը: Բայց նրանց տերն արդեն, անձ-  
նատուր լինելով, ընդունել էր պարտությունը:

Ռիոլը խոստացավ ներկայանալ դուքս Հոնդին պատկա-  
նող կալանավաչքը, նորից երդվել հավատարմություն ու  
հպատակություն և վերակառուցել հրկիզված ավաններն ու  
գյուղերը: Ռիոլի հրամանով նակատամարտը դադարեց, և  
նրա բանակը հեռացավ:

Երբ հաղթողները վերադարձան Կարհե, Կահերդինը  
հորն ասաց.

— Տեր, կանչիր Տրիստանին ու մոտոյ պահիր. չկա նրա-  
հից լավ ասպետ, և ձեր երկիրը կարիք ունի այդպիսի խիզախ  
բարոնի:

Զինակիցների խորհրդին դիմելուց հետո՝ դուքս Հոնդը  
կանչեց Տրիստանին.

— Բարեկամ, ինչքան էլ ձեզ սիրեմ, քիչ կլինի, քանզի  
ձեր շնորհիվ է, որ պահպանեցի իմ այս երկիրը: Ուստիև  
ուզում եմ վարձահատույց լինել: Իմ դուստրը՝ Ծերմակածեռ  
Իզոլդան, սերում է դուքսերից, արքաներից ու թագուհինե-  
րից: Ձեզ եմ շնորհում իմ Իզոլդային, վերցրեք նրան:

— Տեր իմ, ես նրան վերցնում եմ,— ասաց Տրիստանը:  
Ա՛հ, սենիորներ, ինչո՞ւ ասաց այդ խոսքը: Հենց այդ  
խոսքով էլ նա կնքեց իր մահկանացուն:

Օրը նշանակված էր, ժամկետը ճշտված էր: Դուքսը գա-  
լիս է բարեկամների հետ, Տրիստանը՝ յուրայինների ուղեկ-  
ցությամբ: Հախճան երգում է պատարագը: Բոլորի ներ-  
կայությամբ, վանքի դռանը, Սուրբ Եկեղեցու օրինաց հա-  
մաձայն, Տրիստանն ամուսնանում է Ծերմակածեռ Իզոլդա-  
յի հետ: Հարսանյաց հանդեսը եղավ շքեղ ու փառավոր:

Բայց երբ իջավ գիշերը, մինչ Տրիստանի մարդիկ հանում  
էին նրա զգեստները, այնպես պատահեց, որ միջնազգեստի  
անջախ նեղ թևքը քաշելիս՝ իրենց տիրոջ մատից հանեցին  
ու հատակին գլորեցին կանաչ հատպիսյա մատանին՝ Ու-  
կեհեր Իզոլդայի նվերը: Ահա, մատանին հնչեղ զնգում է  
սալաքարերի վրա: Տրիստանը նայում է, տեսնում է: Այն-  
ժամ, զարթնում է հին սերը, և Տրիստանն ընդունում է իր  
հանցանքը:

Վերհիշեց այն օրը, երբ Ուկեհեր Իզոլդան տվել էր մա-  
տանին: Դա եղել էր անտառում, որտեղ Իզոլդան, հանուն  
նրա՝ անցկացրել էր իր կյանքի դառն օրերը: Եվ մյուս Իզոլ-  
դայի կողքին պատկած՝ նորից տեսավ Մորուայի հյուղակը:  
Զատանցանքի մեջ էր, երբ յուր սրտում սիրեցյալին ամ-  
բաստանեց դավաճանության մեջ: Ո՛չ, ինքն էր միայն, որ  
դավաճանել էր, մինչ Ուկեհեր Իզոլդան ողջակիզվում էր  
տառապանքների բովում: Բայց Տրիստանը կարեկցում էր  
նաև իր կնոջը՝ պարզունակ ու գեղեցիկ Իզոլդային: Երկուսն

Էլ նրան սիրել էին տարածում: Երկուսի նկատմամբ էլ եղավ խոստումնազանց:

Ճերմակաձեռն Իզոլդան, սակայն, զարմանում էր՝ լսելով, որ իր կողքին պատկած՝ նա հառաչում է: Փոքր-ինչ ամոթահար՝ ի վերջո ասաց.

— Տեր իմ սիրելի, գուցե ձեզ ինչ-որ բանում վիրավորե՞լ եմ: Ինչո՞ւ ինձ չեք տալիս գոնե մի համբույր: Ասացե՛ք, որ իմ հանցանքն իմանամ, և ես լիովին կհատուցեմ, եթե կարողանամ:

— Սիրելիս,— ասաց Տրիստանը,— մի՛ գայրացեք, ես ուխտ եմ արել: Ատենոք, ուրիշ երկրում մարտնչում էի վիշապի դեմ և պիտի զոհվեի, երբ հիշեցի ու դիմեցի Մարիամ Աստվածածնին: Նրան խոստացա, որ եթե ինձ շնորհ անի, և ես հրեշից ազատվեմ, ապա երբևէ ամուսնանալիս՝ մի ամբողջ տարի ինձ պիտի զրկեմ կնոջս գրկելու և համբուրելու հաճույքից...

— Քանի որ այդպես է,— ասաց Ճերմակաձեռն Իզոլդան,— ես պատրաստակամ կհանդուրժեմ իմ այս վիճակը:

Երբ առավոտյան աղախիճները գլխի շուրջն ուղղում էին նրբահյուս, թափանցիկ քողը, որով զուգվում են ամուսնացած կանայք, նա տխուր ժպտաց և խորհեց, որ ինքն ամենիս իրավունք չունի կրելու այդ տարազը:

## Գ Լ ո լ խ XVI

### ԿԱՀԵՐԴԻՆ

Թագուհին երգում է կամացուկ,

Ներդաշնակում է իր ձայնը տավրիկի հետ:

Չեռերն են նրա գեղեցիկ, և երգն է հմայիչ,

Մեղս են հնչումները, և անուշ է ձայնը:

(Թոմաս)

Մի քանի օր անց, դուքս Հոելը, արքունի արդարադատության նախարարը և բոլոր որսորդները, Տրիստանը, Ճերմակաձեռն Իզոլդան և Կահերդիհը միասին դուրս եկան դղյակից՝ անտառում որս անելու: Նեղ ճամփի վրա Տրիստանն արշավում էր Կահերդիհի ձախ կողմից, որը յուր հերթին աջ ձեռքով պահել էր Ճերմակաձեռն Իզոլդայի նծույգի սանձը: Այնպես պատահեց, որ նծույգը, ջրափուսի միջով անցնելիս, սնքակով շուրհն այնքան ուժգին ցայտեցրեց, որ Իզոլդայի ներքնազգեստն անգամ թրջվեց ամբողջովին, և նա սառնություն զգաց ծնկից վերև: Թույլ ճիչ արձակեց և ձիուն խթանելով ստաշ միեց, բարձր ու հատակ ծիծաղելով սղնպես, որ Կահերդիհը, հասնելով ետևից, հարցրեց.

— Ինչի՞ վրա եք ծիծաղում, սիրելի քույրիկ:

— Մի մտքի վրա, որ ծագեց իմ գլխում, սիրելի եղբայր: Երբ այդ շուրը ցայտեց դեպի ինձ, ես նրան ասացի. «Ջուր, դու պելի համարձակ ես, քան երբևէ եղել է Տրիստանը»: Դրանից էր, որ ծիծաղեցի: Բայց արդեն շատ քան ասացի, և զոչում եմ, եղբայր իմ:

Կահերդիհը, զարմացած, այնքան համառորեն եղավ հետամուտ, որ ի վերջո, քույրը պատմեց ճշմարտությունը իր

ամուսնության մասին: Այնժամ, Տրիստանը հասավ Երանց, և երեքով անխոս արշավեցին մինչև որսորդական իջևանը: Այդտեղ Կահերդիներ Տրիստանին մի կողմ տարավ ու ասաց.

— Սեճիոր Տրիստան, իմ քույրն ինձ պատմել է ճշմարտությունը իր ամուսնության մասին: Ձեզ ընդունել էի որպես ընկեր ու բարեկամ: Բայց դուք խախտեցիք հավատարմության երդումը և անարգեցիք իմ տոհմը: Եվ եթե հիմա չարդարանաք, ձեզ կկանչեմ մեճամարտի:

Տրիստանը պատասխանեց.

— Այո՛, այստեղ գալով՝ բերի դժբախտություն: Բայց ցավս իմացիր, սիրելի, անուշ բարեկամ, եղբայր ու ընկեր, և գուցե սիրտդ մեղմանա: Իմացիր, որ ես ունեմ մի ուրիշ Իզոլդա, բոլոր կանանց մեջ ամենագեղեցիկը, որն ինձ համար կրել է ամենայն ցավ ու տառապանք և դեռևս շարունակում է տանջվել: Քույրդ, անուշտ, ինձ սիրում ու հարգում է: Բայց հանուն իմ սիրո՛ մյուս Իզոլդան ընծայած շնիկս մեծարում է շատ ավելի, քան քո քույրը՝ ինձ: Եկ թողնենք այս որսը, ինձ հետ արի այնտեղ, ուր քեզ կուսնեն. ես պատմելու եմ իմ թշվառ կյանքի մասին:

Տրիստանը շրջեց նծույզն ու խթանեց: Կահերդիներ երկվարը քշեց նրա ետևից: Անխոս արշավեցին մինչև անտառի խորքերը: Այդտեղ Տրիստանն իր կյանքը պարզեց Կահերդիների առաջ, պատմեց, թե ինչպես ծովի վրա ինքը խմել էր սերը և մահը: Պատմեց բարոնների ու զանազան դավադրությունների մասին և՛ թագուհու մասին, որը դատապարտվեց այրվելու խարույկի վրա, ու որին հանձնեցին բորոտներից, և՛ իրենց սիրո մասին վայրի անտառում, և՛ թե ինչպես ինքը նրան վերադարձրել էր Մարկ թագավորին, և՛ թե ինչպես Ոսկեհեր Իզոլդայից փախչելով՝ ցանկացել էր

սիրել Մերնակաձեռ Իզոլդային, և՛ թե ինչպես հասկացավ, որ այսուհետև առանց թագուհու չէր կարող ո՛չ ապրել, ո՛չ մահանալ:

Ահա, Կահերդիներ լուռ է ու զարմանում: Զգում է, որ անկախ իր կամքից զայրույթը մեղմանում է:

— Բարեկամ,— ասաց նա վերջապես,— սքանչելի խոսքեր լսեցի, և իմ սիրտը հուզվեց ձեր Ակատմամբ տաժաժ կարեկցանքից, քանզի դուք կրել եք այնպիսի տանջանքներ, որ աստված մի արասցե դրանց արժանանան որևիցե կին ու տղամարդ: Վերադառնանք Կարհե: Երեք օրից, եթե կարողանամ, խորհուրդս կհայտնեմ:

Տիևտածելի դրչակում Ոսկեհեր Իզոլդան հառաչում է Տրիստանի համար, կանչում է նրան: Սիրել ընդմիջու. ինքը չունի ուրիշ մտածմունք, ուրիշ հույս, ուրիշ ցանկություն: Տրիստանի մեջ է մարմնավորված ողջ տենչանքը, և երկու տարուց ի վեր ոչ մի լուր չունի: Որտե՞ղ է նա, ո՞ր երկրում, գո՞նե ո՞ղջ է:

Սեճյակում նստած է Ոսկեհեր Իզոլդան և սիրո տխուր երգ է հորինում: Պատմում է, թե ինչպես բռնեցին ու սպանեցին Գուրոնին, քանզի նվաճել էր նա սերն իր տիրուհու, որին սիրում էր ամեն ինչից ավելի, և թե ինչպես կոմսը խորամանկորեն կնոջը տվեց ուտելու սիրտը Գուրոնի, և թե հետո կինն ինչքան վշտացավ:

Թագուհին երգում է կամացուկ, ձայնը ներդաշնակում է տավրիի հետ: Ձեռքերն են գեղեցիկ, և երգն է հմայիչ: Մեղմ են հնչյունները, և անուշ է ձայնը:

Եվ ահա հայտնվեց Կարիադոն՝ մի հեռավոր կղզու բազմահարուստ կոմսը: Եկել էր Տիևտածել՝ թագուհուն մատուցելու իր ծառայությունները, և Տրիստանի մեկնելուց հետո

բազմիցս ձգտել էր ձեռք բերել սիրո փոխադարձություն: Բայց թագուհին վաճառ էր նրա խնդրանքը՝ այն համարելով խելացնոր: Գեղեցիկ առաջնու էր՝ գոռոզ, հպարտ ու նարտաբախտ, բայց ավելի հմուտ էր կանանց հարկաբաժնում, քան մարտի դաշտում: Իզոլդային տեսավ՝ երգը հորիզնելիս, և ծիծաղելով ասաց.

— Տիկին, ինչպիսի տխուր երգ է, տխուր, ինչպես արծվի երգը: Չէ՞ որ, ինչպես ասում են, արծիվը երգում է՝ մահը գուժելու համար: Ձեր երգն, անկասկած, ազդարարում է իմ մահվան մասին, քանզի մեռնում եմ ձեր սիրո համար:

— Թող այդպես լինի,— ասաց Իզոլդան,— ես իրոք ուզում եմ, որ երգս լինի ձեր մահվան ազդարարը, քանզի միշտ այստեղ գալուց ինձ հաղորդել էք որևէ ցավալի նորություն: Այդ դուք եք, որ շարունակ եղել էք արծիվ կամ բու՝ Տրիստանին չարախոսելու համար: Այսօր ի՞նչ նոր գույժ էք ինձ հաղորդելու:

Կարիադոն պատասխանեց.

— Թագուհի, դուք զայրացած եք, և չգիտեմ, թե ինչու: Բայց մարդ պետք է ապուշ լինի, որ խոսվի ձեր խոսքերից: Դիցուք իմ մահն է ազդարարում արծիվը, բայց ահա այն գույժը, որ բերել է բուն: Տրիստանը՝ սիրեցյալը, ձեզ համար կորած է, տիկին Իզոլդա: Օտար երկրում ամուսնացել է նա: Այսուհետև դուք կարող եք սիրել ուրիշի, քանզի Տրիստանը քամահրում է ձեր սերը: Նա մեծաշուք ծխակառուարությամբ ամուսնացավ Մերմակաձեռ Իզոլդայի՝ Բրետանի դուքսի դստեր հետ:

Ահա և Կարիադոն հեռանում է զայրացած: Ոսկեհեր Իզոլդան գլուխը խոնարհում և լաց է լինում:

Երրորդ օրը, Կահերդինը կանչեց Տրիստանին.

— Բարեկամ, հարցմունք արի իմ սրտին: Այո՞, եթե դուք ինձ ասել եք ճշմարտությունը, ուրե՛մն ցնորք է և խելագարություն այն կյանքը, որ վարում եք այս երկրում, և դրանից ոչ մի լավ բան չի ստացվի ո՛չ ձեզ, ո՛չ էլ իմ քրոջ՝ Մերմակաձեռ Իզոլդայի համար: Ուրե՛մն, լսեցեք իմ խորհուրդը: Մենք միասին կնավարկենք դեպի Տրիստան: Դուք նորից կտեսնեք թագուհուն և կհավաստիանաք, նա դեռ կարոտո՞ւմ է և ձեզ հավատարի՞մ է արդյոք: Եթե մոռացել է, գուցե այն ժամանակ ավելի սիրելի դառնա իմ քույրը՝ պարզունակ ու գեղեցիկ Իզոլդան: Կգամ ձեզ հետ. չէ՞ որ ես ձեր ընկերն եմ ու բարեկամը:

— Եղբայր իմ,— ասաց Տրիստանը,— ճիշտ են ասում՝ «Մարդու սիրուն արժե նույնքան, ինչքան երկրի ամբողջ ոսկին»:

Շուտով Տրիստանն ու Կահերդինը՝ իրենց հագին ուխտավորի թիկնոց, ու ցուպը ձեռքին, ուղևորվեցին, իբրև թե հեռավոր երկիր սրբերի անյուններն այցելելու: Նրանք հրաժեշտ տվին դուքս Հոելին: Տրիստանը հետը վերցրեց Գորվեճային, իսկ Կահերդինը՝ միայն մեկ զինակրի: Գաղտնաբար սարքավորեցին մի նավ ու լողարկեցին դեպի Կոնստանց:

Համին թեթև էր ու բարեկաստ, և ահա մի առավոտ, նախաբալուստին, Տրիստանից ոչ հեռու, Լիդանի դղյակի հարևանությամբ, արի դուրս եկան ամաչի ծովախորշում: Այդտեղ, անկասկած, Դիմաս դը Լիդանը՝ արքունի արդարադատության բարի նախարարը, սպաստան կոտ և կկարողանա թաքցնել նրանց գալուստը:

Մութույունին չորս ընկերները բարձրանում էին դեպի Լիդան, երբ նկատեցին, որ ետևից, նույն նախապարհով,

Ածույցի հանդարտ քայլերով գալիս է մի տղամարդ: Արագ թաքնվեցին ծառերի ետևում, բայց մարդն անցավ առանց նրանց տեսնելու, քանզի քնած էր թամբի վրա: Տրիստանը ճանաչեց.

— Եղբայր իմ,— ցածրաձայն ասաց Կահերդիինին,— հենց նա է, Դինաս դը Լիդանը: Քնած է: Անկասկած, վերադառնում է սիրուհու մոտից և դեռևս երագում է նրա մասին: Պատշաճ չի լինի արթնացնել, բայց դու ինձ հեռվից հետևիր:

Հասավ Դինասին, կամացուկ բռնեց ձիու սանձից և անաղմուկ շարժվեց նրան համընթաց: Վերջապես Ածույցի անզգույշ քայլն արթնացրեց քնածին: Ահա բացում է աչքերը, նայում Տրիստանին և տատանվում:

— Այդ դո՞ւ ես, դու ես, Տրիստան: Աստված օրհնի այս պահը, որի մեջ տեսնում եմ քեզ: Ծառ եմ սպասել այս հանդիպմանը:

— Բարեկամ, աստված ձեզ լինի պահապան: Ի՞նչ լուր կարող էք հայտնել թագուհու մասին:

— Ավա՛ղ, տհաճ լուրեր: Թագավորը գորգուրում ու ցանկանում է նրան ուրախացնել, բայց թո տարագրությունից ի վեր հյուժվում է թագուհին և արտասվում քեզ համար: Ա՛հ, ինչո՞ւ վերադառնալ: Ուզում ես կրկին որոնել և՛ թո, և՛ նրա մահը: Տրիստան, խղճա թագուհուն, հանգի՛տ թող Իզոլդային:

— Բարեկամ,— ասաց Տրիստանը,— շնորհ արեք, թաքցրեք ինձ Լիդանում: Իմ պատգամը հասցրեք և այնպես արեք, որ ես նրան տեսնեմ մի անգամ, գեթ մի անգամ:

Դինասը պատասխանեց.

— Խղճում եմ իմ տիրուհուն և թո պատգամը նրան կհասցնեմ միայն, եթե իմանամ, որ դեռևս թանկ է նա քեզ համար, բոլոր կանանցից ավելի:

— Ա՛հ, սեճիր, ասացեք նրան, որ ինքը դեռևս թանկ է ինձ համար, բոլոր կանանցից ավելի, և դա կլինի ճշմարտությունը:

— Ուրեմն, հետևիր ինձ, Տրիստան, ես քեզ կօգնեմ, և դու ոչ մի բանի կարիքը չես քաշի:

Լիդանում արդարադատության արքունի նախարարը ապաստան տվեց Տրիստանին, Գորվեճային, Կահերդիինին և նրա զինակրին, ու երբ Տրիստանն սկզբից մինչև վերջ պատմեց իր արկածալի կյանքը, Դինասը մեկնեց Տրիստանի՝ արքունիքի նորություններն իմանալու: Իմացավ, որ երեք օրից, Իզոլդա թագուհին, Մարկ թագավորը, բոլոր պալատականները, բոլոր զինակիրներն ու որսորդները պիտի հեռանային Տրիստանից՝ հաստատվելու Մերմակ Տախաստանի դղյակում, որտեղ որսորդական մեծ նախապատրաստություններ էին տեսել: Այնժամ, Տրիստանը արքունի արդարադատության նախարարին հանձնեց կանաչ հասպիսյա մատանին և հայտնեց այն պատգամը, որ պիտի հաղորդի թագուհուն:



## ԴԻՆԱՍ ԴԸ ԼԻԴԱՆԸ

Այդ է մեզ վիճակված, սիրուհիս,  
Ոչ ես առանց ձեզ, ոչ դուք առանց ինձ:  
(Մարի դը Տրանս!)

Եվ այդպես Դինասը վերադարձավ Տինտաժեղ, բարձրացավ աստիճանները և մտավ սրահ: Արքայական հովանու տակ Մարկը և Ոսկեհեր Իզոլդան նստած էին շախմատի սեղանի մոտ: Դինասը տեղ զբաղեցրեց աթոռակի վրա, թագուհու կողքին առաջ խաղը դիտելու համար, և երկու անգամ քաջ ցույց տալու պատրվակով ձեռքը դրեց խաղատախտակի վրա: Երկրորդ անգամ Իզոլդան Դինասի մատին ճանաչեց կանաչ հասպիչա մատանին: Այնժամ, խաղն ավարտվեց նրա համար: Եվ թեթևակի հրեց Դինասի թևն այնպես, որ մի քանի խաղաքարեր անկանոն վայր ընկան:

— Տեսնո՞ւմ եք, նախարար,— ասաց Իզոլդան,— դուք իմ խաղը խանգարեցիք, այն էլ այնպես, որ չեմ կարողանա շարունակել:

Ահա և Մարկը հեռանում է սրահից, Իզոլդան առանձնանում է իր սենյակում և կանչել է տալիս արքունի արդարադատության նախարարին:

— Բարեկամ, դուք Տրիստանի պատգամավորն եք:

<sup>1</sup> 12-րդ դարի երկրորդ կեսի ֆրանսիացի բանաստեղծուհի: Քիչ բան է հայտնի նրա կյանքի մասին: Պարզ է միայն, որ ապրել է Անգլիայի արքունիքում: Նրա երգերը գրված են կելտական լեզուների ազդեցության տակ: Սիրային արկածներ են ողբերգական լուծումներով, որտեղ մեծ տեղ է հատկացված հրաշքների:

— Այո՛, թագուհի, նա Լիդանում է, թաքնված իմ դյակում:

— Ծշմարի՛տ է, որ նա Բրետանում ամուսնացել է:

— Թագուհի, ձեզ հայտնել են ճշմարտությունը, բայց ինքը հավաստիացնում է, որ չի դավաճանել ամենևին, որ ոչ մի օր չի դադարել սիրելուց՝ դասելով բարձր բոլոր կանանցից, և որ ինքը կմահանա, եթե ձեզ նորից չտեսնի գեթ մի անգամ: Իր խնդրանքն է հղում՝ համաձայնվել, ինչպես խոստացաք այն վերջին օրը, երբ ձեզ հետ խոսեց:

Թագուհին միաժամանակ լռեց՝ խորհելով այն մյուս Իզոլդայի մասին: Վերջապես պատասխանեց.

— Այո՛, վերջին օրը, երբ ինձ հետ խոսեց, հիշում եմ, որ ասացի. «Եթե երբևէ նորից տեսնեմ կանաչ հասպիչա մատանին, ո՛չ աշտարակ, ո՛չ պատնեշ ու պարիսպ, ո՛չ մի արքայական արգելք չեն խոչընդոտի ինձ կատարելու իմ սիրեցյալի կամքը՝ դա լինի ողջամտություն թե խելագարություն...»:

— Թագուհի, երկու օրից արքունիքը պիտի հեռանա Տինտաժեղից գնալու համար Մերմակ Տախաստան: Տրիստանը ձեզ հայտնում է, որ ինքը ճամփին թաքնված կլինի փշապատ մի փոսում: Խնդրում է, որ դուք կարեկցեք նրան:

— Ես ասացի. «Ո՛չ աշտարակ, ո՛չ պատնեշ ու պարիսպ, ո՛չ մի արքայական արգելք չեն խոչընդոտի ինձ կատարելու իմ սիրեցյալի կամքը»:

Երկու օր անց, մինչ Մարկի ողջ արքունիքը պատրաստվում էր մեկնել Տինտաժեղից, Տրիստանը, Գորվենալը, Կահերդիկը և նրա զինակիրը հագան զրահները, վերցրին թուր ու վահան և թաքուն ճամփաներով ուղևորվեցին դեպի նշված վայրը: Ահա ստի միջով երկու ճանապարհ տանում էին

դեպի Ճերմակ Տափաստանը: Դրանցից մեկը, որտեղից պետք է անցնէր շքախումբը, հարթեցրած էր ու գեղեցիկ, իսկ մյուսը՝ քարքարոտ էր ու լքված: Այս վերջին ճամփի վրա Տրիստանն ու Կահերդիներ համապատասխան դիրքերում թողեցին երկու զինակիրներին: Նրանք այդտեղ պիտի սպասեին՝ պահելով ճծույզներն ու վահանները: Իսկ իրենք խորացան անտառի ներսը և թաքնվեցին փոսի մեջ: Այդ փոսի առջև, ճանապարհի վրա, Տրիստանը դրեց ընկուզեմու. ճյուղ, որի շուրջը փաթաթված էր ցախկեռասի մի շիվ:

Շուտով շքերթը հայտնվում է ճանապարհի վրա: Նախ՝ Մարկ թագավորի խոմբն է առջևից: Շարան-շարան վաչկչորեն առաջանում են ախոռասպետերն ու սպալակագմը, խահարարասպետերն ու մատուպակները: Գալիս են կրոնավորները, գալիս են շնապահները, որոնք տանում են բարակներ ու որսաշներ, և բազեպահներն են գալիս, թոչունները՝ ձախ բռունցքների վրա, հետո՝ որսորդները, այնուհետև՝ ասպետներն ու բարոնները: Գալիս են մանրաքայլ, երկերկու, վայելչաշար, և հաճելի է նրանց տեսնել իրենց շքեղ հանդերձանքով՝ երիվարների վրա, որոնք զարդարված են ադամանդաշար թափշներով: Ամենավերջում գալիս է ինքը՝ Մարկ թագավորը: Կահերդիներ՝ հիացած, տեսնում է, ճայում, թե ինչպես արքունի արտոնչալները շրջապատում են նրան՝ երկուսը մի կողմից, երկուսը մյուս կողմից, ու բոլորի հագին ոսկեկար կամ ալ կարմիր տարազներ:

Այնուհետև առաջանում է թագուհու շքախումբը: Առջևից գալիս են լվացարարուհիներն ու ճածիշուները, հետո՝ բարոնների ու կոմսերի կանայք ու դուստրերը: Անցնում են մեկամեկ. նրանցից յուրաքանչյուրին ուղեկցում է մեկական երիտասարդ ասպետ: Վերջապես մոտենում է մի ճծույզ, որի

վրա նստած է ամենագեղեցիկ կինը, որպիսին երբևէ տեսել էր Կահերդիներ: Բարեկազմ է մարմինը, ու դեմքն է վեհասքանչ, կոնքը՝ փոքր-ինչ փարթամ, հոնքերը՝ նուրբ գծագրված, աչքերը՝ ծիծղուն, ատամնաշարը՝ մարգարտահատիկ: Ծիրանագույն մետաքսից շրջագետտ կա հագին, գոհարազարդ մի բարակ ոսկեշարան զարդարում է հարթ ճակատը:

— Թագուհին, — ասաց Կահերդիներ ցածրաձայն:

— Թագուհի՞ն, — ասաց Տրիստանը, — ո՛չ, դա Կամիլն

է, նրա աղախինը:

Հետո մոխրագույն ճծույզի վրա գալիս է մի ուրիշ օրիորդ, ավելի սպիտակ, քան ձյունը փետրվարին և ավելի ալ կարմիր, քան ինքը՝ վարդը: Պայծառ աչքերը խաղացկուն են, ինչպես ատվակի մեջ արտացոլված աստղերը:

— Արդ, ես տեսնում եմ նրան, թագուհուն, — ասաց Կահերդիներ:

— Օ՛, ոչ, — ասաց Տրիստանը, — Բրանժիենն է, Հալատարինը:

Եվ ահա ճանապարհը միանգամից այնպես լուսավորվեց, ասես արեգակը հանկարծակի շողաց բարձրալույս ծառերի տերևների միջից. հայտնվեց Ոսկեհեր Իզոլդան: Դուքս Անդրեանը (աստված նրան անիծի) արշավում էր աչ կողմից:

Այդ պահին, փշածածկ թավոտից տարածվեցին շիկահավի ու արտույտի երգեր. Տրիստանն այդ մեղեդիների մեջ դնում էր իր գուրգուրանքը: Թագուհին հասկացավ սիրեցյալի պատգամը: Ահա գետնի վրա նկատում է ընկուզեմու ճյուղը, որին ամուր փաթաթվել է ցախկեռասի մի շիվ, և ինքն իր սրտում խորհում է. «Այդ է մեզ փնակված, սիրելիս, ոչ ես՝ առանց ձեզ, ոչ դուք՝ առանց ինձ»: Կանգնեցնում է ճծույզը, իջնում մոտենում է այն ձիուն, որի վրա դրված է ադա-

մանդներով զարդարված բույնը: Աշտուղ կարմրախաչ գորգի վրա պսակած էր Պըտի-Արչու շնիկը: Թագուհին ստանում է նրան իր գիրկը, փայփայում է, տամուրազարդ թիկնոցի մեջ շոշում ու գորգորում է նրան: Հետո դնելով գորգին՝ շրջվում է դեպի փշածածկ թիուտը և բարձրաձայն ասում.

— Անտառի թռչուններ՝, դուք, որ ինձ երգեք ուրախացրիք, իմացեք, որ ձեզ արժանացնում եմ գովասանքի: Մինչ իմ տեր Մարկը արշավելու է դեպի Ճերմակ Տափաստանը, ես ուզում եմ իջևանել Սեն-Լյուքեյի դղյակում: Թըռչուններ՝, դարձեք ինձ ուղեկից, և այս երեկո ձեզ վարձահատույց կլինեմ արքայավայել, ինչպես հմուտ տրորադորների:

Տրիստանը խոսքերը մտապահում ու հրճվում է: Բայց Անդրեան Դավադիրն արդեն անհանգստանում էր: Նա թագուհուն կրկին նստեցրեց թամբի վրա, և շքախոսքը հեռացավ:

Լսեցեք, ուրեմն, դժբախտ պատահարի մասին: Այն միջոցին, երբ այնտեղ անցնում էր արքայական շքերթը, մի զինված ասպետ, անունը՝ Բլեհերի, հայտնվեց այն ճանապարհի վրա, որտեղ Գորվենալը և Կահերդիան զինակիրը պահպանում էին տերերի ճծույզները: Նա հեռվից ճանաչեց Գորվենալին, ինչպես և Տրիստանի վահանը: «Այս ի՞նչ եմ տեսնում,— մտածեց նա,— սա Գորվենալն է, իսկ այն մյուսը հենց ինքը՝ Տրիստանը»: Խթանեց ձիուն, արշավեց նրանց ուղղությամբ և բացականչեց՝ Տրիստան: Բայց երկու զինակիրներն արդեն շրջել էին ճծույզները և փախչում էին: Հետապնդելիս՝ Բլեհերին կրկնում էր.

— Տրիստան, կանգ առ, էթե իրոք անվախ ես դու:

Բայց զինակիրները չշոջվեցին:

Այնժամ, Բլեհերին բացականչեց.

— Տրիստան, կանգ առ, էթե քեզ հասար թանկ է Ոսկեհեր Իզորայի պատիվը:

Երեք անգամ փախստականներին կոչ արեց հանուն Ոսկեհեր Իզորայի: Իզոր, նրանք անհետացան, և Բլեհերին կարողացավ միայն հասնել ճծույզներից մեկին, որին և տարավ որպես ավար: Նա հասավ Սեն-Լյուքեյն դղյակը հենց այն պահին, երբ թագուհին նոր էր այնտեղ իջևանում:

Եվ Իզորային միայնակ գտնելով՝ ասաց.

— Թագուհի, Տրիստանը Կոռնուսյում է: Նրան տեսա Տրևնամեկից եկող լքված ճամփի վրա: Նա փախուստի դիմեց: Երեք անգամ ես կոչ արեցի կանգ առնելու՝ վրայակոչելով Ոսկեհեր Իզորա անունը, բայց վախեցավ և չհամարձակվեց ինձ սպասել:

— Ազնիվ ասպետ, դուք ստում եք և անմտություններ գտնանցում: Տրիստանն ինչպե՞ս կարող է լինել Կոռնուսյում, ինչպե՞ս փախած կլինի նա ձեր առջևից: Ինչպե՞ս թե կանգ չի առել հանուն իմ պատվի:

— Այնուամենայնիվ, տիրոհի, ես նրան տեսա, և որպես ապացույց կձուռայի ձիերից մեկը, որ բռնագրավել եմ: Նայեցեք, ահա, թամբած ճծույզը այնտեղ՝ բակում:

Բայց Բլեհերին Իզորային տեսավ զայրացած: Այդ նրան վշտացրեց, քանզի սիրում էր Տրիստանին ու թագուհուն: Հեռացավ՝ զղջալով, որ հետը խոսեց այդ մասին:

Այնժամ, Իզորան արտասվեց և ասաց. «Ի՞նչ դժբախտ եմ ես: Իզոր եմ այսքան ապրել, քանի որ տեսա այն օրը, երբ Տրիստանն ինձ ծաղրում ու անարգում է: Ստե՛նոք, հանուն իմ պատվի, ինչպիսի թշնամու ասես, որ չէր դիմագրա-

վում: Մարմնապես ուժեղ է և հոգով համարձակ. եթե փախել է հլեհերիի սոջկից, եթե շհանեց կակո առնել սիրեցչայի պատյի համար, անշուշտ պատճառն այն է, որ մյուս Իզուրան տիրում է նրա սրտին: Ինչո՞ւ է վերադարձել: Ինձ դավաճանել էր, և ի հավելումն դրա, ուզեց անարգել: Արդյոք չէ ինձ բավականացնում նրան իմ անցյալի տանջանքները: Թող, ուրեմն, յոյր հերթին պատվագրկված վերադառնա Ճերմակաձեռ Իզուրայի մոտ:

Կանչեց Հավատարիմ Պերիհիսին, մտող կրկնեց այն, ինչ ասել էր հլեհերին, հետո ավելացրեց.

— Բարեկա՛մ, Տրիստանին փնտրիր Տրեստեից Սեն-Լյուբեն տանող ճանապարհի վրա: Կասես, որ չեմ հաղորդում իմ ողջույնը և թող շհանդգնի ինձ մոտենալ, քակոխ նրան կվտարեմ պահակների ու ծառաների միջոցով:

Պերիհիսը որոնեց այնքան, մինչև գտավ Տրիստանին և Կահերդիին: Հայտնեց թագուհու պատգամը:

— Եղբա՛յր իմ,— բացականչեց Տրիստանը,— այդ ի՞նչ էս ասում: Ես ինչպե՞ս կարող էի փախչել հլեհերիի սոջկից, քանի որ, ինչպես տեսնում ես, չունենք անվնաս մեր ձիերը, որոնց պահում էր Գորվենալը: Մենք նրան չգոռանք պայմանավորված տեղում և դեռ փնտրում ենք:

Այդ պահին երևացին Գորվենալն ու Կահերդիին գիւակիրը: Խոստովանեցին իրենց փախուստը:

— Պերիհիս, սիրելի, անուշ բարեկամ,— ասաց Տրիստանը,— շտապ վերադարձիր քո տիրուհու մոտ: Ասա, որ հղում եմ ողջույն և սեր, և այն, որ ես չեմ զրացել իմ հարգանքը, որ պարտ եմ, և այն, որ ինձ համար նա ավելին է, քան բոլոր կանայք: Ասա՛ թող քեզ ետ ողորկի ինձ

մոտ, որ քերես նրա թողությունը: Կապսեմ աչտեղ, մինչև վերադառնա:

Պերիհիսն, ուրեմն, գնաց թագուհու մոտ և պատմեց այն, ինչ տեսել էր ու լսել: Բայց Իզուրան չհավատաց:

— Ա՛հ, Պերիհիս, իմ հավատարիմ ու արտոնյալ սպասավորն էիր և դեռ մանուկ էիր, երբ հայրս քեզ անխտեսեց ինձ ծառայելու: Բայց Տրիստանը՝ կախարհը, քեզ շահել է ընծաներով ու ստերով: Դու անույնպես ինձ դավաճանեցիր: Հեռացի՛ր:

Պերիհիսը ծնրադրեց ասաջը.

— Տիրուհի՛, դաժան խոսքեր եմ լսում: Իմ կյանքում երբեք այսպիսի ցավ չեմ զգացել: Բայց ինձ համար չէ, որ վշտանում եմ: Ձեզ համար է, որ տխրում եմ, տիրուհի, դուք, որ անարգում եք ազնիվ Տրիստանին և պիտի զոջաք, երբ արդեն ուշ է լինելու:

— Հեռացի՛ր, ես քեզ չեմ հավատում: Դու, անույնպես, Պերիհիս, Պերիհիս Հավատարիմը, ինձ դավաճանեցիր:

Տրիստանը երկար սպասեց, որ Պերիհիսը քերի թագուհու անրման լուրը: Բայց նա չեկավ:

Առավոտյան Տրիստանը հագնում է լայն ու պատառոտված թիկնոց: Մի քանի տեղից դեմքը ներկում է ընկույզի կանաչ կեղևով և կարմիր գույնով այնպես, որ նմանվում է բորոսությունից տառապող հիվանդի: Վերցնում է կոստորոտ փայտից աման՝ ողորմություն խնդրելու, ինչպես նաև աղմկարար մի ճոռան:

Նա մտնում է Սեն-Լյուբենի փողոցները և ձայնը կեղծելով՝ ողորմություն է խնդրում բոլոր անցորդներից: Կկարողանա՞ գոնե տեսնել իր թագուհուն:

Իզոլյան, վերջապէս, դուրս է գալիս դղակից: Բրան-  
ժիենը, կանաք, ծառաներն ու պահակներն ուղեկցում են:  
Նա գնում է եկեղեցի տանող ճանապարհով: Բորտը հե-  
տևում է ծառաներին, հնչեցնում ճոռանը և պաղատագին  
ձայնով աղաչում.

— Թագուհի, ինձ բարություն արեք: Դուք չգիտեք, թե  
ինչպիսի կարիքի մեջ եմ ես:

Տրիստանի մարմնի գեղեցիկ կազմվածքից Իզոլյան ճա-  
նաչեց: Ամբողջ մարմնով դողում է, բայց չի հաճում արժա-  
նացնել իր հայացքին: Բորտն աղաչում է, և մարդու սիր-  
տը կարեկցանքով է լցվում նրան լսելիս: Ահա՛ քարշ է գա-  
լիս սիրեցյալի ետևից:

— Թագուհի՛, եթե հանդգնեմ ձեզ մոտենալ, մի՛ զայրա-  
ցեք: Ինձ խղճացեք, ես լիովին արժանի եմ դրան:

Բայց թագուհին դիմում է ծառաներին ու պահակներին.

— Վտարեցե՛ք այս բորտին:

Ծառաները հրմշտում ու ծեծում են: Ինքը նրանց դիմա-  
դրում ու բացականշում է.

— Թագուհի՛, խղճացե՛ք:

Այնժամ, Իզոլյան ծիծաղից պոռթկաց: Ծիծաղը դեռ  
հնչում էր, երբ մտալ եկեղեցի: Ծիծաղից վիրավորված՝ բո-  
րտը հեռացաւ: Թագուհին մի քանի քայլ արեց մատուռի  
ներսում, հետո ոտքերը թուլացան. նա ընկաւ ծնկների վրա,  
գլուխն ի գետին, թևերը խաչաձև:

Նույն օրը Տրիստանը հրաժեշտ տվեց Դինասին այնպես  
վշտացած, որ թվում էր, թե կորցրել է բանականությունը:  
Հետո Տրիստանը նախով ուղևորվեց Բրետան:

Ավա՛ղ, թագուհին շուտով զոջաց: Երբ Դինաս դը Լիդա-  
նից իմացաւ, որ Տրիստանը հեռացել է վշտահար, սկսեց

հավատալ, որ Պերինիսն ասել էր ճշմարտությունը, որ չէր  
փախել՝ անարգելով իրեն՝ Իզոլյային, և որ ինքը բացարձակ  
անարդարացի էր՝ նրան վտարելիս: «Ի՞նչ», — խորհում էր, —  
ես ձեզ վնդեղ եմ, Տրիստան, սիրելիս: Այսուհետև, դուք  
ինձ ատում եք, և երբեք նորից ձեզ չեմ տեսնելու: Դուք եր-  
բեք զոջումս անգամ չեք իմանալու, ոչ էլ այն պատիժը,  
որին ենթարկելու եմ ինքս ինձ որպէս զոջման աննշան  
ապացույց»:

Ակամ աղ օրվանից, իր սխալի և անմտության համար,  
որպէս պատիժ՝ Ոսկեհեր Իզոլյան քորձ հագաւ և այն կրեց  
մարմնի վրա անմիջականորեն:

Գ Լ Ո Ւ Խ XVIII

ՏՐԻՍՏԱՆԸ ԽԵՆԱԳԱՐ

Ընպեհքը եղաւ մեր մահը:  
(Թոմաս)

Տրիստանը նորից տեսաւ Բրետանը, Կարհեն, դուքս  
Հոնդին և իր կնոջը՝ Ճերմակաձեռ Իզոլյային: Բոլորը սի-  
րով ընդունեցին, բայց նրան վտարել էր Ոսկեհեր Իզոլյան,  
և աշխարհն իսպառ ամաչացել էր: Օրրստօրե հյուժվում է  
նա՛ հետո սիրեցյալից: Բայց ահա մի առաւրտ որոշեց նո-  
րից տեսնել, թեկուզ նրա հրամանով անարգաբար գանա-  
կոծվի կրկին ծառաների ու պահակների կողմից: Հետո  
Ոսկեհեր Իզոլյայից ինքը գիտեր, որ մահը հաստատ է և  
մոտալուտ. լավ էր մեռնել միանգամից, քան թե օրեցօր  
դանդաղ չորանալ: Ով ապրում է վշտի մեջ՝ նման է հան-

գուցյալի: Նա մահ է տեսնում, ուզում է մեռնել, բայց գոնե թագուհին թող իմանա, որ Տրիստանը իր սիրո զոհը դարձավ: Թող Իզոլդան այդ իմանա, որպեսզի ինքը՝ Տրիստանը, հանգիստ մահանա:

Առանց որևէ մեկին իմաց տալու, հեռացավ Կարսեից, անգիտության մեջ մնացին ազգականները, բարեկամները, նույնիսկ Կահերդիներ՝ սիրելի ընկերը: Մեկնեց իրեն անվայել շորերով, հետիոտն, քանզի ոչ ոք ուշադրություն չի դարձնում այն խեղճուկրակ թախտակահանների վրա, որոնք անցնում են մեծ ճամփաներով: Քայլեց այնքան, մինչև հասավ ծովափ:

Նավահանգստում առևտրական մի մեծ նավի վրա ճանապարհի պատրաստություններ էին տեսնում: Նավաստիներն արդեն ծավալում էին ստագաստը, բարձրացնում էին խարիսխը՝ բաց ծով դուրս գալու համար:

— Աստված ձեզ պահպանի, սենիորներ, երջանիկ նավարկություն էմ ցանկանում: Այդ ո՞ր երկիրն էք գնալու:

— Տրիստան:

— Տրիստան, ա՛հ, սենիորներ, ինձ էլ տարեք:

Բարձրանում է նավ: Բարեպատեն քամին ուղղում է առագաստը: Սուրում են ալիքների վրայով: Հինգ օր, հինգ գիշեր նավարկեցին ուղիղ դեպի Կոնստանյա և վեցերորդ օրը խարիսխ գցեցին Տրիստանի նավահանգստում:

Նավահանգստից այն կողմ, ծովահայաց, կանգնած էր դղյակը՝ չորս կողմից պարսպապատ: Ներս կարելի էր մշտնեղ լոկ միակ երկաթյա դարպասով, որը գիշեր-ցերեկ պահպանվում էր երկու հուսալի զինակիրների կողմից: Ինչպե՞ս մտնել այնտեղ:

Տրիստանը նավից իջավ ու նստեց ծովեզրին: Մի ան-

ցորդից իմացավ, որ Մարկը գտնվում է դղյակում ու վերջերս գումարել է մի մեծ ժողով:

— Իսկ որտե՞ղ են թագուհին և Բրանմիենը՝ գեղեցիկ աղախիներ:

— Նույնպես Տրիստանը: Նրանց տեսել եմ վերջերս: Իզոլդա թագուհին տխուր էր երևում, սովորականի նման:

Անունը լսելիս՝ Տրիստանը հառաչեց ու խորհեց, որ ո՛չ խորամանկությամբ, ո՛չ քաջությամբ չի կարողանա կրկին տեսնել սիրեցյալին, քանզի Մարկ թագավորը իրեն՝ Տրիստանին, կպպանի...

«Բայց ի՞նչ փույթ, թե ինձ կպպանի: Այդպես է, չէ՞, Իզոլդա, ճիշտը՝ մեռնելն է քո սիրո համար: Մահանալ չէ, ի՞նչ է, ամեն օրվա իմ այս քարշ տված կյանքը: Բայց դուք, Իզոլդա, այնուամենայնիվ, եթե իմանալիք, որ ես այստեղ եմ, պիտի հաճեի՞ք արդյոք գոնե խոսել ձեր սիրեցյալի հետ: Ինձ չէի՞ք վնդի՞ հրամայելով պահակներին: Այո՛, ուզում եմ խորամանկություն քանեցնել... Ինձ ներկայացնելու եմ իբրև խելագար, և այդ խելագարությունը լինելու է մեծ իմաստություն: Մեկն ինձ կհամարի տկարամիտ և կլինի նվազ խելոք ինձանից: Մյուսն ինձ կկարծի ցավագար և ինքը կլինի սպուշը»:

Մեծ զլխանոցով ու կոշտ կտորից թիկնոցը հագին՝ անցնում էր մի ձկնորս: Տրիստանը նրան տեսնում է, նշանակում ու հետը մեկուսանում:

— Բարեկա՛մ, ուզո՞ւմ ես փոխանակենք մեր շորերը: Տուր ինձ քո թիկնոցը, որ ինձ շատ է դուր գալիս:

Ձկնորսը զննեց Տրիստանի շորերը, գտավ, որ դրանք ավելի լավն են, անմիջապես վերցրեց և արագ հեռացավ՝ փոխանակությունից անչափ ուրախացած:



Այնժամ, Տրիստանը խուզեց իր խարտոյաշ, հռչակապ մազերը այնպէս, որ գլխին մնացած մազափնջերը խաչի ձև տուցան: Դենքին քսեց հեղուկ, որ պատրաստված էր Լոռնուայից քերած կախարդական խոտով, և երեսի գույնն ու տեսքը այնպէս զարմանալիորեն այլափոխվեցին, որ աշխարհում ոչ մի մարդ նրան չէր կարողանա ճանաչել: Ծանաշեն ցանկապատից կտրեց շագանակէնու ճյուղ, մահակ պատրաստեց ու կախեց վզից, ապա ոտաքորթիկ գնաց ողիղ դէպի դղջակը:

Պահակը հավատաց, որ նա իրոք խելագար է և ասաց.

— Մոտեցե՛ք, այդ ո՛ր էիք կորել այսքան երկար ժամանակ:

Տրիստանը ձայնն այլափոխելով պատասխանեց.

— Գնացել էի հարսանիքի: Մոնի վանահայրը, որն իմ բարեկամներից է, ամուսնանում էր մի մայրապետի հետ, որը հաստամարմին կին է՝ բողբ երեսին: Բեզանտոնից մինչև Մոն բոլոր ձեռնադրված քահանաները, արքահայրերը, վանականներն ու ժամկոչները հրավիրված էին հարսանիքի: Եվ բոլորը մարգագետնի վրա, մահակներով ու զավազաններով, ցատկոտում, խաղում ու պարում էին բարձրալաց ծառերի հովանու տակ: Բայց ես նրանցից հեռացա այստեղ գարու համար, քանզի այսօր պետք է սպասարկեմ արքայի նաշասեղանը:

Պահակն ասաց.

— Նե՛րս մտեք, ուրեմն, սենիոր, Ուրգան Բրդոսի որդի: Դուք նրա պէս խոշոր ու մազոտ եք և բավականաչափ նրման եք ձեր հորը:

Երբ մահակը խաղացնելով մտավ դղջակ, ծառաներն ու

գիտասիրները հավաքվեցին նրա ճանապարհին և հետապնդում էին, ինչպես գայլին:

— Ահա՛ խելագարը, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ:

Քարեր են շարտում, մահակներով ծեծում են: Բայց նա դիմադարձում է՝ միայն ցատկոտելով և թույլ է տալիս, որ հետը վարվեն, ինչպես ուզեցան: Եթե վրան հարձակվում են ձախից, շրջվում ու խփում է աջ:

Ծիծաղի ու գոգոտոցների միջից, ամբոխին քարշ տալով ետևից, հասնում է դրան շեմքին այն քրահի, որտեղ արքայական հովանու տակ, թագուհու կողքին նստած էր Մարկ թագավորը: Ահա, մոտեցավ դուռը, մահակը կախեց վզից և ներս մտավ: Արքան տեսավ նրան ու ասաց.

— Ահա մի լավ ընկեր. մոտ բերեք:

Բերում են՝ մահակը վզին:

— Բարեկամ, քեզ մաղթում եմ բարի գալուստ:

Տրիստանը պատասխանեց զարմանալիորեն այլափոխված ձայնով.

— Տե՛ր իմ, բոլոր արքաների միջից դուք ամենաազնիվն ու ամենարարին եք, ես գիտեի, որ ձեզ տեսնելիս՝ սիրտս պիտի հալվի քնքշանքից: Աստված ձեզ պահպանի, ազնիվ տեր:

— Բարեկամ, դու ինչո՞ւ ես եկել մեզ մոտ:

— Իզոլայի համար, որին ես այնքան սիրեցի: Մի քույր ունեմ չքնադազեղ Բրունետին: Նրան բերել եմ որպես նվեր: Թագուհին ձեզ ձանձրացնում է. այս մինը փորձեցեք: Եկեք փոխանակենք: Ես տալիս եմ իմ քրոջը, դուք ինձ տվեք Իզոլային: Նրան կվերցնեմ ու ձեզ սիրով կծառայեմ:

Արքան ծիծաղեց և խելագարին ասաց.

— Եթե թագուհուն տամ, ի՞նչ ես անելու, ուր ես տանելու:

— Այնտեղ՝ վերևը, երկնի և ամպերի միջև, իմ գեղեցիկ ապակյա տունը: Արևն իր շողերով թափանցում է այնտեղ, քամիները չեն կարողանում տունը սասանել: Թագուհուն կտանեմ բյուրեղյա մի սենյակ, որը զարդարված է բացված վարդերով և որը առավոտյան շողշողում է արեգակի սուսջին ճառագայթներից:

Արքան և բարոնները միմյանց ասացին.

— Այ թե հետաքրքիր խելագար է՝ սքանչելի՛, ճարտարախոս:

Նստել էր գորգին ու քնքշանքով նայում էր Իզոլային:

— Բարեկամ,— ասաց Մարկը,— որտեղի՞ց է այն հույսը, որ իմ տիրուհին ուշադրության կարժանացնի քեզ նման զարշելի խելագարին:

— Տե՛ր իմ, ես դրան արժանի եմ: Նրա համար այլևայլ գործեր եմ արել, և նրա պատճառով է, որ խելագարվել եմ:

— Ո՞վ ես դու:

— Ես Տրիստանն եմ, նա, որն այնքան սիրել է թագուհուն և մինչ ի մահ սիրելու է:

Այդ անունը լսելիս՝ Իզոլայն հառաչեց, շիկնեց, գունատվեց և զայրանալով ասաց.

— Հեռացի՛ր: Բեզ ո՞վ թույլ տվեց այստեղ մտնել: Հեռացի՛ր, նեղզամիտ ցավագար:

Խելագարը, սիրեցյալի զայրույթը տեսնելով, ասաց.

— Իզոլա թագուհի, չե՞ք հիշում արդյոք այն օրը, երբ Մոռուտի թունավոր թրից խոցվելուց հետո, տավիղը հետս վերցրած՝ ես անձնատուր եղա ծովին, որն ինձ քշեց դեպի ձեր երկրի ափերը: Դուք ինձ բուժեցիք: Մի՞թե իմ ասածից ոչ մի բան չեք հիշում, թագուհի:

Իզոլայն պատասխանեց.



— Հեռացիր այստեղից, ցավագար, ոչ քո խաղերն են ինձ հաճելի, ոչ էլ դու:

Խելագարն անմիջապես շրջվեց դեպի բարոնները և նրանց վտարելով աղաղակեց.

— Տխմարներ, դուրս այստեղից: Թողեք, որ Իզոլդայի հետ միայնակ խոսեմ, քանզի այստեղ եկել եմ նրան սիրելու համար:

Արքան ծիծաղեց, Իզոլդան շիկնեց:

— Տեղ, վտարեցեք այս ցավագարին:

Բայց խելագարը կրկին խոսեց տարօրինակ ձայնով.

— Իզոլդա թագուհի, չե՞ք հիշում այն ահարկու վիշապին, որին սպանեցի ձեր երկրում: Նրա լեզուն թաքցրի իմ գրպանում, և դրա թույնից խանձված՝ ընկա ճահճուտի մոտ: Այն ժամանակ ես սքանչելի ապետ էի... և սպասում էի մահվան, երբ դուք ինձ օգնության հասար:

Իզոլդան պատասխանում է.

— Լոիր, դու անարգում ես ասպետներին, քանզի լոկ մի ցավագար ես ի ծնե: Թող անհիծվեն այն նավաստիները, որոնք քեզ բերել են այստեղ, փոխանակ ծովը նետելու:

Խելագարը ծիծաղից պոթեկաց ու շարունակեց.

— Իզոլդա թագուհի, չե՞ք հիշում արդյոք այն բաղնիքը, որտեղ ուզում էիք ինձ սպանել իմ թորով, և ոսկյա մագի այն հեքիաթը, որ ձեզ մեղմացրեց, և ինչպես ձեզ պաշտպանեցի արքունի արդարադատության վախկոտ նախարարից:

— Լոե՛ք, նեճ չարախոս, երեկ երեկոյան դուք հարբած էիք, և հարբածությունն է, որ ձեր մեջ ոգեկոչել է այդպիսի երազներ:

— Ծիշտ է, ես հարբած եմ և այնպիսի ըմպելիքից, որի

ներշնչած գինովությունը երբեք չի անհետանալու: Իզոլդա թագուհի, չե՞ք հիշում այն գաղջ ու գեղեցիկ օրը հեռու ծովում: Դուք ծարավ էիք, չե՞ք հիշում, արքայադուստր: Մենք երկուսով նույն գավաթից խմեցինք: Այդ օրվանից միշտ հարբած եմ եղել, այն էլ վատթարագույն հարբածությամբ...

Երբ Իզոլդան լսեց միմիայն իրեն հասկանալի այդ խոսքերը, գուխը ծածկեց թիկնոցով, վեր կացավ և ուզեց հեռանալ: Բայց արքան նրան կասեցրեց՝ բռնելով սամույրագարդ թիկնոցի քղանցքը և նորից նստեցրեց կողքին:

— Սպասեցե՛ք մի քիչ, Իզոլդա սիրելի, եկեք մինչև վերջ լսեճք այս անմտությունները: Ցավագար, ի՞նչ արհեստ գիտես դու:

— Ես ծառայել եմ արքաների և կոմսերի:

— Իրո՞ք, կարողանո՞ւմ ես շներով, բազեներով որս անել:

— Անշուշտ, երբ տրամադրություն եմ ունենում անտառում որս անելու, գիտեմ որսաշներով բռնել ամպերի մեջ սավառնող կոմսկներին, բարակներով՝ կարասներին, գերմակ կամ դարչնագույն սագերին, վայրի աղավաղներին և աղեղով՝ սուզահավերին ու ձկնկույներին:

Բոլորը բարեւորորեն ծիծաղեցին, և արքան հարցրեց.

— Իսկ ի՞նչ ես բռնում, եղբա՛յր, երբ որս ես անում գետի ափին:

— Բռնում եմ այն ամենը, ինչ գտնում եմ: Ծոռակներով՝ անտառի գայլերին ու խոշոր արջերին, ճախրաբազեներով՝ վարազներին, բազեներով՝ այծյամներին ու եղնիկներին, ոռկաններով՝ աղվեսներին, մանրաբազեներով՝ ճագարներին: Եվ երբ մտնում եմ ինձ օթևան տվողի տունը, գիտեմ մահակով խաղալ, զինակիրների միջև բաժանել վառվող

ածուխներ, երգել տավիղի նվագակցությամբ: Գիտեմ և սիրել թագուհիներին, ինչպես և սովակների մեջ նետել հըմտորեն կտրատված տաշեղներ: Ծիշուն ասած, ես լավ տրուբադուր չե՞մ: Արդո՞ւր չտեսա՞ք, թե մահակով ինչպես էի մեճամարտում:

Եվ մահակով օդը կտրատեց աջ ու ձախ:

— Հեռացե՛ք այստեղից, Կոռնուայի սենիորներ՛ր,— բացականչեց,— էլ ինչի՞ եք սպասում: Արդեն կերել կշտացել եք, չե՞:

Խելագարի դատարկաբանություններից բավականաչափ զվարճացած՝ թագավորը պահանջեց նծույզն ու բազեները և սասկետների ու զինակիրների հետ պատրաստվեց գնալ որսի:

— Տեք իմ,— ասաց Իզոլդան,— ես հոգնած եմ ու տխուր: Թույլ տվեք սենյակս գնամ հանգստանալու: Այլևս ի վիճակի չեմ լսելու սրա անմտությունները:

Նա մտածկոտ ստանձնացավ իր սենյակը, նստեց անկողնին ու ողբաց.

— Ի՞նչ դժբախտն եմ ես: Ինչո՞ւ եմ ծնվել: Սիրոս ծանր է, վշտաբեկ: Բրանժիեն, սիրելի քույրիկ, կյանքս այնպես դառն է ու տաժանելի, որ ավելի լավ է մահանալ: Այստեղ կա մազերի խաչածն սանրվածքով մի ցավագար, որ մեզ մոտ եկավ տարածամ: Այդ խելագարը, այդ ասքասացը կամ կախարհ է, կամ գուշակ, քանզի ի ծնե ի բնե գիտե իմ անձն ու կյանքը: Գիտե այնպիսի բաներ, որ ոչ ոք չի իմանում ինձանից, քեզանից ու Տրիստանից բացի: Երջմուռիկն այդ ամենը գիտե կախարհանքի կամ հմայության շնորհիվ:

Բրանժիենը պատասխանեց.

— Գուցե հենց ինքն է, Տրիստանը:

— Ո՛չ, քանզի Տրիստանը գեղեցիկ է և լավագույնը սուպետների մեջ, իսկ այդ մարդը զազրելի է և այլանդակ: Աստված նրան անիծի: Անիծյալ լինի այն ժամը, երբ ծնվել է, և անիծյալ լինի այն նավը, որ բերել է՝ փոխանակ խեղդելու հետո այստեղից, խորունկ ալիքների մեջ:

— Հանգստացե՛ք, տիրուհի,— ասաց Բրանժիենը,— այսօր դուք անվերջ անիծում եք ու բանադրում: Որտեղի՞ց եք սովորել այդ արհեստը: Բայց միգուցե այդ մարդը Տրիստանի պատգամավորն է:

— Չեմ կարծում, չճանաչեցի: Բայց գնացեք գտեք նրան, սիրելի բարեկամ, հետը խոսեք և տեսեք, գուցե ճանաչեք:

Բրանժիենը գնաց այն սրահը, որտեղ խելագարը մնացել էր միայնակ, նստարանի վրա: Տրիստանը նրան ճանաչեց, ձեռքից ցած գցեց մահակը և ասաց.

— Բրանժիեն, ազնիվ Բրանժիեն, աստճո սիրույն, գթացե՛ք ինձ:

— Գարշելի ցավագար, այդ ո՞ր սաստանան է քեզ սովորեցրել իմ անունը:

— Ո՛վ գեղեցկուհի, վաղուց ի վեր գիտեմ ձեր անունը: Երդվում եմ զլիսովս, որն ասեճոք խարտիշավարս էր, և էթե բանականությունը փախել է այս գանգի միջից, հենց դուք եք պատճառը, գեղեցկուհի՞: Չե՞ որ պարտավոր էիք պահպանել այն ըմպելիքը, որ ես խմեցի հետո ծովում: Խմեցի, երբ խիստ շոգ էր, մի արծաթյա գավաթից և այն հետո պարզեցի Իզոլդային: Այդ մասին միայն դուք գիտեք, գեղեցկուհի: Արդեն չե՞ք հիշում:

— Ո՛չ,— պատասխանեց Բրանժիենը և ամբողջապես այլայլված նետվեց դեպի Իզոլդայի սենյակը:

Բայց խելագարը նետվեց ետևից, ճչալով՝ գթացեք:

Ահա, ներս է մտնում Տրիստանը, տեսնում է Իզոլդային, թևատարած նետվում է դեպի նա, ուզում է սեղմել կրծքին: Բայց տագնապի քրտինքի մեջ՝ թագուհին ամոթահար ընկրկում ու խուսափում է: Եվ ահա, տեսնելով, որ Իզոլդան գարշում է մոտիկությունից՝ Տրիստանն ամոթահար ու զագագած ցնցվում է: Նահանջում է դեպի պատը, դուսնը մոտիկ ու, դեռևս այլափոխված ձայնով, ասում է.

— Անշուշտ, իզուր եմ այսքան ապրել, քանզի տեսա այն օրը, երբ Իզոլդան ինձ վանում է, չի հաճում սիրել, քամահրում է: Ա՛հ, Իզոլդա, ով իրոք սիրում է, ուշ է մոռանում: Իզոլդա, սքանչելի ու թանկագին է այն հորդառատ ակունքը, որ ողողում ու վազում է լայնատարած ու ջինջ ալիքներով, և այն օրը, երբ չորանում է, չքանում են նրա բոլոր արժանիքները. այդպիսին է և սերը, որ ցամաքում է:

Իզոլդան պատասխանում է.

— Եղբայր իմ, ես ձեզ նայում եմ, կասկածում եմ, դողում եմ, չգիտեմ, հանձին ձեզ՝ չեմ ճանաչում Տրիստանին:

— Իզոլդա, թագուհի, ես Տրիստանն եմ, նա, որ ձեզ այնքան սիրեց: Դուք չե՞ք հիշում այն գաճաճին, որ այլուր ցանեց մեր անկողինների միջև, և իմ կատարած ուսուցումը, և այն արյունը, որ հոսեց վերքից, և այն ընծան, որ ողարկեցի՝ կախարդական բոժոժով Պրտի-Կրյու ջնիկը: Էլ չե՞ք հիշում նրբատաշ փայտյա կտորները, որ նետում էի առվակի մեջ:

Իզոլդան նայում է, հառաչում, չգիտի, ինչ ասի, ինչին հավատա, պարզ նկատում է, որ նա իմանում է ամեն ինչ, բայց խելագարություն կլինի ընդունել, որ սա է Տրիստանը: Եվ Տրիստանն ասաց.

— Պատվարժան թագուհի, ես լավ գիտեմ, որ դուք ինձանից հրաժարվել եք, և ձեզ մեղադրում եմ դավաճանության մեջ: Ես ճաշակեցի, սակայն, գեղեցկուհի, այնպիսի օրեր, երբ սիրում էիք կրակոտ սիրով: Անտառի խորքում էր, տերևածածկ օթևանի մեջ: Հիշո՞ւմ եք այն օրը, երբ ձեզ նվիրեցի իմ հավատարիմ շանը՝ Հյուզդենին: Ա՛հ, նա, գո՛նե, ինձ միշտ սիրել է, և ինձ հետ գալու համար՝ կհետանա Ոսկեհեր Իզոլդայից: Որտե՞ղ է, ի՞նչ եք արել Հյուզդենին, այո՛, նա, գո՛նե, ինձ կճանաչի:

— Հյուզդենը ձեզ կճանաչի՞: Դուք հիմարություն եք ասում, քանզի այն օրվանից, ինչ Տրիստանը մեկնել է, նա, այնտեղ, իր բնի մեջ մնում է պակաս և հարձակվում է իրեն մոտեցող բոլոր մարդկանց վրա: Բրանժիեն, այստեղ բեր նրան:

Բրանժիենն ահա բերում է:

— Եկ այստեղ, Հյուզդեն,— ասաց Տրիստանը,— դու իմն էիր, ես քեզ նորից ես եմ վերցնում:

Չայնը լսելով՝ Հյուզդենը կապը քաշում-թոցնում է Բրանժիենի ձեռքից, վազում տիրոջ մոտ, փաթաթվում նրա ոտքերին, լիզում է ձեռքերն ու հաչում հրճվանքից:

— Հյուզդեն,— բացականչում է խելագարը,— օրհնյալ լինի, Հյուզդեն, այն հոգսը, որ քաշել եմ քեզ կերակրելիս: Դու ինձ ավելի լավ ընդունեցիր, քան նա, որին ես այնքան սիրել եմ: Իզոլդան չի ուզում ինձ ճանաչել: Կճանաչի՞, գո՛նե, այն մատանին, որ ինձ տվեց անցյալում, արցունքներով ու համբույրներով, այն օրը, երբ իրարից բաժանվեցինք: Հասարկյա այս փոքրիկ մատանին միշտ եղել է իմ մատին: Տանջանքների բովում հաճախ խորհուրդ եմ հարցրել նրանից,

հաճախ թրջել եմ այս կանաչ հասպիսը տաք արցունքներով:

Իզոդրան տեսավ մատանին: Լայնորեն բացում է թևերը:

— Ես քոնն եմ, Տրիստան, ինձ վերցրու թևերիդ մեջ:

Այնժամ, Տրիստանը դադարեց ձայնն այլափոխելուց:

— Սիրելիս, դու ինչպե՞ս այդքան երկար չճանաչեցիր, և այս շունն ավելի շուտ ճանաչեց: Հետո ի՞նչ, որ տա այն մատանին է: Չե՞ս զգում, որ ինձ համար ավելի անուշ կլիներ, եթե ճանաչեիր մեր անցյալ սիրո առաջին իսկ հիշեցումից: Այլափոխված էր իմ ձայնը. դու իմ սրտի ձայնը պիտի լսեիր:

— Սիրելի՛ս,— ասաց Իզոդրան:— Թերևս ես այն լսել եմ ավելի վաղ, քան դու կարծում ես: Բայց մենք շրջապատված ենք խաբեություններով: Արդյոք այդ շան նման ե՞ս էլ պետք է հետևեի իմ ցանկությանը և քեզ աչքերիս առաջ բռնվելու և սպանվելու վտանգի՞ն ենթարկեի: Ինքս ինձ պահպանում էի. պահպանում էի և քեզ: Ո՛չ անցյալ կյանքի վերհուշը, ո՛չ քո ձայնի հնչյունները, ո՛չ իսկ այս մատանին ոչինչ չեն հաստատում, քանզի կարող եմ լինել մի կախարդի չար խաղերը: Ես, այնուամենայնիվ, զիջում եմ այս մատանին տեսնելով: Չե՞ որ երդվել եմ, որ այն տեսնելուն պես, թեկուզ իմ կորստյան գնով, միշտ կատարելու եմ այն, ինչ խնդրես ինձանից՝ դա լինի ողջամտություն թե խելագարություն: Ողջամտություն է թե խելագարություն՝ ահա ես քոնն եմ, ինձ վերցրու, Տրիստան:

Ուշագնաց ընկավ սիրեցյալի կրծքին: Սթափվեց, Տրիստանը գրկել էր և համբուրում էր աչքերն ու երեսը: Միասին մտնում են մահճի հովանու տակ: Նա թևերի մեջ սեղմել է թագուհուն:

Խելագարի վրա ծիծաղելու համար ծառաները նրան սպաստանեցին սրահի աստիճանների տակ, ինչպես շանը՝ բնի մեջ: Տրիստանն անտրտունջ հանդուրժում էր ծառաներն ու հարվածները, քանզի երբեմն, նախկին տեսքով ու գեղեցկությամբ, ողորմելի բնից գնում էր թագուհու սենյակը:

Բայց մի քանի օր անց՝ երկու նածիշտներ կռահեցին խաբեությունը: Իմաց տվին Անդրեասին, որը կանանց հարկաբաժնի առջև կանգնեցրեց երեք լավ զինված լրտեսներ:

Երբ Տրիստանն ուզեց դռնով ներս անցնել, բացական չեցին.

— Ետ դարձիր, խելագա՛ր, գնա քնիր քո ծղոտե ներքնակին:

— Ի՞նչ է եղել, սիրելի սենիորնե՛ր,— ասաց խելագարը,— բա այս գիշեր չգնա՞մ թագուհուն համբուրելու: Դուք չզհտե՞ք, որ նա ինձ սիրում ու սպասում է:

Տրիստանը թափահարեց մահակը: Վախեցան և թույլ տվին, որ ներս մտնի: Նա Իզոդրային վերցրեց թևերի մեջ:

— Սիրելիս, ես արդեն պետք է փախչեմ, քանզի շուտով ինձ կհայտնաբերեն: Պետք է փախչեմ, և կասկածից դուրս է, որ այնու երբեք չեմ վերադառնալու: Մահս մոտալուտ է. ձեզանից հեռու՝ ես կմեռնեմ իմ տենչանքից:

— Սիրելիս, թևերդ փակիր և ինձ այնպես ամուր սեղմիր քո գրկի մեջ, որ այդ գրկախառնությամբ մեր երկուսի սրբուտերը պայթեն, ու մեր հոգիները միասին հեռանան: Տա՛ր ինձ այն երջանկավետ երկիրը, որի մասին խոսում էիր ատենոք, այն երկիրը, որտեղից ոչ ոք չի վերադառնում, այն երկիրը, որտեղ հմուտ երածիշտներ երգեր են երգում շարունակ: Տա՛ր ինձ:

## ՄԱՀԸ

Սերը մեզ հասցնում է մահվան:

(Դանթե, «Աստվածային կատակերգություն»,  
մասն առաջին, Ռիմագերոդ երգ)

Հագիվ էր վերադարձել Փոքր-Բրետան՝ Կարհե, այն-պես պատահեց, որ Տրիստանը, սիրելի ընկերոջ Կահերդի-նին օգնության հասնելու համար, պատերազմեց Բեդալիս անունով մի քարոնի դեմ: Նա ընկավ Բեդալիսի ու նրա եղ-բայրների կողմից սարքած դարանի մեջ: Տրիստանն սպա-նեց յոթ եղբայրների, բայց ինքը ևս վիրավորվեց նիզակի հարվածից, և նիզակը թունավորված էր:

Մեծ դժվարությամբ նա վերադարձավ Կարհեի դղյակը, որտեղ և վիրակապեցին խոցերը: Բժիշկներ եկան անթիվ, անհամար, բայց ոչ մեկը չկարողացավ բուժել, քանզի չի-մացան նույնիսկ, թե ինչ թույն էր դա: Չկարողացան գրո-նել բուժիչ սպեղանի, որ թույնը դուրս վաներ մարմնից: Ապարդյուն ծեծում ու ճգմում են արմտիքներ, քաղում են խոտեր, պատրաստում են ըմպելիքներ: Տրիստանի վիճակը գնալով ծանրանում է, թույնը տարածվում է մարմնի մեջ, նա գունատվում է, և արդեն տեսանելի են դառնում ոսկոր-ները:

Ահա և զգաց, որ իր կյանքը մարում է: Հասկացավ, որ պիտի մեռնի: Այնժամ ուզեց նորից տեսնել Ոսկեհեր Իզոլ-դային: Բայց ինչպե՞ս գնա: Այնքան տկար է, որ ծովը նրան կսպանի, և էթե նույնիսկ տեղ հասնի, ինչպե՞ս կարողանա խուսափել թշնամիներից: Տրտունջքն է խոռվում նրա սիրտը,

— Այո՛, քեզ տանելու եմ Ողջերի երջանկավետ երկիրը: Մոտենում է ժամանակը: Մի՛թե մենք արդեն չենք ճաշա-կել ամեն թշվառություն և ամեն բերկրանք: Մոտենում է ժամանակը: Երբ այն իսպառ լրանա, դու կգա՛ս, Իզոլդա, էթե ես քեզ կանչեմ:

— Սիրելիս, կանչի՛ր ինձ: Դու գիտես, որ կգամ:

— Թող աստված քեզ արժանին հատուցի, սիրելիս:

Երբ անցավ դռան շեմքից, լրտեսները նետվեցին վրան, բայց խելագարը ծիծաղից պոթկաց, մահակը շրջանաձև թափահարեց և ասաց.

— Դուք ինձ վնդո՞ւմ եք, սիրելի սենիորներ, էլ ի՞նչ միտք ունի, այլևս այստեղ անելիք չունեմ, քանզի իմ տի-րուհին ինձ ողարկում է հեռու, որպեսզի պատրաստեմ լու-սապաշտառ այն տունը, որ խոստացել էի նրան, մեջը լիքը բացված վարդեր՝ այն քյուրեղյա տունը, որն աստվտյան շողշողում է արեգակի առաջին ճառագայթներից:

— Դե, հեռացիր այստեղից, խելագար, տա աստված՝ քեզ արդես պատահի:

Ծառաները մի կողմ քաշվեցին, և խելագարն, առանց շտապելու, պարելով հեռացավ:

թույլնր տազնապով է լցնում հոգին: Տրիստանը սպասում է մահվան:

Ահա և նա գաղտնաբար կանչել տվեց Կահերդիին և վիշտը հայտնելու համար, քանզի երկունս էլ իրար սիրում էին ազնիվ սիրով: Կամեցավ, որ սենյակում ոչ ոք չգտնվի, Կահերդիինից բացի, և, նույնիսկ, ոչ ոք չմնա հարևան սրահներում: Իզոլյան՝ կինը, սաստիկ զարմացավ այդ տարօրինակ ցանկությունից: Խիստ վախեցավ և գրույցն ուզեց լսել: Գնաց, դրսի կողմից հեկվեց այն պատին, որի մոտ դրված էր Տրիստանի անկողինը: Ականջ է դնում. հավատարիմ մարդկանցից մեկը հսկում է դրսում, որպեսզի ոչ ոք հանկարծակիի չբերի:

Տրիստանը հավաքում է ուժերը, ուղղվում ու հեկվում է պատին: Կահերդիինը նստում է կողքին, և երկուսը, հուզված, միասին արտասվում են: Լաց են լինում իրենց վաղաժամ ավարտված մարտական ընկերության, մեծ բարեկամության ու համակրանքների համար, և կարեկցանքով դիմում մեկը մյուսին:

— Սիրելի՛, անուշ բարեկամ,— ասում է Տրիստանը,— ես գտնվում եմ օտար հողի վրա, որտեղ չունեմ ո՛չ ազգական, ո՛չ բարեկամ, ձեզանից բացի: Այս երկրում դո՛ւք միայն ինձ տվիք ուրախություն և ափսիանք: Ես մեռնում եմ և ուզում եմ նորից տեսնել Ոսկեհեր Իզոլյային: Բայց ինչպե՞ս, ի՞նչ հնարքով իմաց տամ: Ա՛հ, եթե լինեք մի պատգամախոս, որ հանձն առներ մոտը գնալ, նա անպայման կգար, այնքա՞ն սիրում է ինձ: Կահերդիին, թանկագին ընկեր, հանուն մեր բարեկամության, հանուն քո արտագին ազնվության, հանուն ընկերության՝ հանձն առեք այդ սուաբելությունը, և եթե դուք իմ պատգամը տանեք, ես կդառ-

նամ ձեր հավատարիմ կամակատարը և կսիրեմ բոլորից ավելի:

Կահերդիինը տեսնում է, որ Տրիստանն արտասվում է, հուսալքվում, տրտունջքով է լցվում: Բարեկամի սիրտը կարեկցանքից փափկում է: Պատասխանում է մեղմ ու արտագին.

— Ազնիվ ընկեր, մի՛ արտասվեք, ես կկատարեմ այն ամենը, ինչ որ կամե՞նաք: Անշուշտ, բարեկամս, ձեզ այնքան եմ սիրում, որ պատրաստ եմ կյանքս վտանգի ենթարկելու: Ոչ մի վտանգ, ոչ մի տազնապ չեն խոչընդոտի ինձ անելու այն, ինչ ի գորու եմ: Ասացեք, թե ինչ եք ուզում հղի թագուհուն, և ես պատրաստություններս տեսնեմ նախապահ ընկնելու:

Տրիստանը պատասխանում է.

— Բարեկա՛մ, ձեզ շնորհակալություն: Խնդրանքս, ուրեմն, լսեցեք: Վերցրեք այս մատանին. սա պայմանաւնշան է իմ ու նրա միջև: Երբ հասնեք Տրիստանի, ներկայացեք արքունիք իբրև վաճառական: Կերպասներ ցուցադրեք թագուհուն, այնպես արեք, որ տեսնի այս մատանին, և նա իսկույն մի հնար կգտնի ձեզ հետ գաղտնի խոսակցելու: Այնժամ ասացեք, որ ի սրտե ողջունում եմ, և որ միայն ինքը կարող է ինձ ամոքել: Ասացեք, որ եթե չգա, ես կմեռնեմ: Ասացեք՝ թող հիշի մեր անցյալի հաճույքները, մորմոքուն տանջանքները և՛ թախծալի տխրությունները, և՛ բերկրանքները, և՛ բնքուշ ու ազնիվ սերերի քաղցրությունները: Թող հիշի այն ըմպելիքը, որ միասին խմեցինք ծովի վրա: Ա՛հ, դա մեր մահն էր, որ խմեցինք: Թող հիշի իմ տված երդումը՝ ոչ ոքի չսիրել, իրենից բացի: Ես երդումիս հավատարիմ մնացի:

Պատի ետևում Ճերմակաձեռ Իզոլյան լսեց այս խոսքերը և համարյա արդեն ուշագնաց էր լինում:

— Ծոսակեցեք, ընկեր իմ, և շուտ վերադարձեք: Եթե ուշանաք, ինձ այլևս ողջ չեք գտնի: Ձեզ բառասուն օր ծամանակ, բերեք Ոսկեհեր Իզոլյային: Ձեր բրոջը մի ասեք, որ մեկնելու եք կամ ասեք, որ գնում եք բժիշկ որոնելու: Կտանեք իմ գեղեցիկ նավը: Վերցրեք երկու ստագաստ, մեկը՝ սպիտակ, մյուսը սև: Եթե բերելիս լինեք Իզոլյա թագուհուն, վերադարձին կախեք սպիտակ ստագաստը: Եթե նրան բերելիս չլինեք՝ սլացեք սև ստագաստով: Բարեկամ, ես ուրիշ ասելիք չունեմ: Թող աստված ստաջանորի, և դուք վերադառնաք ողջ ու առողջ:

Հասաչում է, արտասովում, տրտուճքն է խոսվում նրա սիրտը, և Կահերդինը նույնպես արտասովում է, համբուրում է Տրիստանին ու հրաժեշտ տալիս:

Առաջին իսկ բարեպատենք քամուն նա ծով դուրս եկավ: Նավաստիները խարիսխը բարձրացրին, ծավալեցին ստագաստը, ու թեթև քամուց նավացուկը ճեղքեց բարձր ու խորունկ ալիքները: Իրենց հետ տանում էին թանկագին ապրանքներ՝ հազվագյուտ գույներով ներկված կերպասներ, Տուրի<sup>1</sup> շքեղ ամանեղեն, Պուստուի<sup>2</sup> գինիներ, իսպանական մանրաբազեններ, և այդ հնարանքի շնորհիվ Կահերդինը մտադիր էր տեսակցել Իզոլյայի հետ: Ութ օր, ութ գիշեր ճեղքեցին ալիքները և լայն բացած ստագաստներով նավարկեցին դեպի Կոնոնայ:

Կանացի զայրույթն ահարկու է, և թող ամեն ոք զգու-

<sup>1</sup> Տուրենի հին մայրաքաղաքը:

<sup>2</sup> Ֆրանսիայի նախկին նահանգ:

շանա դրանից: Նրան, ում կինը՝ սիրել է ամենից ավելի, նրանից վրեժ է լուծում ամենայն դաժանությամբ: Կանայք շուտ սիրահարվում են, շուտ էլ ասում են, և եթե թշնամանքն սկսվեց, տևում է շատ ավելի երկար, քան բարեկամությունը: Սերը չափավորել՝ նրանք այդ կարողանում են, բայց ասելությունը՝ ոչ ամենևին: Պատին ընդհուպ կպած՝ Ճերմակաձեռ Իզոլյան լսել էր յուրաքանչյուր խոսքը: Այնքա՛ն էր սիրել Տրիստանին... և ահա, վերջապես, իմացավ, որ նա սիրում է ուրիշի: Միտքը պահեց լսած խոսքերը: Եթե կարողանա, մի օր այնպես է վրեժ լուծելու այն տղամարդուց, որին սիրում է ամեն ինչից ավելի: Սակայն արտաքուստ ոչնչով իրեն չմտնեց, և երբ դռները բացեցին, մտալ Տրիստանի սենյակը և զայրույթը թաքցրած՝ շարունակեց ծառայել ու գուրգուրել, ինչպես վաչել է սիրող կնոջը: Հետը խոսում էր մեղմորեն, համբուրում էր շրթունքները և հարցնում, թե Կահերդինն արդյոք շո՛ւտ կվերադառնա բժշկի հետ... Բայց շարունակ վրիժառություն էր որոնում:

Կահերդինը չդադարեց նավարկելուց, մինչև խարիսխ զցեց Տինաուժելի նավահանգստում: Բռունցքին մեծ բազե նստեցրեց, վերցրեց հազվադեպ գույնի կերպաս և հմտորեն նախշած գավաթ: Այդ ամենը նվիրեց Մարկ թագավորին և վայելչորեն խնդրեց հովանավորություն ու բարչացակամություն, որ կարողանա երկրում առևտուր անել՝ առանց վախենալու, թե վնաս կկրի սենեկապետի կամ որևէ դերկոմսի կողմից: Եվ արքան, բոլոր պալատականների ներկայությամբ, շնորհեց իր հովանավորությունը:

Այնժամ, Կահերդինը թագուհուն նվիրեց ընտիր ոսկուց պատրաստված մի նարմանդ:

— Թագուհի',— ասաց,— ընտիր ոսկի է,— և մատից հանելով Տրիստանի մատանին՝ պահեց գոհարի կողքին և ավելացրեց,— նայեցեք, թագուհի', այս ճարմանդի ոսկին ավելի թանկարժեք է, քայց մատանու ոսկին, այնուամենայնիվ, արժեքավոր է:

Երբ Իզոդրան ճանաչեց կանաչ հասպիսյա մատանին, սիրտը թարտաց, և նա շիկնեց-դժգունեց ու, երկյուղելով լսելիք գույժից, մեկուսացավ Կահերդիին հետ, պատուհանի մոտ, իբրև թե մատանին լավ գննելու և սակարկելու համար: Կահերդիին արագորեն ասաց.

— Տիրուհի', Տրիստանը վիրավորված է թունավոր-թորից և մտնելու վրա է: Ձեզ է դիմում, քանզի միայն դուք կարող եք նրան սիրտիել: Հիշեցնում է միասին կրած անհամար ցավերն ու տառապանքները: Վերցրե՛ք այս մատանին. նրա նվերն է:

Իզոդրան թույլացած պատասխանեց.

— Բարեկամս, ես կգամ ձեզ հետ: Վաղն առավոտյան թող նավը պատրաստ լինի ճանապարհիվելու:

Հաջորդ օրը, առավոտյան, թագուհին ցանկություն հայտնեց գնալ բազետոսի: Եվ հրամայեց դուրս բերել շներին ու թռչուններին: Բայց դուքս Անդրեանը, որը շարունակ լրրտետում էր, դարձավ որսի մասնակից: Երբ անցնում էին ծովամերձ դաշտերով, օդ բարձրացավ մի սիրամարգ: Անդրեանը բազե բաց թողեց՝ նրան բռնելու, քայց տաք ու սրայծառ եղանակից հրապուրված՝ բազեն թափ վերցրեց ու անհետացավ:

— Նայեցե՛ք, հարգարժան Անդրեան,— ասաց թագուհին,— բազեն թառել է այնտեղ, նավահանգստում, ինչ

անձանոթ նավի կայմի վրա: Ո՞ւմ է պատկանում այդ նավը:

— Տիրուհի',— ասաց Անդրեանը,— դա նավն է այն բրետանցի առևտրականի, որը երեկ ձեզ ոսկյա ճարմանդ ընծայեց: Գնանք ետ վերցնենք մեր բազեն:

Կահերդիինը նավից մինչև ափ տախտակ էր ամրացրել որպես կամրջակ: Նա եկավ թագուհուն ընդատաց:

— Տիրուհի', եթե ձեզ հաճո է, համեցեք իմ նավը, և ես ցույց կտամ իմ թանկագին ապրանքները:

— Ամենայն սիրով, սենիո՛ր,— ասաց թագուհին:

Ահա և նա իջնում է ձիուց, ուղիղ գնում դեպի տախտակը, անցնում է վրայով, մտնում է նավ: Անդրեան ուզում է նրան հետևել և բարձրանում է տախտակի վրա, քայց Կահերդիինը, որ կանգնած էր տախտակամածին, հարվածում է թիակով: Անդրեանը սայթաքում և ընկնում է ծովը: Ուզում է դուրս գալ ջրի երես, քայց Կահերդիինը թիակով նորից ու նորից հարվածում, ջրատույզ է անում ու բացականչում.

— Մեռի՛ր, նենգավոր, ահա քեզ հատուցումն ամենայն շարյաց, որ հասցրել ես Տրիստանին և Իզոդրա թագուհուն:

Այդպես աստված լուծեց սիրահարների վրեժը նրանց այնքան ատող դավադիրներից: Չորսն էլ մահացան՝ Գեներալը, Գոնդոինը, Դենուպլենը, Անդրեանը:

Խարխիսիսը բարձրացրել էին, կայմն ուղղել, առագաստները բացել էին: Վաղորդյան գով քամին աղմկում էր կայմասպարաններում և ուռցնում առագաստները: Նավահանգրստից դուրս՝ արևի ճառագայթների ներքո, փրփրազարդ ու շողշողուն ծովի վրայով նավը սլացավ դեպի հեռուն:



Կարհեում Տրիստանը հյուծվում է. տեկնում է Իզոլդայի գալուստը: Ոչինչ չի ամոքում նրան: Սպասում է թագուհուն, ահա թե ինչու ապրում է դեռ: Ամեն օր ծովեզր էր ուղարկում որևէ մեկին՝ իմանալու, թե արդյոք նավը վերադառնում է, և ի՞նչ գույն ունի առագաստը: Սրտին մտտիկ ուրիշ ցանկություն չունեիր: Ծատ չսանցած՝ խնդրեց որ իրեն տեղափոխեն Պենմարշի քարածայրի վրա, և այնքան ժամանակ, որքան արևը կախված էր լինում հորիզոնին, նա նստում էր հեռու ծովին:

Լսեցեք, սեմհորներ, մի ցավալի պատահարի պատմությունը, որը սիրող սրտերի գուրջ պիտի շարժի: Իզոլդան արդեն մոտենում էր: Պենմարշի քարածայրն արդեն վեր էր խոյանում հեռվում, և նավը առավել զվարթ պլանում էր առաջ: Հանկարծ միանգամից բարձրանում է ամպրոպաշունչ քամի, ուղիղ խիտում է առագաստին, և նավը պտտվում է ինքն իր շուրջը: Նավաստիները վազում են դեպի դեկը և ակամա ետ են նավարկում: Կատաղում է քամին, բորբոքվում են խորունկ ալիքները, օդը հագեցնում է թանձր խավարով, սևանում է ծովը, անձրևը թափվում է տեղատարափ: Չարդվում են կայմ ու ցուռ: Նավաստիներն իջեցնում են առագաստը և լողարկում են, տրվելով քամու և ալիքների քմահաճույքին: Ի դժբախտություն իրենց, մոռացել էին վեր քաշել նավեզրին կապված նավակը, որը ձրգվում էր առագաստանավի գծած ակոսներով: Մի ալիք այն շարդում ու քշում է:

Իզոլդան բացականցում է.

— Ավա՛ղ, ինչ անգորն եմ ես: Աստված չի կամենում,

որ ապրեմ այնքան, որ գեթ մի անգամ ևս կարողանամ տեսնել իմ սիրեցյալին: Ես ուզում է, որ խեղդվեմ այս ծովում: Տրիստան, մեկ անգամ ևս ձեզ հետ խոսեի, թեկուզ հետո մեռնեի: Սիրելիս, եթե չկարողանամ գալ, ուրեմն այդ է կամքն աստծո, և դա պիտի լինի իմ ամենաժամեր վիշտը: Մահն ինձ համար ոչինչ է, ևս այն ընդունում եմ, քանզի այդ է կամենում աստված: Բայց սիրելիս, երբ իմանաք, որ էլ չկամ, լավ գիտեմ, որ դուք էլ եք մեռնելու: Մեր սերն այնպիսին է, որ ոչ դուք կարող եք մեռնել առանց ինձ, ոչ ես՝ առանց ձեզ: Ես ձեր մահն եմ տեսնում, երբ տեսնում եմ իմ մահը: Ավա՛ղ, սիրելիս, իղձս չկատարվեց. ուզում էի մեռնել ձեր գրկում, թաղվել նույն դագաղում: Բայց մեր իղձը չկատարվեց: Ես պիտի մեռնեմ և առանց ձեզ, միայնակ, անհետանամ ծովի խորքերում: Գուցե չեք իմանալու, որ մահացել եմ ու շարունակելու եք ապրել՝ միշտ սպասելով իմ գալուստին: Եթե աստված կամենա, դուք նույնիսկ կատող ջանաք... Ա՛հ, գուցե ինձանից հետո սիրեք մի ուրիշ կնոջ, սիրելու եք ժերմակաձեռ իզոլդային: Զգիտեմ, թե ձեզ ինչ է վիճակված: Իսկ իմ սերը, հոգիս, այնպիսին է, որ եթե իմանայի, որ մահացել եք, այլևս ապրել չէի կարողանա: Թող աստված, սիրելիս, շնորհի այն, որ կամ ես բուժեմ ձեզ, կամ երկուսով էլ մեռնենք նույն ցավից:

Այդպես ողբաց թագուհին այնքան ժամանակ, ինչքան տևեց փոթորիկը: Հինգ օր հետո մրրիկը դադարեց: Կայմի գագաթին Կահերդինն ուրախ-ուրախ բարձրացրեց ձեռնակ առագաստը, որպեսզի Տրիստանը գուցև տեսնի նույնիսկ ամենահեռուներից: Կահերդինն արդեն նկատում է Բրետանի ափերը... Ավա՛ղ, փոթորկից հետո, համարյա անմիջապես, տիրեց անդորրը, ծովը դարձավ մեղմ ու տափա-

րակ, քամին դադարեց առագաստին փշելուց, և նախաստի-  
ներն ապարդյուն նախարկում էին հոսանքնիվեր, հոսանքնի-  
վար, ետ ու առաջ: Հեռվից երևում էր հողը, բայց փոթ-  
րիկը խել տարել էր նախակը, այնպես որ ափ դուրս գալ  
չէին կարող: Երբորդ գիշերը, Իզոլյան երազում տեսավ,  
որ ինքը նստած՝ գրկել է մի մեծ վարագի գլուխ, որն իր ար-  
յունով պղծում էր շրջագգեստը, և դրանով իսկ իմացավ,  
որ այլևս կենդանի չի տեսնելու սիրեցյալին:

Տրիստանն այնքան շատ էր հյուծված, որ ի վիճակի չէր  
շարունակել իր հսկումը Պեննարշի քարածայրի վրայից, և  
արդեն օրեր շարունակ, ծովափից հեռու, առանձնացած,  
արտասվում էր Իզոլյայի համար, որը չէր գալիս: Հոգ-  
նած ու տխուր տրտնջում է, հստաչում, տագնապում: Քիչ է  
մնում, որ մեռնի տենչանքից:

Վերջապես քամին բարձրացավ, և երևաց սպիտակ ա-  
ռագաստը: Այնժամ, Մերմակաձեռ Իզոլյան վրեժը լուծեց:  
Ահա մտնեմու է Տրիստանի անկողնին և սասմ:

— Սիրելիս, Կահերդիներ գալիս է, տեսա նրա նավը բաց  
ծովում, ճանաչեցի, մեծ դժվարությամբ է առաչանում: Երա-  
նի թե հետը բերելիս լինի այն, ինչ ձեզ պիտի բուժի:

Տրիստանը ցնցվում է.

— Դուք վստահ եք, սիրելիս, որ այդ նրա նավն է:  
Ասացեք, ուրեմն, թե ինչպիսին է առագաստը:

— Ես այն լավ տեսա: Բացել են ու շատ բարձրացրել,  
բանգի թույլ է քամին: Իմացեք, որ սև է ամբողջովին:

Տրիստանը շրջվեց դեպի պատը և ասաց.

— Այլևս անգոր եմ կշանքից կառչելու:

Երեք անգամ նա կրկնեց՝ Իզոլյա, սիրելիս: Դեռ չոր-  
բորդը չէր ասել՝ հոգին ավանդեց:

Այնժամ, տանը համախաբված ասպետները՝ Տրիստանի  
ընկերները, արտասվեցին: Անկողնից վերցրին նրան ու  
պառկեցրին շքեղ գորգի վրա, հետո պատանքով ծածկեցին  
մարմինը:

Ծովի վրա քամին բարձրացել էր և լիաշունչ ունցնում  
էր առագաստները: Եվ նավը քշեց դեպի ծովեզերք: Ափ  
իջավ Ոսկեհեթ Իզոլյան: Լսեց փողոցներում բարձրացած  
արտանմիկ լացուկոծը, լսեց վանքերի ու մատուների գան-  
գերի մոայլ դողանջը: Երկրի բնակիչներին հարցրեց՝ ինչի  
համար է այդ դողանջը, ինչի համար է լացուկոծը:

Մի ծերունի պատասխանեց.

— Տիրունի, մենք մեծ վշտի մեջ ենք: Վախճանվել է  
ազնիվ, արիասիրտ Տրիստանը: Նա առատաձեռն էր չքա-  
վորների նկատմամբ և նեցուկ՝ տանջվողներին: Սա ամե-  
նավատթար պատուհասն է, որ երբևէ թափվել է այս երկրի  
վրա:

Իզոլյան լսում է, մի բառ իսկ չի կարողանում ասել:  
Բարձրանում է դեպի պալատը: Գնում է փողոցով՝ գլխա-  
շորն արձակած: Բրետանցիները սքանչանում էին նրան  
նայելիս: Երբեք չէին տեսել այսպիսի չնաշխարհիկ գեղեց-  
կություն: Ո՛վ է նա: Որտեղի՞ց է եկել:

Տրիստանի կողքին ծնկաչոք Մերմակաձեռ Իզոլյան,  
ցնորված իր կատարած չարիքից, աղեկտուր ճիչեր էր ար-  
ձակում դիակի վրա: Մյուս Իզոլյան ներս մտավ և ասաց.

— Տիկին, վեր կացեք և թույլ տվեք, որ մոտենամ: Ես  
ավելի շատ ունեմ իրավունք արտասվելու, հավատացեք: Ես  
նրան ավելի եմ սիրել:



Ոսկեհեր Իզուրան շրջվեց դեպի արևելք և աղոթեց ասածուն: Հետո պատանքը փոքր-ինչ բարձրացրեց, ամբողջ երկարությամբ պսակեց սիրեցյալի կողքին, համբուրեց դեմքն ու շրթունքները և ամուր սեղմեց կրծքին: Այդպես մարմինը մարմնին, շուրթը շուրթին, նրան գրկած, ավանդեց հոգին: Սիրեցյալի կողքին, վշտից մահացավ:

Երբ Մարկ թագավորն իմացավ սիրահարների մահվան լուրը, ծովն անցավ, եկավ հրեոսան, պատրաստել տվեց երկու դագաղ, մեկը՝ քաղկեդոնաքարից, Իզուրայի համար, մյուսն ադամանդակալու՝ Տրիստանի համար: Նավով Տիևտածել տարավ սիրելի մարմինները: Մատուռի մոտ, խորանի աջ ու ձախ կողմերին, նրանց խորունկ թաղեց, երկու գերեզմանների մեջ: Բայց գիշերվա ընթացքում Տրիստանի գերեզմանից անեց կանաչ ու տերևաշատ մի մամխի՝ ճուղավորումները ջրուտ ու ծաղիկները հոտափետ, բարձրացավ մատուռի վրաշով ու խրվեց Իզուրայի գերեզմանի մեջ: Տեղի բնակիչները կարեցին մամխին, բայց հաջորդ օրը անեց նույնքան կանաչ, նույնքան ծաղկավետ, նույնքան կենսալի և կրկին մտավ Ոսկեհեր Իզուրայի մահիճը: Երեք անգամ ուզեցին ծառը ոչնչացնել. իզուր: Վերջապես Մարկ թագավորին հայտնեցին հրաշքի մասին, և թագավորը հրամայեց երեք չկորել այդ մամխին:

Սեմիորեն՝ր, հիմավորց, շնորհաշատ տրորադորներ Բերուլը և Թոմասը, վեհափառ Էլիսարուը և վարպետ Գոթֆրիդը պատմել են այս հեքիաթը միմիայն նրանց համար, ովքեր սեր ունեն իրենց արտերում: Որպես պատգամաբեր

ձեզ հաղորդում եմ նրանց ողջույնը: Ողջունում եմ և՛ նրանց, ովքեր մտախոհ են, և՛ նրանց, որոնք երջանիկ են. ողջույն դժգոհներին ու տենչացողներին, ինչպես և նրանց, ովքեր զվարթ են, և նրանց, որոնք տագնապած են, ողջույն բոլոր, բոլոր սիրահարներին: Երանի նրանք այստեղ գըտնեն մխիթարություն ընդդեմ անհավատարմության, ընդդեմ անարդարության, ընդդեմ ցասումի, ընդդեմ տանջանքի, սիրո բոլոր ցավերի դեմ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը՝ Ա. Ա. Սմիռնով	3
Գլուխ I	
Տրիստանի մանկության տարիների քաջագործությունները	10
Գլուխ II	
Իզոլանդացի Սոռուտը	21
Գլուխ III	
Ոսկե վարսերով գեղեցկուհու որոնումն ու նվաճումը	30
Գլուխ IV	
Սիրո ըմպելիքը	46
Գլուխ V	
Բրանժիենը հանձնված ճորտերին	53
Գլուխ VI	
Մեծ սոճին	59
Գլուխ VII	
Քանաճ Ֆրոսինը	72
Գլուխ VIII	
Ոստյուն մատուռից	80
Գլուխ IX	
Մորուսյի անտառը	92
Գլուխ X	
Ճգնավոր Օգրինը	105

Գլուխ XI		
Վտանգավոր ծանձաղուտ	• • • • •	111
Գլուխ XII		
Դատաստան շիկացած երկաթով	• • • • •	119
Գլուխ XIII		
Սոխակի դայլայը	• • • • •	128
Գլուխ XIV		
Կախարդական բոժոժը	• • • • •	135
Գլուխ XV		
Ճերմակամեռ Իզոլդան	• • • • •	140
Գլուխ XVI		
Կահերդին	• • • • •	151
Գլուխ XVII		
Դինաս դը Լիդանը	• • • • •	158
Գլուխ VXIII		
Տրիստանը՝ խելագար	• • • • •	167
Գլուխ XIX		
Մահը	• • • • •	183

Ժողով Բեդյե

ՏՐԻՍՏԱՆԻ ԵՎ ԻԶՈԼԴԱՅԻ ՍԻՐԱՎԵՊԸ

Жозеф Бедье

Роман о Тристане и Изольде

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван — 1981

Խմբագիր՝ Ե. Ս. Զարեհյան

Նկարիչ Վ. Վ. Վարդանյան

Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան

Տեխ. խմբագիր՝ Ա. Յ. Կովկասյան

Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բուլարյան

69 400.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ